

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հաւատարիմ Մնանք Մեր Նահատակներու Պատգամին

107 տարի անցած է այն սեւ թուականէն, երբ ծայր առաւ Հայ ժողովուրդի զանգուածային տեղահանումը ու ցեղասպանութիւնը՝ կանխամտածուած ու կազմակերպուած Երիտասարդ Թուրքերու իշխանութիւններուն կողմէ, խլելով շուրջ երկու միլիոն հայերու կեանքն ու զանոնք արմատախիլ ընելով իրեն դարաւոր հայրենիքէն ու պապենական հողերէն:

Այդ օրերուն Հայ ժողովուրդը ապրեցաւ իր պատմութեան ամենէն սարսափելի ժամանակաշրջանը: Օսմանեան Թուրքիան ծրագրեց ու գործադրութեան դրաւ իր հայաջինջ քաղաքականութիւնը՝ յուսալով այդպիսով լուծել Հայկական հարցը ու ճգմել Հայ ժողովուրդի ազատութեան ու անկախութեան ձգտումները:

Դար մը ու անլի մեր ժողովուրդը տակաւին չէ գտած իր ներքին անդորրութիւնը ու կը շարունակէ ապրիլ պատմական այդ ճնշող իրականութեան ծանր բեռին տակ՝ սերունդէ-սերունդ փոխանցելով իր նահատակներու կտակին հաւատարիմ մնալու, արդարութեան ու հատուցում պահանջելու պարտականութիւնը:

Ինչպէս ամէն տարի, մեր ժողովուրդը դարձեալ կը հաւախմբուի տարբեր մայրաքաղաքներու իրապարակներուն վրայ ոգեկոչելու սրբացած մեր Նահատակներուն անմահ յիշատակը եւ բողոքելու Թուրք պետութեան կողմէ շարունակուող՝ ժխտողական քաղաքականութեան դէմ, հակառակ որ աշխարհի ազդեցիկ գրեթէ բոլոր երկիրները հաստատած ու ճանչցած են Հայկական Ցեղասպանութեան իրողութիւնը՝ որպէս 20-րդ դարու առաջին պետականօրէն գործադրուած զանգուածային կոտորած:

Անցեալ տարի այս օրերուն, շնորհիւ Ամերիկահայութեան երկարամեայ քարոզչական աշխատանքներուն ու քաղաքական պայքարներուն, Միացեալ Նահանգները նախագահական մակարդակով ճանչցաւ Հայոց Ցեղասպանութիւնը: Հակառակ թրքական կառավարութեան սպառնալիքներուն նախագահ Ծո Պայտըն եկաւ իր ծայրը միացնելու Գոնկրէսի երկու պալատներուն, որոնք գրեթէ միաձայնութեամբ ընդունած բանաձեւերով հաստատած էին Ցեղասպանութեան փաստը:

Սկզբնական շրջանին թրքական իրարյաջորդ կառավարու-

Փութին եւ Փաշինեան Համաձայնած են Աշխուժացնել Հայաստանի, Ռուսաստանի եւ Ատրպէյճանի Եռակողմ Փոխգործակցութիւնը

Հայաստանի վարչապետը եւ Ռուսաստանի նախագահը Ապրիլ 19-ին Մոսկուայի մէջ կայացած հանդիպման ժամանակ համաձայնած են աշխուժացնել Հայաստանի, Ռուսաստանի եւ Ատրպէյճանի եռակողմ փոխգործակցութիւնը՝ տարածաշրջանէն ներս յարաբերութիւններու կարգաւորման աջակցելու նպատակով: Այս մասին ըստե՛ս է Նիկոլ Փաշինեանի եւ Վլատիմիր Փութինի միատեղ յայտարարութեան մէջ:

Փաշինեան եւ Փութին նաեւ համաձայնած են Ռուսաստանի խորհրդատուական աջակցութեամբ արագացնել Հայ-ատրպէյճանական սահմանին սահմանազատման եւ անվտանգութեան հարցերով երկկողմ յանձնաժողովի ստեղծումը:

Հայաստանի եւ Ռուսաստանի ղեկավարները նաեւ անդրադարձած են ռուսաստանեան խա-



Նիկոլ Փաշինեան եւ Վլատիմիր Փութին Ապրիլ 19-ին Մոսկուայի մէջ կայացած հանդիպման ընթացքին

ղաղապահ գորակազմի դերին՝ Լեռնային Ղարաբաղի անվտանգութեան ապահովման, բնակչութեան կեանքի

համար բարենպաստ եւ անվտանգ պայմաններու ստեղծման գործով: Ընդգծած են մարդասիրական անյետաձգելի հարցերի հրատապ լուծման եւ քաղաքական-դիւանագիտական միջոցներով Լեռնային Ղարաբաղեան կարգաւորման պահանջուածութիւնը:

Յայտարարութեան մէջ կողմերը հաստատած են նաեւ ԵԱՀԿ Մինսկի խումբի համախառնակութեան ներուժի եւ փորձի օգտագործման կարեւորութիւնը՝ անոր միջազգային մանդատին համապատասխան:

30 կէտերէ բաղկացած յայտարարութեան մէջ կողմերը կարեւոր նկատած են նաեւ Հարաւային Կովկասէն ներս ճանապարհներու ապաշրջափակման եւ եռակողմ աշխատանքային խումբի աշխուժացման կարեւորութիւնը:

Հայաստանի վարչապետն ու Ռուսաստանի նախագահը ողջունած են ռուսաստանեան աջակցութեամբ մեկնարկած Հայ-թրքական յարաբերութիւններու նորմալացման գործընթացը:

Կը յայտնուի որ, Փութին ընդունած է Փաշինեանի հրաւերը՝ այս տարուայ երկրորդ կէսին Երեւանի մէջ մասնակցելու ՀԱՊԿ Հաւաքական Անվտանգութեան Խորհուրդի նստաշրջանին:

Նախքան փակ բանակցութիւններուն անցնիլը, Ռուսաստանի նախագահը ըսաւ. «Ի հարկէ, մեր ուշադրութեան կեդրոնին պիտի ըլլան անվտանգութեան հարցերը, այդ շարքին՝ Ղարաբաղի հետ կապուած: Ձեզի հետ համաձայն եմ, շատ խնդիրներ մնացած են: Մենք ձեզի հետ անընդհատ կապի մէջ ենք՝ եթէ ոչ ամէն շաբաթ, ապա ամէն 10 օր հաստատ հեռախօսազրոյց կ'ունենանք: Եւ պարբերաբար հանդիպումներ կ'ունենանք, չնայած որ համավարակի շրջան է: Ուրախ եմ ձեզ տեսնելու, բարի

Ուղերձ Ապրիլ 24-ի 107-Ամեակի Առթիւ

Այսօր կը նշենք Հայ ժողովուրդի դէմ գործադրուած 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան 107-րդ տարելիցը: Մեր գլուխները խոնարհելով մէկ ու կէս միլիոն նահատակներու յիշատակին առջեւ անգամ մը եւս կու գանք վերանորոգելու՝ նահատակներու կտակին հաւատարիմ մնալու մեր ուխտը եւ շնորհակալութիւն յայտնելու աշխարհի այն բոլոր երկիրներուն, որոնք ճանչցան Հայոց մեծ արհաւիրքը:

հայ ժողովուրդին դէմ գործուած ցեղասպանութեան փաստին ընդունումը՝ հետզհետէ նոր վաւերականութիւն կը ստանայ շատ մը երկիրներու կողմէ, որոնք անցեալին, խիստ անտարբեր էին մեր անժամանցելի դատին հանդէպ: Այսօր՝ այդ փաղաճն ընդլայնուելով, ստուար թիւ մը կազմած է, գլխաւորութեամբ ԱՄՆ-ին, որուն նախագահը տարի մը առաջ պաշտօնապէս ճանչցաւ հայոց ցեղասպանութիւնը: Վերջին տարիներուն տեղի ունեցած այս իրողութիւններու պրիսմակին տակ, կը հաւատանք, որ միայն հատուցման ճանապարհով է որ մեր ժողովուրդը պիտի հասնի իր արդար պահանջներուն:

Հայ ժողովուրդին դէմ գործադրուած անմարդկային ոճրագործութիւնը ցարդ կը մնայ անպատիժ ու Թրքական պետութիւնը կը մերժէ առերեսուիլ իր պատմութեան սեւ էջերուն հետ: Աւելին, Արցախի հերոս մեր ժողովուրդը նոր ցեղասպանութեան մը վտանգին առջեւ կը գտնուի՝ թուրք-ազերի դաշինքին կողմէ:

Արցախեան ներկայ իրապատկերի շուրջ վտանգաւոր կացութեան եւ տարածաշրջանի մէջ արագօրէն զարգացող իրադարձութիւնները անխուսափելիօրէն համայն Հայութենէն կը պահանջեն գերզոնութիւն եւ ազգային միասնութեան ջանքերու գերլարում կանխելու համար յետագայ ոտնձգութիւններ Հայաստանի եւ արցախահայութեան խաղաղ բնակչութեան դէմ եւ անոնց առիթ ընծայելու պահպանելու իրենց գոյութիւնը եւ իրաւունքներու անձեռնմխելիութիւնը:

Մեծ եղեռնէն դար մը ետք, միջազգային ընտանիքը՝ տակաւին յստակ կերպով չէ դիրքորոշուած: Այլ խօսքով՝ գործնական միջամտութիւն չէ կատարած այն ազատատենց ժողովուրդներուն նկատմամբ, որոնք կը շարունակեն իրենց արդար պայքարը՝ ի խնդիր ինքնիշխան ազատ եւ խաղաղ կեանքի:

Մինչ այդ, Հայ ժողովուրդը՝ Հայաստանի եւ սփիւռքի տարածքին կը շարունակէ իր ամբողջական իրաւունքներու պաշտպանութեան եւ արդարութեան վերականգնման համար մղած իր պայքարը՝ մինչեւ վերջնական յաղթանակ:

Լոս Անճելըսահայ համայնքի կազմակերպութիւններով այս տարի եւս համախմբուած ենք մեր ծայրը բարձրացնելու ու պահանջելու մեր ժողովուրդի արդար իրաւունքները:

Բիւր յարգանք՝ Հայ ժողովուրդի բոլոր նահատակներուն
ՍԴՀԱ Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմին
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէ
ՈԱԿ Արեւմտեան Ամերիկայի Շրջանային Վարչութիւն
Ապրիլ 24, 2022

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Հրապարակներում Ցոյցեր, Նստացոյցեր, Հեծանիւային Մրցոյթներ Կազմակերպելու Էջը Պէտք Է Փակուած Համարել 2021-ի Արտահերթ Ընտրութիւնների Արդիւնքներից Ելնելով

ՀԵՂԻՆԵ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Եթէ Հայաստանում կոնստիտուցիոնալ ընդդիմութիւն գոյութիւն ունենար եւ ոչ՝ հայրենափրկութեան կեղծ լոզունգով փաթեթաւորուած՝ քաղաքական ունեան ձգտող խմբաւորում, ապա այս ստեղծուած իրավիճակում պէտք է, այո՛, իրացնէր իր մէկ կրակոցի հնարաւորութիւնը: Սակայն այդ կրակոցի ուղեւոր պէտք է ուղղուած լինէր ոչ թէ Նիկոլ Փաշինեանին, ինչպէս բերանից անկեղծօրէն փստացրեց «Պատիւ Ունեմ» խմբակցութեան պատգամաւոր Տիգրան Աբրահամեանը, այլ համազգային համախմբմանը: Կրակոց, համազարկ, որը կ'ազդարարէր ներքաղաքական լիակատար կոնսենսուսի մասին, երբ մոռացում են քաղաքական հակասութիւններն ու առձակատումները, բոլորի եւ բոլոր ժամանակներում գործած մեղքերն ու բացած վէրքերն ու բռնուցք է ցոյց տրուած արտաքին սպառնալիքներին՝ գործողութեան մէջ դնելով ոչ թէ պսակո, այլ իրական հայրենափրկութիւնը: Եթէ հայրենիքը մէկն է, ապա այն պէտք է փրկել ոչ թէ հատուածական մօտեցմամբ, այլ միացեալ ուժերով ու մէկ ճակատով: Խորհրդարանում Նիկոլ Փաշինեանի վերջին երկու ելոյթները հայրենիքի փրկութեանը գինուո-

րագրուելու կոչ էին՝ ուղղուած առաջին հերթին քաղաքական լսողունակ եւ ընկալունակ ուժերին, մինչդեռ այդ կոչը, ինչպէս ցոյց են տալիս դրան յաջորդած զարգացումները, բախուց «հասկացուածութեան պատին»: ԱԱԾ նախկին տնօրէն, ՊՈՒ խմբակցութեան ղեկավար Արթուր Վանեցեանի եւ նրան միացածների յայտարարութիւնների «քոտերից» դատելով՝ նրանք, ինչպէս միշտ, ճիշտ չեն հասկացել ՀՀ-ի առաջ իրող «պերճանքով ու ողբերգութեամբ» ծառայած խնդրի բովանդակութիւնը, հետեւապէս սխալ են պատկերացնում նաեւ խնդրի լուծումը, որը բնաւ հանրային-քաղաքական անջատողականութիւնը է: Անջատողականութիւնն այս դէպքում նշանակում է գինուորագրում ոչ թէ յանուն ՀՀ-ի ու Արցախի, այլ ընդդէմ ՀՀ-ի եւ Արցախի, այսինքն՝ գինուորագրում հակառակորդի, թշնամու բանակին: Այս համատեքստում նշենք, որ երբ Աժ-ն նոր էր սկսել իր աշխատանքները, իր պաշտօնաթողութիւնից յետոյ թերեւս առաջին անգամ Արթուր Վանեցեանը կառուցողական ելոյթ ունեցաւ: Արձագանքելով իշխող ուժի կողմից արուած համագործակցութեան կոչին՝ նախ շեշտեց, թէ իրող կեանքում ծառայել եւ ծառայում է

ՀՀ-ին, Արցախին եւ հայ ժողովրդին, ապա մասնաւորապէս յաւելեց. «Որ ասում էք՝ համագործակցութիւն... որեւէ մէկը կասկած ունի, որ եթէ ՀՀ-ին ինչ-որ մի արտաքին սպառնալիք լինի, կամ պէտք լինի մեր միասնական դիրքորոշումը ՀՀ ազգային, պետական շահն առաջ մղելու, մենք դէմ ենք լինելու կամ միասնական չենք գործելու: Ո՛չ: Հաւատացէք, որ գործելու ենք միասնական եւ ցոյց ենք տալու մեր բոլորիս միասնութիւնը»: Ազատութեան հրապարակում երէկուանից նստացոյց անող Վանեցեանը, եթէ իրապէս անկեղծ էր 2021-ի Օգոստոսին հնչեցրած իր ելոյթում, ապա պէտք է հասկանայ, որ ՀՀ-ն այսօր մեր բոլորի միասնականութիւնն ընդգծելու հրամայականի առաջ է կանգնած, որը պահանջում է ներդաշնակեցնել խաղաղութեան օրակարգը մեր ազգային, պետական շահերին եւ այն միասնաբար առաջ մղել: Եթէ Վանեցեանն իսկապէս ծառայել եւ ծառայում է ՀՀ-ին, Արցախին եւ հայ ժողովրդին, այլ ոչ թէ դրսի շահագրգիռ կեղծոյններին ու «Տ-րդ շարանեան» թելադրած օրակարգին, ապա նրա եւ նրան սատարող քաղաքական ուժերի ծառայութեան վայրը պէտք է լինի խորհրդարանը, ոչ թէ

Ազատութեան հրապարակում տեղակայուած վրանը: Հրապարակներում ցոյցեր, նստացոյցեր, հեծանիւային կամ չմուշկասահքի մրցոյթներ կազմակերպելու էջը պէտք է փակուած համարել 2021-ի արտահերթ ընտրութիւնների արդիւնքներից ելնելով: Եթէ այս պարզագոյն ճշմարտութիւնները չեստայտուել անհասու են հայրենիքին երբեւէ ծառայած որեւէ անձի, ապա դա կարող է վկայել մէկ բանի մասին՝ այդ անձը կողմ է, որ Հայաստանը չլինի այնպիսին, ինչպիսին լինելը փաստագրեց Նիկոլ Փաշինեանը, շարունակելով իր ճակատագրի մասին բան չորոշող երկիր, չվերականգնի իրեն վերաբերող հարցերում բան որոշող կարգավիճակը, չլինի ինքնիշխան, չունենայ ինքնասիրութիւն եւ շարունակելի մնալ մատաղացու գառան կարգավիճակում, որին, ինչպէս Փաշինեանն էր ասում, կարելի է «հայրենասիրութեան մոտեցնել»: Վանեցեանի ու նրան հովանաւորողների բերանով մեզ թելադրելով՝ «դուք պէտք է հայրենասէր լինէք այնպէս, ինչպէս մեզ է ձեռք տալիս»: Եթէ սա է ընդդիմութեան ուղածը, ապա այն ոչ թէ հայրենիքի փրկութեան, այլ հայրենիքը կտոր-կտոր փառուխի օրինակով Ատրպէյճանին նուիրելու մասին է:

Civic.am

Ինչու է Ընդդիմութիւնը Փորձում Լարուածութիւն Ստեղծել

ՍՈՎԱՍԵ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Հայաստանեան ներքաղաքական օրակարգում լարուածութեան նոր ալիք է բարձրանում կամ առնուազն դրա իմիտիացիա ստեղծուած: Ընդդիմադիր ուժերը, իրար հերթ չտալով, յայտարարում են փողոցային պայքար սկսելու անհրաժեշտութեան մասին. մէկը միանում է միւսին, երրորդն էլ՝ պնդում, որ չի միանալու արատաւորուած համբաւունեցող լիդերներին՝ վկայակոչելով նախորդ տարիներին իշխանութեան եղած առաջնորդներին եւ նրանց հետ սերտ առնչութիւն ունեցող անձանց: Կարճ ասած՝ ստեղծուել է մի խառնաշփոթային վիճակ, որն ամէն պահի կարող է «պայթել»՝ յանգեցնելով անկանխատեսելի հետեւանքներին: Չնայած ընդդիմութիւնն իր ակտիւացումը հիմնաւորում է Նիկոլ Փաշինեանի վերջին յայտարարութիւններով, սակայն միանշանակ է, որ այն ընդամէնը պատրուակ է՝ ընդդիմութիւնը, ամէն դէպքում, գնալու էր նման գործողութիւնների, թէկուզ մէկ այլ պատրուակով՝ նպատակ ունենալով հերթական անգամ իշխանափոխութիւն իրականացնելու փորձ անել:

Հետաքրքիր գուզագիտութիւն էր նաեւ նման բազմակողմ ու համաժամանակեայ ակտիւացման երեւոյթը. Արթուր Վանեցեանի ու միւսների քաղաքական ակտիւացումը ժամանակագրորէն նախորդեց Նիկոլ Փաշինեանի՝ Մոսկուա կատարուելիք այցին: Ի դէպ, սա առաջին դէպքը է, որ Նիկոլ Փաշինեանի միջազգային այցերն

ուղեկցում են ներքաղաքական լարուածութեան ահազանցմամբ: Մի կողմ թողնենք հանգամանքը, որ Աժ արտահերթ ընտրութիւններից անցել է ընդամէնը մի քանի ամիս, եւ մեծ հաշուով իրավիճակային լուրջ փոփոխութիւն տեղի չի ունեցել, որը կարող էր կասկածի տակ դնել ընտրուած իշխանութիւնների լեգիտիմութիւնը: Խնդիրը դիտարկենք միւս տեսանկիւնից, թէ ինչու է հայաստանեան ընդդիմութիւնը ներքաղաքական լարուածութիւն հրահրելու փորձ իրականացնում հէնց այն ժամանակաշրջանում, երբ տեղի են ունենում ակտիւ արտաքին քաղաքական բանակցութիւններ, երբ աշխարհը գտնուում է բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում, որով պայմանաւորուած՝ սահմանափակ են նաեւ ՀՀ-ի առջեւ ծառայած տարածաշրջանային մարտահրաւերները: Ըստ էութեան՝ նման կերպ ընդդիմութիւնը փորձում է փաստացի խոչընդոտել ՀՀ իշխանութիւններին սեւեռուել արտաքին քաղաքական ու անվտանգային խնդիրների լուծման վրայ եւ ջանում տապալել խաղաղութեան օրակարգի հաստատման ուղղութեամբ իրականացուող գործնական քայլերը՝ կասկածի տակ դնելով տարածաշրջանի յետագան՝ դրանից բխող բոլոր անկանխա-

տեսելի հետեւանքներով: Արձանագրենք նաեւ, որ այս ամէնը տեղի է ունենում հէնց այն ժամանակ, երբ երկիրը նոր-նոր փորձում է տնտեսապէս ոտքի կանգնել 44-օրեայ դաժան պատերազմից ու կ'որոնաւիրուսային համաճարակից յետոյ: Այն ժամանակ, երբ Հայաստանն իր անվտանգային ապահովութեան տեսանկիւնից դարձել է ռուս ու ուկրաինացի քաղաքացիների ու բիզնեսի համար նախընտրելի երկիր: Չնայած գործողութիւնների մեկնարկից անցել է 2-3 օր, սակայն արդէն ակնյայտ է, որ ընդդիմութիւնը չի յաջողելու: Նոր խօսք, ապագայի յստակ տեսլական ու մարտահրաւերները լուծելու կոնկրէտ մօտեցումներ չունեցող ուժը կամ ճակատը չի կարող յաջողել, որքան էլ փորձ անի խաղալ հանրային նուրբ լարերի հետ ու շահարկել այնպիսի զգայուն հարց, ինչպիսին Արցախի հարցն է: Ինչքան երկար ձգուեն վերջիններիս գործողութիւնները, այնքան ներքաղաքական լարուածութիւն առաջացնելու փորձերն իրենց բացասական հետքն են թողելու Հայաստանի բանակցային դիրքերի որոշակի խաթիւման, տարածաշրջանային անորոշութեան պահպանման եւ խաղաղութեան օրակարգի հաստատման գործընթացի վրայ: «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՂԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Արթուր Վանեցեան Նստացոյց Ակսած Է Ազատութեան Հրապարակին Վրայ



Արթուր Վանեցեան նստացոյց կ'ընէ Ազատութեան հրապարակին վրայ

Փաշինեանի իշխանութիւնը հեռացնելու նպատակով Ազատութեան հրապարակին մէջ նստացոյց կ'ընեն ընդդիմադիր «Պատիւ Ունեմ» խմբակցութեան ղեկավար Արթուր Վանեցեանն ու խմբակիցները, սակայն, չյտատկացնելով, թէ այդ նպատակին հասնելու համար ինչ ծրագիր ունին:

Վանեցեանի ղեկավարած «Հայրենիք» կուսակցութեան մամուլի խօսնակ Սօս Յակոբեան ըսաւ, որ այս փուլին կը փորձեն քաղաքացիներուն հետ երկխօսութեան մէջ մտնել. «Նպատակը յստակ է, որ մարդիկ մեծ քանակներով՝ իրենց ընտանիքով, իրենց ընկերներով գան, հաւաքուեն այստեղ՝ իրավիճակին տէր կանգնելու համար: Որեւէ քաղաքական ուժ, որեւէ անհատ միայնակ չի կարողանալու լուծել մեր պետութեան առջեւ շատ լուրջ ծառայած խնդիրները: Եւ ամուր պետութիւն ունենալու նպատակին այս իշխանութիւններն ուղղակի խոչընդոտ են ճանապարհին, այդ խոչընդոտները պէտք է վերացուեն, այս իշխանութիւնները պէտք է հեռանան իշխանութեան ղեկից»:

Փաշինեանի իշխանութեան

առաջին տարուան ընթացքին Ազգային Անվտանգութեան Ծառայութեան տնօրէնի պաշտօնը զբաղեցուցած Վանեցեանը սկսաւ նստացոյցը, որպէսզի, ինչպէս ինք կ'ըսէ, «կանխի վարչապետի ծրագիրը»: Նստացոյցը կը յաջողէ անցնել շաբաթ խորհրդարանին մէջ վարչապետ Փաշինեանի յայտարարութեան, թէ միջազգային հանրութիւնը կ'ակնկալէ, որ հայկական կողմը քիչ մը իջեցնէ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցով նշաձողը:

«Նիկոլ Փաշինեանի իշխանութիւնը պատրաստուած է թողնել Արցախը, եւ սկսել են արդէն խօսել, քարոզել այն մասին, որ Արցախը կարող է լինել Ատրպէյճանի կազմում: Եւ եթէ Հայաստանի ներսում հիմա ընդվզում չլինի, եթէ մենք չփորձենք հեռացնել Նիկոլ Փաշինեանի իշխանութիւնը, այդ գործընթացն անպայման իրականանալու է», աւելի վաղ ըսած էր Վանեցեանը:

Իսկ ի՞նչ օրակարգ կը բերէ ընդդիմութիւնը եւ ի՞նչ առաջարկներ ունի, կը հարցնէ իշխող «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր Վահագն Ալեքսանեանը:

Հաղորդութիւն հրաւիրեց փաստի վրայ, որ նախորդ ամիս Զանգեզուրի պղնձամոլիպտենային գործարանին գործով պետական պիւլտնէ վճարուած է 15 միլիոն դրամ:

«Հայաստանի Հանրապետութիւնը, ժողովուրդը Զանգեզուրի պղնձամոլիպտենային գործարանի սեփականատէրն է, դա թալանի վերադարձ չէ: Դա եւս թալանածի վերադարձ է», ընդգծեց Փաշինեան: Վարչապետը անհրաժեշտ կը համարէ հիմնարկներ ստեղծել, որոնք պիտի պայքարին փտածութեան դէմ:

«Այո՛, ես էլ գոհ չեմ, բազմիցս եմ ասել, բայց իմ դժգոհութիւնները, բորբոքածութիւնները արդիւնքում եկել եմ այն եզրակացութեան, որ պէտք է հիմնարկ լինի, որ աշխատի, որովհետեւ վարչապետի յանձնարարականով կամ քաղաքական մեծամասնութեան կամքով չի դա, թող հիմնարկ լինի ու աշխատի: Եւ մենք 2020-2021 թվականներին շրջադարձային նշանակութեան բարեփոխումներ ենք իրականացրել», եզրափակեց Փաշինեան:

Երեք Միլիոն Տոլար Կաշառքի Գործով Դատախազը Կ'առաջարկէ Հարցաքննել Ս. Համբարձումեանը Եւ Վ. Օսկանեանը

Երեք միլիոն տոլար կաշառքի մեղադրանքով Ռուպերթ Քոչարեանի եւ Արմէն Գէորգեանի գործով դատական նիստին, Երեւան քաղաքի Ընդհանուր Իրաւասութեան Դատարանը՝ նախագահութեամբ դատաւոր Աննա Դանիբեկեանի, անցաւ ապացոյցներու հետազոտման կարգի սահմանման, առանց քննարկելու պաշտպանական կողմին ներկայացուցած միջնորդութիւնները:

Մեղադրող դատախազ Պետրոս Պետրոսեանը առաջարկեց սահմանել ապացոյցներու հետազոտման հետեւեալ կարգը. նախ՝ հետազոտել քրէական գործին մէջ առկայ փաստութիւնները, այնուհետեւ՝ իրեղէն ապացոյց ճանչցուած հանգամանքները, անկէ յետոյ անցնիլ վկաններու հարցաքննութեան եւ ամփոփել ապացոյցներու հետազոտման ամբաստանեալներու հարցաքննութեամբ:

Դատախազը առաջարկեց սկիզբէն հարցաքննել Սիլվա Համբարձումեանը, Վարդան Օսկանեանը,

նր, Լեւոն Սուլթանեանը, Անահիտ Խորաջէլեանը, Գարմէն Սահակեանը, Անդրանիկ Գէորգեանը: Նաեւ Դատախազութիւնը կը պատրաստուի միջնորդելու՝ միջոցներու ձեռնարկելու հետախուզման մէջ գտնուող Սամուէլ Մայրապետեանը հարցաքննելու համար:

Արամ Օրբելեանը խնդրեց պարզաբանել, թէ ինչ դատավարական գործընթացով դատարանը կը հրաժարի ապացոյցներէն: «Քրէական գործի մէջ կայ աւելի քան 100 հատոր նիւթ, որի մեծ մասն ապացոյցներ են, կայ դատակոչի մեծ ցուցակ, իսկ դատախազն, ըստ էութեան, հրաժարուած է այդ ապացոյցներէն», ըսաւ պաշտպանը:

Ըստ անոր՝ ցուցակին մէջ պէտք է նաեւ աւելցնել դատավարական փաստութիւնները ուսումնասիրելը: Օրբելեանը նաեւ առաջարկեց Սիլվա Համբարձումեանը հարցաքննել ամենավերջը, ընդ որում՝ նոյն օրը միաժամանակ ուսումնասիրել իր գրաւոր ցուցմունքները:

«Արցախի Պաշտօնեաները Պետք Է Այցելեն Երեւան Եւ Իրենց Հարցերը Վարչապետին Տան»։ Քաղաքագետ

«Պարզ տրամաբանութիւնն է յուշում, որ երբ ՀՀ-ի վարչապետն անում է յայտարարութիւն, որը ինչ-որ հարցեր է յարուցում Ստեփանակերտում, ապա դրան պէտք է հետեւի մի պարզ քայլ՝ Արցախի բարձրագոյն պաշտօնեաները պէտք է այցելեն Երեւան եւ այդ հարցերը վարչապետի հետ հանդիպմանը փակ ձեւաչափով նրան տան: Ես վստահ եմ, որ նրանք կը ստանան պատշաճ եւ բաւարարող պատասխաններ, այլ ոչ թէ հարցը հանել դուրս, անել աւելորդ եւ վնասակար յայտարարութիւններ, որոնք առաջին հերթին թուլացնում են հէնց Ստեփանակերտի դիրքերը», արձագանգեց քաղաքագետ Ռուբէն Մեհրապեանը՝ անդրադառնալով Արցախէն հնչած յայտարարութիւններուն:

«Յամենայնդէպս, ինձ թոյլ է տալիս նման պնդում անել հրապարակային յայտարարութիւններին այն տարափը, որը գալիս է Ստեփանակերտից, տարբեր մակարդակներից, յայտարարութիւններ, որոնք չեն դիմանում որեւէ քննութեան», նշեց ան:

«Երբ որ 1998-ից Արցախը դուրս բերուեց բանակցային ձեւա-



Քաղաքագետ Ռուբէն Մեհրապեան

չափից, նշաձողի վերաբերեալ որեւէ խօսակցութիւն չեղաւ, երբ փաստացի իջեցուեց Արցախի մասնակցութեան նշաձողը՝ անուղղելի վնաս հասցնելով Արցախի բանակցային դիրքերին: Երբ Մեղրիի հաշուին «պազարներ» էին գնում որեւէ մէկը ոչ միայն չէր խօսում: Հիմա այս խօսակցութիւնները նշաձողի վերաբերեալ ուղղակի տարօրինակ են», ըսաւ Ռուբէն Մեհրապեան:

Հայաստանը Կազմի Դիմաց Ակսած Է Վճարել Ռուպլիով

Հայաստանը կազմի դիմաց սկսած է ռուպլիով վճարել, յայտարարած է տնտեսութեան նախարար Վահան Քերոբեանը:

Պաշտօնեային խօսքով, վերջին վճարումները ռուսական արժույթով կատարուած է, այդուհանդերձ գնագոյնցումը դեռ տոլարով կ'իրականացուի: Այսինքն՝ Հայաստանը 1000 խորանարդ մէթր կազմի դիմաց կը շարունակէ 165 տոլարի չափով գումար վճարել, բայց՝ ռուպլիով:

Անցեալ ամիս Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինը

հրամայած էր «ոչ-բարեկամական» երկիրներուն կազմ ռուպլիով վճարել: Թէեւ այս որոշումը Հայաստանին չի վերաբերիր, իշխանութիւնները, սակայն, յայտարարեցին, որ Մոսկուայի հետ բանակցութիւններ կը վարեն կազմի դիմաց ռուպլիով վճարելու:

Պաշտօնական Երեւանը 2015-ին Եւրասիական Տնտեսական Միութեան անդամակցել է ի վեր պարբերաբար կ'ընդգծէ, որ կապույտ վաճառականութիւն դիմաց ռուսական արժույթով վճարելը ձեռնադր է Հայաստանին:

ԼՈՒՐԵՐ

Աշխարհը Մեզի Կ'ըստ' Իջեցուցեք Լեռնային Ղարաբաղի Կարգավիճակի Հարցով Ձեր Նշածողը. Փաշինեան



Փաշինեան Ազգային ժողովին մէջ իր ելոյթին ընթացքին

«Այսօր միջազգային հանրութիւնը մեզ յստակ ասում է՝ լինել աշխարհի միակ երկիրը, որը երկկողմ մակարդակով չի ճանաչում Թուրքիայի դաշնակից Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը, մեծ վտանգ է ոչ միայն Արցախի, այլև՝ Հայաստանի համար», այս մասին Ազգային ժողովին մէջ իր ելոյթին ընթացքին ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Ան յաւելեց «Այսօր միջազգային հանրութիւնը մեզ կրկին ասում է՝ մի փոքր իջեցրէք Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցում ձեր նշածողը եւ միջազգային մեծ հզօրացում կ'ապահովէք Հայաստանի եւ Արցախի շուրջը: Հակառակ դէպքում, ասում է միջազգային հանրութիւնը, խնդրում ենք մեզ վրայ յոյս չդնել, ոչ թէ այն պատճառով, որ մենք չենք ուզում ձեզ օգնել, այլ այն պատճառով, որ մենք չենք կարող ձեզ օգնել»:

Ըստ անոր՝ այսօր աշխարհի մէջ կա՛մ չկան, կա՛մ քիչ են երկիրները, ովքեր գոհ ու երջանիկ են իրենց սահմաններով եւ արդար կը համարեն զանոնք: Բայց ինչ-որ տեղ մը, ինչ-որ կերպ մը պէտք է կանգ առնել:

«Սա ինձ ստիպում է աւելի հետեւողական ու համոզուած պնդել, որ իսրայէլական օրակարգն այլ ընտրանք չունի մեզ համար: Այն, ինչ ասացի, իրականում հեշտ չէ ասելը, իրականում հեշտ չէ այս ամէնն ասելը որոշում կայացնելը: Այս ամէնն ասելը դժուար է տարբեր պատճառներով սկսած նրանից, որ հայի յետին միտքը նորից յառնում է իր ողջ պերճանքով ու դժբախտութեամբ: Բայց եթէ Աստուած ու ժողովուրդը շատերի համար անսպասելի ու անտրամաբանական որոշման են յանգել, որ 44-օրեայ պատերազմից յետոյ ես պէտք է շարունակեմ առաջնորդել երկիրը եւ ժողովուրդին, ուրեմն այս ամէնն ասելը եւ այս ամէնի պատասխանատուութիւնն ստանձնելը իմ առաքելութիւնն է, իմ լուծը, եթէ կ'ուզէք իմ խաչը, որը պիտի տանեմ», ըսաւ ան:

Նիկոլ Փաշինեանը անդրադարձաւ Ատրպէյճանի հետ խաղաղութեան պայմանագիր կնքելու գործընթացի մանրամասնութիւն-

ներուն: Ան յիշեցուց, որ Մարտ 10-ին Մինսքի Խմբակի համանախագահ երկիրներէն մէկը Հայաստանին փոխանցած է Ատրպէյճանի պատկերացումները իսրայէլական պայմանագրի հիմնարար սկզբունքներուն վերաբերեալ:

«Այդ սկզբունքները հետեւեալն են՝ փոխադարձաբար միմեանց ինքնիշխանութեան, տարածքային ամբողջականութեան, միջազգայնօրէն ճանաչուած սահմանների անխախտելիութեան, քաղաքական անկախութեան ճանաչում եւ շարժում, միմեանց նկատմամբ տարածքային պահանջների բացակայութեան արձանագրում եւ տէրիւրէ պարտաւորութիւնների արձանագրում՝ ապագայում միմեանց նկատմամբ նման պահանջներ չառաջադրելու վերաբերեալ, միջպետական յարաբերութիւններում միմեանց անվտանգութեան, տարածքային ամբողջականութեան կամ քաղաքական անկախութեան համար, այդ թւում՝ ուժի կիրառման սպառնալիքներ չստեղծելու, ՄԱԿ-ի նպատակներին չհամապատասխանող գործողութիւններ չձեռնարկելու փոխադարձ պարտաւորութիւն, սահմանների սահմանազատում եւ սահմանագծում ու դիւանագիտական յարաբերութիւնների հաստատում, ճանապարհային եւ այլ հաղորդակցութիւնների ապաշրջափակում, նոր հաղորդակցութիւնների ստեղծում եւ փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող այլ ոլորտներում համագործակցութիւն»:

44-օրեայ պատերազմի գոհներուն թիւը այսօրուայ դրութեամբ 3 հազար 825 է, այսօր Ազգային ժողովին մէջ ըսաւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Անոնց մեծ մասին մարմինները, ըստ վարչապետին, յայտնաբերուած, կամ DNA նոյնականացուած ու յուղարկաւորուած են 2021 թուականին:

Փաշինեան շեշտեց, որ ի սկզբանէ ընդունած է իր մեղքն ու պատասխանատուութիւնը, թէ՛ պատերազմի, թէ՛ պարտութեան համար, բայց չէ ընդունած ու չ'ընդունիր հողեր յանձնելու, դաւաճանութեան մասին՝ 2020 թուականի Նոյեմբեր 9-էն յետոյ ընդդիմադիրներուն մեղադրանքները:

Երեւան Մերժած է Ներկայացուցիչներու Հանդիպումը Երեւանի Մէջ Կազմակերպելու Թուրքիոյ Առաջարկը

Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Մեւլութ Չաոււշօղլուն թրքական «NTV» լրատուամիջոցին հետ զրոյցի ընթացքին անդրադարձած է հայ-թրքական յարաբերութիւններուն, ինչպէս նաեւ արտաքին քաղաքականութեան վերաբերեալ այլ հարցերուն:

Հրազդողին այն հարցին, թէ արդեօք յառաջիկային պէ՞տք է սպասել հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին մէջ յստակ քայլերու, Չաոււշօղլուն ըսած է.

«Յստակ քայլեր պիտի ըլլան, վստահութիւնը բարձրացնող քայլեր ալ կ'իրականացուին»:

Չաոււշօղլուն կարեւորած է Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ Պրիւքսէլի մէջ հանդիպումէն յետոյ ձեռք բերուած համաձայնութիւնները:

Անդրադառնալով Հարաւային Կովկասի մէջ «կայունութիւն հաստատելուն», ան շեշտած է, որ երկիրները պէտք է կարգաւորեն իրենց յարաբերութիւնները միմեանց հետ: Ան միաժամանակ շեշտած է, որ այս ամէնը իրականացնելը հեշտ չէ եւ «մէկ օրուան մէջ չեն իրականացուիր»:

Խօսելով Թուրքիոյ ու Հայաստանի յատուկ ներկայացուցիչներուն միջեւ նոր հանդիպման մասին, Թուրքիոյ Արտաքին Գործերու Նախարարութեան ղեկավարը տեղեկացուցած է, որ երրորդ հանդիպումը դարձեալ տեղի պիտի ունենան վիեննայի մէջ:

Ան նաեւ նշած է, որ կը դիտակցի, որ Հայաստանը ճանշման



Թուրքիոյ արտաքին գործերու նախարար Մեւլութ Չաոււշօղլու

տակ է, քանի որ սա ամենեւին հեշտ գործընթաց չէ: «Բայց հիմա արդեօք երրորդ երկրի մէջ հանդիպելու կարիք կայ»:

Չաոււշօղլուն ընդգծած է, որ իր խօսքերը պէտք է ընկալել որպէս մեղադրանք: Անոր խօսքով հայկական կողմը պէտք է քիչ մը համարձակ ըլլայ, քանի որ, եթէ Թուրքիոյ մէջ հանդիպում չեն կրնար կայացնել, ապա միւս հարցերուն մէջ ինչպէ՞ս պէտք է քայլեր ընեն:

Ան նաեւ յայտնած է, որ իրենք նոյնիսկ առաջարկած են սկիզբը Երեւանի մէջ հանդիպել, բայց հայկական կողմը չէ համաձայնած՝ պնդելով երրորդ երկրին մէջ հանդիպել:

ԱՄՆ Երեւանին Եւ Պաքուին Կոչ Կ'ընէ Աշխուժացնել Դիւանագիտական Ձանքերը

ԱՄՆ կը շարունակէ հաւատարիմ ըլլալ Հարաւային Կովկասի տարածաշրջանին համար խաղաղ, ժողովրդավարական եւ բարգաւաճ ապագայ յառաջ խաղացման: Այդ մասին հերթական ճեպագրոյցի ժամանակ յայտնած է Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութեան Խօսնակ Նետ Փրայսը:



Պետական Քարտուղարութեան Խօսնակ Նետ Փրայս

«Մենք Հայաստանին եւ Ատրպէյճանին կոչ կ'ընենք շարունակելու աշխուժացնել իրենց դիւանագիտական փոխգործակցութիւնը եւ օգտագործելու ուղղակի փոխգործակցութեան գոյութիւն ունեցող մեխանիզմները՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան հետ կապուած կամ անկէ բխող բոլոր չլուծուած հարցերու համապարփակ լուծումներ գտնելու եւ իսրայէլական համապարփակ համաձայնագիր կնքման միջոցով յարաբերութիւնները կարգաւոր-

ելու համար», նշած է դիւանագետը:

Անդրադառնալով այդ գործընթացներուն մէջ Ուաշինկթընի դերին՝ Փրայս ընդգծած է. «Մենք, ինչպէս նախապէս, պատրաստ ենք օգնելու Հայաստանին ու Ատրպէյճանին այդ ջանքերուն մէջ, այդ շարքին՝ որպէս ԵԱՀԿ Մինսքի Խմբակի համանախագահ: Ուստի երբ մենք կը խօսինք գոյութիւն ունեցող մեխանիզմներու մասին, ԵԱՀԿ Մինսքի Խմբակը, ի հարկէ, անոր մէջ մասն է»:

Հայոց Յեղասպանութեան Թանգարան-Հիմնարկը Համալրուած Է Հազարէ Աւելի Ցուցանմուշով



Հայոց Յեղասպանութեան Թանգարան-Հիմնարկի Թանգարանային ֆոնտը վերջին մէկ տարուան մէջ թէ՛ ՀՀ քաղաքացիներու, թէ՛ օտարերկրացիներու նուիրատուութիւններու շնորհիւ համալրուած է հազարէ աւելի ցուցանմուշով: Այս մասին նշեց Հայոց Յեղասպանութեան Թանգարան-Հիմնարկի տնօրէն Յարութիւն Մարութեանը: Անոնք անձնական իրեր են, փաստաթուղթեր, լուսանկարներ եւ այլն: Մասնաւորապէս, պատմաբան Գէորգ Եազըճեանը նուիրած է 1960-2020 թուականներուն վերաբերող լիբանանահայ իրականութեան մէջ օգտագործուած բազմաթիւ ազդագրեր, կոչեր, գրութիւններ՝ նուիրուած Հայոց Յեղասպանութեան թեմային: Վերջին շաբաթներու ընթացքին, որպէս նուիրաբերութիւն, Թանգարանին յանձնուեցան Պելճիքա բնակող նկարիչ Սամօ Ասլանեանի աւելի քան տասնեակ գեղանկարները: Վահան Պուռնազեանը փոխանցած է Պուռնազեան-Անանեան ընտանեկան մատուցներ՝ ժամացոյցներ, Հայաստանի Առաջին Հանրապետութեան թղթադրամ: Զուգահեռապէս ֆե-

լիքս Յիկերէն ստացուած է գուրիցերիացի միսիոներ Յակոբ Քիւնցլերի գիրքը՝ Քարեն Եփփէին ուղղուած հեղինակի ընծայագրով: Արամ Գրիգորեանը նուիրաբերած է Հետվիկ Պիւլի լուսանկարներ, նամակներ: Զուգահեռապէս ֆեյսբուքէն արաբերէրի ոսկերիչ Սարգիս Կէօզուպուլուքեանի ձեռագործ գոտին եւ ոսկերիչի գործիք: Ընդհանուր առմամբ, Թանգարանային ֆոնտը համալրուած է 1423 ցուցանմուշով:

2021 թուականին Թանգարանին գրադարանը համալրուած է 913 միաւոր գրականութեամբ: Մասնաւորապէս, Թանգարանը համալրուած է ցեղասպանագէտ Իսրայէլ Չառնիի անձնական գրադարանի աւելի քան 50 միաւոր գիրքով: ՀՀ Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Պատմութեան Հիմնարկի տնօրէնութեան հետ պայմանաւորուածութեան շնորհիւ գրադարանը հարստացած է վերջին 10 տարիներու Պատմութեան Հիմնարկին կողմէ հրատարակուած շուրջ 70 անուն մասնագիտական գրականութեամբ:

Փութին Եւ Փաշինեան Համաձայնած Են

Շարունակուած էջ 1-էն

գալուստ», ըսաւ Փութին: Ռուսաստանի նախագահը նշեց, որ Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ կնքուած է աւելի քան 200 համաձայնագիր, որ կը ստեղծէ լաւ հարաւորութիւն աշխատելու գրեթէ բոլոր ոլորտներուն մէջ, որմէ ամենանշանակալին տնտեսական ոլորտն է: «2021 թուականի մեր տուեալներով ապրանքաշրջանառութեան աճը եղած է 80 տոկոս: Այս տարուայ առաջին ամիսներուն եւս 50 տոկոսով աւելցած է: Այդ շատ լաւ ցուցանիշ է այս ժամանակաշրջանին», եզրափակեց Փութին: Վարչապետ Փաշինեան իր կար-

գին ըսաւ. «Պէտք է տեսնել, թէ ինչ կարելի է ընել, որպէսզի ռուս խաղաղապահներուն գործունէութիւնը աւելի արդիւնաւէտ ըլլայ Լեռնային Ղարաբաղի մէջ: «Ընդհանուր առմամբ պէտք է ընդգծել, որ ռուս խաղաղապահների գործունէութիւնը Լեռնային Ղարաբաղում ապահովում է անվտանգութիւնը: Բայց պէտք է տեսնել, թէ ինչ կարելի է անել, որպէսզի խաղաղապահների գործունէութիւնն աւելի արդիւնաւէտ լինի: Եւ, ի հարկէ, մեր տարածաշրջանում կարեւոր քաղաքական հարցը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգաւորումն է: Եւ վստահ եմ, որ այս մասին եւս այսօր մենք կը խօսենք», ըսաւ Փաշինեան:

Բանակցիլ Դեռ Զի Նշանակեր Ղարաբաղը Նուիրել Ատրպէյճանին. Միջազգային Եզնաժամային Խումբի Փորձագէտ



Օլեսիա Վարդանեանը «Ազատութիւն» ռատիոկայանի հետ հարցազրոյցի ընթացքին

Ատրպէյճանը կը փափաքի, որ Հայաստանը ճանչնայ իր տարածքային ամբողջականութիւնը եւ հրաժարի Լեռնային Ղարաբաղի հետ կապուած որեւէ պահանջէ, կ'ըսէ Միջազգային Ճգնաժամային Խումբի Հարաւային Կովկասի հարցերով աւագ հետազոտող Օլեսիա Վարդանեանը «Ազատութիւն» ռատիոկայանի հետ հարցազրոյցի ընթացքին:

«Նոյնը, ինչ աշխարհի որեւէ պետութիւն. Ատրպէյճանը կը փափաքի, որ Հայաստանը ճանչնայ իր տարածքային ամբողջականութիւնը եւ հրաժարի Լեռնային Ղարաբաղի հետ կապուած որեւէ պահանջէ: Սկզբունքօրէն, այն, ինչ կը մնայ 2020 թուականի պատերազմէն յետոյ, Լեռնային Ղարաբաղին Հայաստանի կողմէ զգալիօրէն աւելի քիչ աջակցութիւնն է, քան նախապէս: Բայց, ըստ երեւոյթին, Պաքուն յոյս ունի, որ իրավիճակը պիտի զարգանայ Լեռնային Ղարաբաղի մէջ իր անմիջական իշխանութեան ամրապնդման ուղղութեամբ: Իսկ թէ այդ ինչ տեսք պիտի ունենայ, ես յստակ պատասխան չունիմ:

«Յիշեցնեմ, որ 25 տարիէ աւելի բանակցութիւններ կ'ընթանան կարգավիճակի հարցին շուրջ, ու թէ ինչպիսին պիտի ըլլայ կեանքը այտեղ, երբեք մանրամասն բանակցութիւններ չեն եղած: Եւ, հետեւաբար, օրինակ, այն, ինչ հիմա կը մեկնարկէ որպէս քննարկում, առաջին անգամ է: Եւ, հաւանաբար, այս պատճառով այդ այդքան անհանգստութիւն կ'առաջացնէ, այդ շարքին՝ առաջին հերթին այն մարդոց մօտ, որոնց վրայ սա ուղղակիօրէն պիտի ազդէ:

«Դուք պէտք է հասկնաք, որ ընդհանուր առմամբ միջազգային իրաւունքը իրականութեան մէջ ուղղուած է որոշակի միջազգային սկզբունքներու պաշտպանութեան: Ի հարկէ, կայ ինքնորոշման սկզբունքը: Բայց ինչպէս գիտէք, ինքնորոշման սկզբունքն բացառութիւններ շատ հազուադէպ կ'ըլլան: Սա աւելի շատ բացառութիւն է կանոնէն, քան ինչ-որ ընդհանուր ճշմարտութիւն, քան ինչ-որ բանաձեւ, որ կը կիրառուի իւրաքանչիւր հակամարտութեան պարագային:

«Եթէ հնարաւոր է, ապա մինչեւ վերջ բոլոր միջազգային կառուցները եւ օտարերկրեայ կառավարութիւնները հաւատարիմ կը

մնան տարածքային ամբողջականութեան սկզբունքին: Ես սա կ'ըսեմ ընդհանուր առմամբ, այլ ոչ թէ Ղարաբաղի վերաբերեալ: Բայց իրականութեան մէջ այդ պէտք է հաշուի առնել, այդ շարքին՝ որոշ հեռանկարներ ու հնարաւորութիւններ դիտարկելով:

«Ընդհանուր առմամբ, տարածքային ամբողջականութեան սկզբունքը, յատկապէս վերջին ութ տարիներու ընթացքին գերիշխող դարձած է, եւ այդ, ի հարկէ, կը բխի այն ամէնէն, ինչ կը կատարուի չետիտորհրդային տարածքին մէջ: Նկատի ունիմ խորիմ բունակցումը եւ աշխարհի մէջ տեղի ունեցած իրադարձութիւնները, որոնք գործնականին մէջ նուազեցուցին այն մարդոց թիւը, որոնք նախապէս պատրաստ էին ինչ-որ կերպ քննարկելու անկախութեան հարցը: Եթէ նայիք պաշտօնական քննարկման, ապա պիտի տեսնէք, որ հայկական կողմէ բարձր պաշտօնեաներու մակարդակով անկախութեան պահանջը համեմատաբար ուշ ի յայտ եկած է: Եւ սա աւելի շատ արձագանգ էր բանակցային գործընթացին մէջ որեւէ յառաջընթացի ի սպառ բացակայութեան, Ատրպէյճանի կողմէ առաջադրուած պահանջներու աճին, միջազգային հանրութեան ճնշման, որ առաջին հերթին կը գործածուէր հայկական կողմին վրայ:

Եթէ հիմա առնուազն բանակցային գործընթաց չըլլայ, ապա մագլցումի, ինչ-որ բռնութեան վտանգը կը մեծնայ եւ գուցէ ոչ միայն Լեռնային Ղարաբաղի մէջ: Տեսէք, եթէ դուք հիմա կը սկսիք բանակցային գործընթաց, այդ չի նշանակեր, որ մէկ օրուան մէջ Ղարաբաղը ինչ-որ կերպ նուէր պիտի տաք: Այդ որոշակի գործընթաց է: Գոնէ այն, ինչ մենք կը լսենք վարչապետ Փաշինեանէն, իսկ ես հնարաւորութիւն չեմ ունեցած անձամբ գրուցելու անոր հետ, բայց ինչպէս կը հասկնամ անոր ըսածէն, որ ինք ցանկութիւն ու պատրաստակամութիւն ունի մանրամասնութիւններ քննարկելու, թէ ինչպիսին պիտի ըլլայ Ղարաբաղը, թէ ինչ պիտի ըլլայ անոր հետ, անվտանգութեան ինչ պայմաններ պիտի ունենայ այն: Իսկ սա մէկ օրուայ խօսակցութիւն չէ, յատկապէս, երբ 25 տարիէ աւելի ընդհանրապէս նման քննարկում չէ եղած», յայտնած է Օլեսիա Վարդանեանը:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

Երբեք Մեռնիլ Չճանչցող Մեր Ազգը

ՄԵԹՐ ՊԱՐԳԵԻ ԴԱԻԹԵԱՆ

Երկու կիրակիներ այս տարի, մէկը՝ Զատիկ, եւ յաջորդը՝ Եղեռնի արհաւիրք:

Մէկը՝ խորհրդանիշ Յիսուս Քրիստոսի խաչելութեան, մահուան եւ յարութեան:

Միւսը՝ խորհրդանիշ հայազգի նահատակութեան եւ Զոնի տեղահանման:

Յաճախ մահաքունի մէջ մտած մեր ժողովուրդը ուրիշին կողմէ իր վրայ դրուած տապանաքարը շարտելով՝ Քրիստոսի հրաշափառ յարութեան պէս վեր ելած է մեռնիլ չուզողի վճռակամութեամբ եւ ապրիլ սիրողի տենչով՝ ըսելու աշխարհին «ԿԱՄ ՈՒ ՊԻՏԻ ՄՆԱՄ ԵՒ ԵՐԲԵՔ ՄԵՌՆԻԼ ՉՃԱՆՉՆԱՄ»:

Յարութեամբ վերապրած մեր ժողովուրդին, - անմիաբան եւ անբախտ իր անցեալը իշխեցնող այս ճարտար օրերուն, - միակ միւսիմարանքը, որ գինք մը մոլոր ապագայի մը տեսիլքով յուսադրուելու, այն փաստն է, որ մեր մէջ կան մարդիկ, որոնք քինախնդիր եւ ցեխարձակող մարդոց շարքերէն դուրս կանգնած՝ կը մտածեն ու կը ծրարեն, թէ ինչպէ՞ս կրնան կերտել հայու յաջող ապագան, որպէսզի վերականգնի հայու արժանապատուութիւնը արցախեան ամօթալի մեր վերջին պարտութենէն ետք:

Անզուգական հայ, սասունցի խմբագրապետ եւ կրթական մշակ Սիմոն Սիմոնեանի եւ իր նմաններուն սերունդը ասկից կէս դար մը առաջ առաջարկեց գրիչով, խօսքով եւ գործով հիմը դնել համազգային շարժումի մը, որ աշխարհատարած հայութեան եւ Հայաստանի շահերը հետապնդելու գործը պիտի ընէր՝ հեռու կուսակցական ու հատուածական սեփական շահեր յառաջ քշելու մտայնութենէն:

Եւ ահա ասիկ իրենց ասպարէզներուն մէջ մեծ յաջողութիւն արձանագրած հայեր, որոնք իրենց ազգային պատկանելիութիւնը կը գերադասեն ամէն պատկանելիութենէ վեր, - ինչպէս Ռուբէն Վարդանեան եւ կի- նը՝ Վերոնիքա Զոնապետ, Նուպար Աֆէեան, Նունէ Ալեքեան, Փիեռ Կիւրճեան, Արման Ճիլաւեան, Տաւիտ Թաւատեան, - Սիմոնեանի երազը իրականացնելու նպատակադրումով հիմնած են համազգային շարժում մը ԱՊԱԳ-ԱՅ ՀԱՅՈՒ ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹԻԻՆԸ (Future Armenian Initiative) անուան տակ, որ կը յուսայ միացնել աշխարհի հայութիւնը՝ ստեղծելու համար հասարակաց հասկացութիւն մը (common understanding) Հա- յաստանի ապագային նկատմամբ, նպատակա- կէտ ունենալով Հայաստանը դնել համաշխարհային հարթակի վրայ եւ նպաստել անոր զարգացումին:

Արդէն անոնց ներդրումով Հայաստանի Դիլիջանի շրջանին մէջ բացուած է United World College Dilijan գիտական կեդրոնը, որ միակն է ամբողջ արեւելեան Եւրոպայի մէջ ու կը պատկանի միջազգային հոշակաւոր United World College Network-ին: Նախաձեռնութիւնը ունի կեդ- ըրոններ Ռուսիոյ, Ամերիկայի, Հայաստանի եւ Եւրոպայի մէջ եւ կ'օգտագործէ իր լայնածաւալ ցանցը՝ ներգրաւելու համար աշխարհի լաւագոյն

գիտելիքները, եւ տարբեր խաւերու խելացի մարդոց հետ կապեր հաստատելով՝ կը մտադրէ Հայաստանը դարձնել գիտական զարգացումի կեդրոն:

Թշնամիէն հարուածուած եւ բարեկամէն լքուած մեր ժողովուրդը այսպիսի գիտակից եւ կարող մարդոց մտքին, նիւթին եւ ուժին ապաւինելով՝ պէտք է որ նայի ապագային՝ իր գիտութեան դարը կերտելու, որպէսզի ամէն տեսակի ոսոխի դէմ կանգնելու վիճակին մէջ դնէ ինքզինք: Նախկին խելամիտ նախագահ Արմէն Սարգսեան իր ելույթներէն մէկուն մէջ ճիշդ կը ներկայացնէր մեր ազգին բաղձալի բաց կարելի ապագան՝ ըսելով, թէ քսանմէկերորդ դարը գիտութեամբ յաղթանակ տանելու դար է եւ մեր ժողովուրդը իր յաղթանակները կերտելու համար ունի գիտութեամբ գինուելու տաղանդը: Հայկական Յեղասպանութեան ճանաչում ձեռք ձգելու համար չգոհանանք աշխարհի պետութիւններուն դռները թակելով: Ամերիկայի նախագահ Պայընի ճանաչումը, որ տարիներու տքնաշան աշխատանքով իրականացաւ, շատ բան չփոխեց մեր արդար դատին եւ իրաւունքներուն ճանաչման նկատմամբ: Երբ գիտութեամբ զօրանանք եւ մեր ուժին վստահինք, աշխարհ պիտի շարքի կանգնի եւ մեր դուռը թակէ իր ծառայութիւնը մեզի մատուցելու համար: Նորէն պիտի օրինակ դարձնենք Իսրայէլը՝ սիրենք զայն կամ չսիրենք, որովհետեւ ան իր գիտական ուժով յարգանք պարտադրեց բարեկամին եւ թշնամիին:

Երկու կիրակիներ այս տարի, մէկը՝ Զատիկ, եւ յաջորդը՝ Եղեռնի արհաւիրք: Մէկը՝ խորհրդանիշ Յիսուս Քրիստոսի խաչելութեան, մահուան եւ յարութեան: Միւսը՝ խորհրդանիշ հայ ազգի նահատակութեան եւ բռնի տեղահանման: Հասարակաց շատ բան կայ այս երկու խորհրդանշական դէպքերուն միջեւ:

Եթէ ՅԱՐՈՒԹԻԻՆ Է՛, հապա ի՞նչ է այն սիրանքը մահուան քարաւաններու բովէն եւ սարսափէն դուրս եկած մեր պապերուն ու տատերուն, որոնք հրաշքի համազօր իրենց պողպատեայ կամքով դուրս եկան իրենց պարտադրուած գերեզմաններէն ու ոչինչէն հնարք գտան գոյատեւելու, տուն-տեղ շինելու եւ յաջորդող կրթեալ սերունդ հասցնելու: Արդեօք իրենց ըրած առասպելական սիրանքը համազօր է՞ Յիսուս Քրիստոսի այն առասպելին, որ կ'ըսէ, թէ Ան հինգ հացով եւ երկու ձուկով իր հաւատացեալներէն ամբողջ հինգ հազար հոգի կերակրեց Գալիլիոյ ծովեզերքին մօտ գտնուող բլուրի մը վրայ:

Հայուն ՅԱՐՈՒԹԻԻՆԸ եղաւ Քրիստոսի ՅԱՐՈՒԹԵԱՆ պէս հրաշափառ, եւ ամէն անգամ, որ ազգովին իյնանք ու տկարանանք՝ յիշենք, որ Յիսուս Քրիստոսի ճամբով քալող մեր ժողովուրդը միշտ մէկզի պիտի շարտէ այն գերեզմանա-քարերը, որոնք ուրիշը կը գետեղէ մեր վրայ եւ վեր պիտի կանգնի խրոխտ ու անվեհեր՝ ըսելու աշխարհին «ԿԱՄ ՈՒ ՊԻՏԻ ՄՆԱՄ ԵՒ ԵՐԲԵՔ ՄԵՌՆԻԼ ՉՃԱՆՉՆԱՄ»:

Հաւատարիմ Մնանք Մեր Նահատակներու Պատգամին

Շարունակուած էջ 1-էն

Յիւնները որդեգրած էին անտես- սումի քաղաքականութիւնը խոր- հելով, թէ այդպիսով կրնան մո- ռացութեան մատնել Հայկական Յեղասպանութիւնը: Ներկայիս անոնք կը վարեն ժխտողական ըն- թացք, սակայն այդ եւս կը մատն- ուի ձախողութեան: Բազմաթիւ երկիրներ կու գան միանալու՝ իրերը իրենց անունով կոչելու ու պատմական իրողութիւնները վե- րահաստատողներու փաղանգին: Ոչ միայն այդ, այլ եւ թուրք մտա- տրականներ կ'ընդունին, կ'ոգե- կոչեն ու ափսոսանք կը յայտնեն որ, իրենց նախահայրերը մնան ոճիրներ գործած են Թուրքիոյ մէջ ապրող ժողովուրդի մը դէմ:

Թրքական պետութիւնը մնալով անպատիժ, նախընթաց կ'ստեղծէ այլ ցեղասպանու- թիւններու, որոնք կը գոր- ծադրուին միջեւ օրս՝ երկրա- գունդի տարբեր անկիւններու մէջ: Հայութիւնը իր ծայրը բարձրացնելով կը պաշտպանէ ո'չ միայն իր իրաւունքները, այլ եւ աշխարհի ուշադրու- թիւնը կը հրաւիրէ բոլոր իրա- ւագրկուած ժողովուրդներու տառապանքներուն վրայ:

Թուրքիա մինչեւ օրս կը շա- րունակէ իր թշնամական վերա- բերմունքը Հայ ժողովուրդին դէմ: Արցախեան վերջին պատերազմին թրքական բանակի գործնական մասնակցութիւնը ատոր մէկ վառ օրինակը հանդիսացաւ: Ան կը շա-

րունակէ փակ պահել Հայաստանի հետ իր սահմանը ու կը մերժէ դիւանագիտական յարաբերու- թիւններ հաստատել Երեւանի հետ: Այս հարցերը լուծելու նպա- տակով վերջերս սկսած բանակ- ցութիւնները կը մնան տեղապոյ- տի մէջ եւ Հայութիւնը կը մնայ թե- րահաւատ թրքական կողմի ան- կեղծութեան ու պատրաստակա- մութեան:

Թուրքիոյ հեռաւոր նպատա- կը կը շարունակէ մնալ փանթու- րանական աշխարհի մը ստեղծու- մը, որուն առջեւ խոչընդոտ կանգ- նած է փոքրիկ Հայաստանը: Դժբախտաբար Ռուսաստանն ու Արեւմուտքը, որոնք եւս մտահոգ- ուած պէտք է ըլլան թրքական ծա- ւալապաշտական նկրտումներով, անհրաժեշտ աջակցութիւնը կը զլանալ տալ Հայութեան:

Աշխարհ այսօր կ'ենթարկուի նոր դասաւորումներու, որոնց լոյ- սին տակ Հայաստան ստիպուած է վարել խիստ գոռուաւոր քաղաքա- կանութիւն, երկիրը հեռու պահե- լու համար նոր վտանգներ: Ներ- կայ կացութիւնը դիմակայելու հա- մար անհրաժեշտ է ներքին համե- րաշխութիւն: Ապրիլ 24-ի օրը լա- ւագոյն առիթ է խորհրդածութեան եւ գիտակցութեան, որ հաւատա- րիմ պէտք է մնանք մեր նահատակ- ներու պատգամին, որ մեզ կը թե- լադրէ ու կը պարտաւորեցնէ ըլլալ համախմբուած ու միասնական:

Յարգանք՝ Հայ ժողովուրդի բոլոր ժամանակներու նահատակ- ներուն:

AEBU SCHOLARSHIP PROGRAM

2022

APPLICATIONS NOW OPEN

Through June 30, 2022

EMPOWERING OUR YOUTH FOR A BRIGHTER FUTURE

To apply, visit our website
WWW.AEBU.ORG

All eligible undergraduate students of Armenian descent are invited to apply.

ARMENIAN EDUCATIONAL BENEVOLENT UNION
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՆ

626•344•7321
AEBU SCHOLARSHIP FUND COMMITTEE
1060 North Allen Avenue • Pasadena, CA 91104

40 Ամեակ Գերսամ Ահարոնեանի Մահուան

ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ

1916-էն մինչեւ իր մահը առհասարակ սփիւռ-քահայ ազգային, հասարակական եւ քաղաքական կեանքէն ներս տիրապետող մեծագոյն դէմքերէն մէկն է եղած Ընկ. Գերսամ Ահարոնեան, իսկ ՌԱԿ-էն ներս՝ գլխաւոր առաջնորդ դէմք-առաջնորդը:

Այսօր, իր մահուանէ քառասուն տարի ետք տակաւին կը զգանք այն մեծ ազդեցութիւնը, որ ան ունեցած է ՌԱԿ-ի անդամներուն եւ գործիչներուն վրայ: Այս եւ այլ ներդրումներու գնահատման նուիրուած էր ՌԱԿ Արեւմտեան ԱՄՆ-ի Շրջանային վարչութեան հանդիսութիւնը՝ նուիրուած մահուան քառասուներորդ տարելիցին, որ միաժամանակ կը գուզադիպէր ՌԱԿ Գ. Ահարոնեան ակումբի հիմնադրութեան քառասունամեակին:

Զգալի թիւով հանդիսականներու ներկայութիւնը ապացոյցն էր մեր ըսածի: Հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 3 Ապրիլ 2022-ին, Քալիֆորնիոյ Ալթատինա քաղաքի ԹՄՄ Պէշկէթիւրեան կեդրոնին մէջ:

ՌԱԿ Շրջ. վարչութեան ատենապետ Ընկ. Տոքթ. Ռաֆֆի Պալեան բացման խօսքին մէջ գնահատելէ ետք Գերսամ Ահարոնեան մարդն ու քաղաքական գործիչը, հրաւիրեց ներկաները մէկ ըստ լուծութեամբ յարգել մեր շարքերէն յաւատարմութեամբ կուսակցական ընկերներու եւ 44-օրեայ պատերազմին ու անկէ ի վեր գոհուած հայ մարտիկներու յիշատակը: Փաստորինա Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու հովիւ Արթ. Տ. Սարգիս Աւագ Քահ. Փետրոսեանի աղօթքով ընթացք տրուեցաւ հանդիսութեան:



Օրուան հանդիսավարն էր Ընկ. Խաչիկ Ծանոյեան, որ երկար տարիներ աշխատակցած էր Ընկ. Գ. Ահարոնեանի հետ, եղած էր իր ուսանողը եւ մօտէն ճանչցած էր մեր մեծ առաջնորդ-ոսուցիչ-դաստիարակը: Ընկ. Խ. Ծանոյեան մեր գաղութի, ՌԱԿ-ի, իրաքահայերու Միութեան եւ ԹՄՄ-ի ամենէն գործուն անդամներէն մէկն է, արժանացած Ս. Ներսէս Շնորհալի շքանշանի եւ ՀՀ Պատուաւոր քաղաքացիի կոչումին: Ան ձեռնհասօրէն ղեկավարեց հանդէսը՝ մէջընդմէջ յատկանշական դրուագներով հիւսելով իր խօսքը:

Բեմ հրաւիրուեցաւ օրուան գլխաւոր բանախօսներէն Հայկազի եւ Յորդանանի ՌԱԿ 25 տարիներու կարկառուն ղեկավար, ԹՄՄ եւ ՀԲԼՄ շրջանակներու գործուն ղեկավար Ընկ. Տոքթ. Գրիգոր Ատանալեան: Ան երիտասարդական վաղ



տարիներէն ճանչցած է Ընկ. Գերսամը որպէս կուսակցական ղեկավար, խմբագիր, դաստիարակ եւ երիտասարդութիւնը քաջալերող իմաստուն ղեկավար:

Մեր վաղ երիտասարդութեան հիացած էինք Ընկ. Գերսամով, ըսաւ ան, ապա ան եղաւ իմ գլխաւոր քաջալերողներէն մէկը: Եղաւ դաստիարակ, ուսուցիչ եւ մեր նմանները առաջ մղող իմաստուն ղեկավար մը: Ան միշտ ջատագովն էր նոր սերունդի եւ հաճոյքով կը գործակցէր նոր ուժերու հետ:



Այնուհետեւ Ընկ. Գ. Ատանալեան յատուկ շեշտով ընդգծեց Գերսամ Ահարոնեանի դերը Հայ դատի հետապնդման որակական փոփոխութեան մէջ: Իր շնորհիւ այլեւս Յեղասպանութեան տարելիցը դադարեցաւ միայն սգատօն մը ըլլալէ, այլ վերածուեցաւ կամ վերածեցաւ քաղաքական դատի եւ պահանջատիրութեան արժարժման: Անսպառնիլներ հաւաքած եւ միաժամանակ լաւատեղեակ ըլլալով հայոց պատմութեան ու ցեղասպանութեան ներքին ծալքերուն, Գ. Ահարոնեան ցոյց տուաւ դարուս առաջին ցեղասպանութեան ամբողջ տարողութիւնը եւ գայն հետապնդելու քաղաքական եւ իրաւական ճանապարհները: Այլ խօսքով ան քաղաքականացուց մեր հարցը եւ ծրագրեց անոր անցնելիք ճամբան:

Ընկ. Գերսամի մէջ խտացած էր միաժամանակ ե՛ւ կուսակցական գործիչը, ե՛ւ խմբագիրը, պատմաբանը, ուսուցիչն ու դաստիարակը: Ընկ. Գերսամ Հայ դատին տուաւ նոր տարագ եւ բովանդակութիւն, եզրակացուց բանախօսը:

Գերսամ Ահարոնեանի «Մեծ երազի ծամբուն վրայ»-էն բնորոշ ընթացումներով հանդէս եկաւ ՀԲԼՄ Մանուկեան-Տեմիրճեան վարժա-

Ռոմեն Կոզմոյեանի Յիշատակին

Չէի կրնար երեւակայել, որ 1999-ի Օգոստոսին տեղի ունեցած առաջին հանդիպում մը պիտի վերածուէր յարգալից սերտ բարեկամական կապի մը, որ դժբախտաբար պիտի ընդհատուէր Ապրիլ 12, 2022-ին, իր՝ Պրն. Ռոմեն Կոզմոյեանի մահով: Մահուանէ մէկ օր առաջ միայն, մեր հեռախօսագանգի ընթացքին, կը յուսադրէինք զիրար, որ կը տեսնուինք յառաջիկայ աշնան Երեւանի մէջ եւ անշուշտ Ձորաղբիւրի իր տան մէջ, որու հարեւանութեամբ հողատարածք մը գնած էի, հոն տուն մը կառուցելու մտադրութեամբ:

Ինչն էր, որ նպաստած էր մեր բարեկամութեան հաստատման: Մեր առաջին հանդիպումէն իսկ, երբ իմ ընտանիքի ութը անդամներով ժամանած էինք Երեւան, իր բարեհամբոյր ժպիտը, մեղմ ու հանդարտ խօսելաձեւը եւ ազնիւ անհատականութիւնը տպաւորած էին զիս: Յետագային, ասոնց վրայ պիտի աւելնար իր խօսքը գործով ապացուցելու, մեր առջեւ դրուած խնդիրները բարեսրտօրէն եւ խղճամտօրէն լուծելու, եւ որեւէ հարցի քննարկման ժամանակ իր ցուցաբերած մեծահոգի եւ անշահախնդրի մօտեցումը, որոնք անպայմանօրէն զինք կը վերածէին վստահելի անձնաւորութեան մը, որուն հետ արժէր բարեկամական սերտ կապեր հաստատել:

Անձնականէն անդին, այս կապի բարերար ազդեցութիւնը պիտի տարածուէր նաեւ մշակութային ոլորտի վրայ: Արդարեւ, իր շնորհիւ, Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը նախաձեռնեց հայրենի խոստմնալից պատանի տղաներու ելոյթներուն մեր այս ամբողջութեան վրայ, 2002, 2004 եւ 2006 տարիներուն: Անոնք որոնք ներկայ գտնուեցան այդ ելոյթներուն, կրնան վկայել այն վայելքն ու հպարտութիւնը, որ ապրեցան ի տես այդ պատանիներու հիանալի կատարումներուն: Իսկ պատանիներէն եկած վկայութիւնները հանդիսացան մեծագոյն վարձատրութիւնը մեզի, որ կարողացանք մեր նպաստը բերել անոնց անձնական թէ մշակութային վերելքին:

Անմոռանալի էին նաեւ ՆՍՄՄ-ի հիմնադրութեան 50-ամեակի նշումներուն շարքին 2005 թուականի Յունիս-Յուլիս ամիսներուն կատարուած երկշաբաթեայ շրջագայութիւնը Հայաստանի եւ Արցախի տարածքին, շնորհիւ Պրն.



Կոզմոյեանի կարգադրութիւններուն: Արդարեւ, մեր 40 հոգիներ խումբի տասնօրեայ խիտ յայտագիրը Երեւանէն մեզ տարաւ հարաւ՝ Մեղրի, արեւելք՝ Շուշի եւ Ստեփանակերտ, հիւսիս՝ Վանաձոր եւ Գիւմրի, արեւմուտք՝ Ախուրեանի Անիի հանդիպակաց տարածքը: Նոյնպիսի անմոռանալի վայելք մըն էր մեր 30 հոգիներ խումբի շրջագայութիւնը 2018-ի Յունիս-Յուլիս ամիսներուն, որ այս անգամ ընդգրկեց նաեւ Արեւմտեան Հայաստանի Կարս, Անի, Պայազխտ, Վան եւ Էրզրում քաղաքները:

Այս բոլորը իրականացան շնորհիւ Պրն. Կոզմոյեանի բարեսիրտ եւ անթերի կարգադրութիւններուն, որուն համար մենք երախտապարտ կը մնանք իրեն: Դժբախտաբար իր մահով թուղթի վրայ կը մնան կարգ մը այլ ծրագրեր, որոնք ընթացքի մէջ էին: Բայց այն ինչ որ կարողացանք իրագործել իր շնորհիւ, արդէն յիշատակելի վկայութիւն են մեծահոգի անձնաւորութեան մը աւանդին: Մեր եւ շատերու կեանքը հարստացաւ առընչուելով իր կեանքին հետ:

Իր հեղինակած «Իմ կեանքի հաւատամքը» գիրքի յառաջաբանին մէջ ան կը գրէր. «Ո՛ւր գնամ հիմա, որ մայրամուտս ոչ թէ ուշանայ, այլ իջնի հատու, ու մեծ պոետի (Պարոյր Սեւակ) խօսքերով ասած, գայ անսպասելի ու միանգամից»: Այդպէս ալ եղաւ ու անսպասելիօրէն ան մտաւ մայրամուտ: Իր յիշատակը մշտապես վառ պիտի մնայ իր բարեկամութիւնը վայելած անձերու սրտերուն մէջ:

Յարութ Տէր Դաւիթեան

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Name: -----

Address: -----


City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email: -----

Ցեղասպանութեան Մասին 1939 Թ. Յիշատակումները Թուրքիոյ Պետական Արխիւներու Մէջ



ՍԱԽԹ ԶԵԹԻՆՕՂԼՈՒ

Հայերը առաջին իսկ օրէն երբեք չեն մոռացած 20-րդ դարի առաջին ամենամեծ ցեղասպանութիւնը եւ անոր զոհ դարձած իրենց եղբայրները: Որոշ աղբիւրներու համաձայն՝ ցեղասպանութեան զոհերուն նուիրուած առաջին յուշարձանը կառուցուած էր աշխարհամարտի աւարտէն անմիջապէս ետք, 1919 թուականին, Իսթանպուլի մէջ (թէեւ այդ յուշարձանէն հետք անգամ չէ մնացած): Միեւնոյն ժամանակ ձգտած են ամէն պատեհ առիթով պատմել հայ ժողովրդի գլխուն եկածներու մասին, սակայն տուեալ դարաշրջանի ոչ ալ փոլիթիկը թոյլ չէ տուած, որ այդ ճիշդերը լսելի դառնան:

Ինչպէս որ հայերը չէին մոռանար ցեղասպանութեան մասին, նոյն յամառութեամբ ալ անոնց զուգահեռաբար հետեւող մի ուժ կար՝ Թուրքիոյ պետութիւնը: Պետութիւնը, որ երբեք չմոռցաւ ցեղասպանութեան պատահարող մնացածները եւ անոնց զաւակները: Չափազանցած չենք ըլլար, եթէ ըսենք, որ պետութիւնը ամենուր եւ ամէն պահ հետեւած է հայերուն, մինչեւ իսկ նախկին ներքին գործերու նախարարի մը խօսքով՝ «նոյնիսկ անընդհատ ունկնդրեցինք հայերու սրտի զարկերը»: Նմանապէս չափազանցած չենք ըլլար, եթէ նշենք, որ Թուրքիոյ Ներքին Գործոց Նախարարութեան արխիւը լեցուն է անոր մասին դեպքաններու եւ հիւպատոսներու ներկայացուցած փաստաթուղթերով:

Ընդհանրապէս ընդունուած է, որ Հայոց ցեղասպանութեան զոհերը յիշատակելու աւանդոյթը սկսած է 1915 թուականի 50-րդ տարելիցին, այսինքն՝ 1965 թուականին: Մենք, սակայն, Թուրքական պետութեան զեկոյցներէն կը տեղեկանանք, որ այդ աւանդոյթը շատ աւելի հին է:

Հայերը ինչպէս որ ի սկզբանէ սկսած են ցեղասպանութեան զոհ դացած իրենց եղբայրներու յիշատակին նուիրուած յուշարձան կառուցել, նմանապէս դեռ հնուց զոհերու յիշատակի օր որոշած են եւ աւանդոյթ դարձցուցած զոհերուն ոգեկոչելը: 1939 թ. Ապրիլի 14-ին Պէյրութի դեսպանութեան՝ «անձամբ» գրութեամբ զեկոյցէն կը տեղեկանանք, որ հայերը ցանկա-

ցած են իսթանպուլի մէջ եղած յուշարձանի նման յուշարձան մը կառուցել այնտեղ. «Արդէն իսկ աւանդոյթի վերածուած էր Համաշխարհային պատերազմի ժամանակ մահացած հայերու համար ամէն տարի Ապրիլի 24-ին Լիբանանի մէջ հայերու կողմէ կրօնական արարողութիւն կատարելը եւ այդ թեմայով ելոյթներ ու ցոյցեր կազմակերպելով՝ Թուրքիոյ դէմ ուղղուած խօսքեր արտայայտելը: Իմ ձեռք բերած տեղեկութիւններու համաձայն՝ այս տարի այդ ամենուն աւելացած են Անթիլիաս անուամբ մի լիբանանեան գիւղի, Սուրիոյ, Տէր Զօրի եւ ձեզիրէի մէջ մահացած հայերուն պատկանող ոսկորները թաղելու արարողութիւնը եւ այդ զերեզմաններու վրայ յուշարձանի մը կառուցումը, ինչպէս նաեւ՝ զանազան շրջաններէն եկող հայերու մասնակցութեամբ մեծ միջոցառումներու անցկացումը, որոնց ընթացքին կը հնչեն Թուրքիոյ դէմ ուղղուած թշնամական ելոյթներ: Այդ ուղղութեամբ նախապատրաստական եւ կազմակերպչական աշխատանքները կը ղեկավարուին Հայ Առաքելական Եկեղեցոյ կաթողիկոսի օգնական Սարճեանի (նկատի ունի 1939 թ.

վախճանուած Անթիլիասի Սահակ Բ. կաթողիկոսի փոխարինած ընդհանուր փոխանորդ Պետրոս Սարճեանին-Ակունքի խմբ.) հսկողութեան տակ գտնուող հայկական կոմիտէի մը կողմէ»:

Հարկ չկայնչելու, որ Թուրքիոյ արտակարգ եւ լիազօր դեսպանը անմիջապէս անվտանգութեան կը դիմէր՝ այդ յիշատակի արարողութիւններուն եւ յուշարձանի կառուցմանը արգելք ըլլալու համար: Որպէս ռեֆլեքս՝ ան շունչը կ'առնէր Գերագոյն կոմիտարութիւնի մէջ՝ դրութեան մասին այն ժամանակուայ մանդատային իշխանութեանը հաղորդելով:

Տամասկոսի հիւպատոսութիւնը եւս 1939 թ. Մայիսի 4-ին յղուած իր գրութեան մէջ կը հաղորդէր, որ յիշատակի արարողութիւնը իրականացուած է Լիբանանի Ներքին Գործոց Նախարարի նախագահութեան ներքոյ, եւ որ Մայիսի 6-ին զոհերու յիշատակը յարգելու համար նախկին տարիներու համեմատ աւելի աքթիֆ պատրաստութիւն կը տեսնէին: Սոյն զեկոյցով նաեւ կը հասկցուի, որ հիւպատոս Հուման Մենեմենճիօղլուն ակնդէտ կը հետեւէր իրավիճակին:

«Քանի մը օր առաջ Համաշխարհային պատերազմի ժամանակ Անատոլիայի մէջ կատարուած հայկական փոխադարձ կոտորածի տարելիցի արարողութիւնը իրականացուցին Պէյրութի մէջ, ինչպէս նախապէս ալ յայտնած էի, Լիբանանի Ներքին Գործոց Նախարարի ղեկավարութեան ներքեւ: Հիմա ալ թէ՛ Լիբանանի մէջ, թէ՛ Սուրիոյ մէջ նախկին տարիներու համեմատ աւելի աքթիֆ կերպով կը նախապատրաստուին «Մայիսի 6-ի զոհերու» տարելիցի արարողութեան համար:

Սուրիոյ վարչապետ Նասուհ պէյ Ալ-Պուհարին երեկ երեկոյեան կողմ եկաւ հիւպատոսարան եւ ժամ մը մնաց այստեղ: Արտգործ նախարար Հալիդ պէյ Ալ-Ազիմն ալ քանի որ կ'ուղեկցէր անոր, մեր խօսակցութիւնը ընդհանուր թեմաներու շուրջ եղաւ, եւ երկուստեք խուսափեցանք քաղաքական շփումէն:

Խորին յարգանքներով»:

Պէյրութի գլխաւոր հիւպատոսութեան կողմէ յղուած առաջին գրութիւնը յաւելեալ ուղարկուած զեկոյցին, որը կը թուագրուի 1939 թ. Մայիսի 10-ի ամսաթուով, կը հաղորդուի, որ թէեւ յիշատակի արարողութիւնը իրականացուած է, սակայն յուշարձանի կառուցումը՝ ոչ:

«Իրականացուած հետաքննութեան համաձայն՝ Ապրիլի 24-ին Սուրիոյ եւ Լիբանանի զանազան շրջաններէն եկած հայերու մասնակցութեամբ Անթիլիասի մէջ տեղադրուելիք յուշակոթողի կառուցումը չեղարկուած է, եւ անոր կապակցութիւնով նախատեսուող ելոյթները ու ցոյցերը եւս տեղի չեն ունեցած:

Ապրիլի 24-ին բաւարարուած են Լիբանանի զանազան հայկական եկեղեցիներուն Համաշխարհային պատերազմի զոհերու համար կրօնական արարողութիւններ անցկացնելով: Թէեւ 1-2 տեղական հայկական թերթերուն մէջ հաղորդուած էր, թէ այդ արարողութիւններէն մէկուն մասնակցած են մինչեւ իսկ ելոյթով հանդէս եկած է Լիբանանի Ներքին Գործերու Նախարար Հապիֆ Աբի Շահլան, սակայն մեր կողմէ կատարուած հետաքննութիւնը ցոյց տուած է, որ Լիբանանի կառավարութեանն ոչ մի պաշտօնական ներկայացուցիչ ներկայ չէ գտնուած վերոյիշեալ կրօնական արարողութեան:

Այդ գործի մէջ Գերագոյն կոմիտարութեան կողմէ մեր ազդեցութեան արդիւնքին ձեռնարկուած կանխարգելիչ միջոցներու շնորհիւ դաշնակցականները վիրաւորուած են ֆրանսացիներէն՝ եւ կրօնական արարողութիւնէն ետք վերոնշեալ կոմիտարութեան ղեկավարներէն կոմս դը Լյոսը կաթողիկոսի ընդհանուր փոխանորդ Սարճեանին անձամբ այցելելով՝ աշխատած է ձեռնարկուած միջոցները քաղաքականապէս հիմնաւորած եւ իր բարեկամութեան մասին հաւաստիացումներ տալով՝ ձգտած է սիրաշահիլ անոր:

Շար.ը էջ 18

The City of Glendale invites you to the

Annual Armenian Genocide Commemorative Event

THE ALEX THEATRE
216 N Brand Blvd, Glendale, CA 91203

SUNDAY, APRIL 24, 2022 • 7:00 P.M.

The program will feature the work of Komitas through intricate dance and musical performances curated by the Lark Musical Society.

Tickets required for entry. Tickets are free; limit 4 tickets per transaction. Assigned seating. For more information, call (818) 548-4844, option 8.

Reserve tickets online:
www.itsmyseat.com/april24

Համազգային Չարթունք՝ 1965 Թուական (Քննական փորձ՝ Յիշողութեան Բովում)

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Հայ ժողովրդի վերջին երկու-երեք սերունդը գիտի թէ ինչ ասել է Հայ ժողովրդի Յեղասպանութիւն եւ կամ Հայոց Մեծ Եղեռն: Գիտի նաեւ, որ աշխարհի բազմաթիւ երկրներ, վերջինը մէկ տարի առաջ Միացեալ Նահանգները կողմից, ճանաչել են Հայոց Յեղասպանութիւնը՝ որպէս 20-րդ դարի թրջական կառավարութեան կողմից նախապէս նպատակային ու չարամիտ ծրագրաւորմամբ իրագործուած մեծագոյն ոճրագործութիւն:

Ներկայ սերնդին, կամ էլ այդ օրը Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երեւանից բացակայ եղող որեւէ հայի եթէ ասես, բացատրես թէ ինչ ասել է 1965 թուականի Ապրիլի 24՝ միեւնոյնն է չի հասկանայ: Չի հասկանայ, որովհետեւ չի ապրել այն ամէնով, ինչ մենք ապրել ու մասնակից ենք եղել համաժողովրդական զանգուածային այն հակայ ցոյցին, որի շնորհիւ մի նոր դարաշրջան բացուեց Հայ ժողովրդի պահանջատիրութիւնը գործի վերածելու ուղղութեան մէջ:

Դա Մեծ Եղեռնի յիշատակման առաջին համաժողովրդական սգատօնն էր, Յեղասպանութեան ճանաչման համազգային պայքարի առաջին ճիշդ խորհրդային երկրի ողջ պատմութեան ընթացքում:

Համաժողովրդական այդ ցոյցին մասնակցել է կէս միլիոն մարդ: Մէկ ամբողջ օր Լենինի անունը կրող հրապարակ (այսօր Անկախութեան Հրապարակ) հնչում էին կոչեր, բողոքի արտայայտութիւններ՝ ուղղուած խորհրդային երկրի իշխանութիւններին՝ ճանաչելու թուրքիայի կողմից 1915 թուականի Ապրիլի 24-ին իրականացուած հայերի ցեղասպանութեան փաստը եւ ըստ այնմ էլ մայրաքաղաք Երեւանում կանգնեցնել 1915-23 թուականներին թուրքերի կողմից անգթաբար գոհուած երկու միլիոն հայերի յիշատակը յաւերժացնող յուշակոթող:

Հազարաւոր ցուցարարներ, կարմիր դրոշներ պարզած, «Մեր հողերը, մեր հողերը» վանկարկումով պահանջում էին վերադարձնել թուրքիայի տարածքում գտնուող, հայերին պատկանող ոչ միայն Արեւմտեան Հայաստանը, այլեւ Ղարաբաղն ու Նախիջևանը:

Յեղասպանութեան (GENOCIDE) համաշխարհային ճանաչման համար մղուող պայքարը աւելի քան յիսունհինգ տարիներ յետոյ էլ պահանջներ է իր ալթիմէականութիւնը: Հայաստանի եւ Սփիւռքի ողջ հայութեան անդուլ պայքարի շնորհիւ մեզ յաջողուեց ձեռք բերել Ազատ, Անկախ Ղարաբաղի հանրապետութիւն եւ Եղեռնի գոհերի յիշատակը յաւերժացնող անգերազանցելի մի յուշակոթող Երեւանի Ծիծեռնակաբերդ կոչուող բլրի վրայ:

Իրականում, մեր ազգի Յեղասպանութիւնը (GENOCIDE) սկսուել է աւելի վաղ, տեղային, բնակավայրի տեսքով, որոնց թուում են՝ Սասունի հերոսամարտը (1894), Չէլթուրի սպանումը (1895), եւ, անշուշտ՝ 1909-ի Ադանայի կոտորածը, որին գոհ գնացին 300 հազար հայորդիներ, նոյնքան եւ աւելի՝ թուրքական բանակում, թշնամու դէմ կռուող հայ զինուորներ:

Ուրեմն, այս կարգի ոճրագործութիւնը պիտի անուանել Կոտորած, Չարդ, կամ՝ Եղեռն, բայց ոչ Մեծ Եղեռն կամ էլ՝ Յեղասպանու-

թիւն, որը գալու էր յետոյ՝ 1915-ին: Այդ թուականին թուրքերի Հանրապետութեան կողմից նախապէս ծրագրուած հայերի Չարդի, կոտորածի, երկրի ողջ տարածքից միլիոնաւոր հայերի մաքրագործման արդիւնքում է, որ ՄԱԿ-ը 1948 թուականին, ի թիւս այլ ցեղասպանական արարքների, այդ ոճիրն համարեց Յեղասպանութիւն:

Յեղասպանութեան արդիւնքում հայերը զրկուեցին իրենց հայրենի հողից ու ցիրուցան եղան աշխարհի տարբեր հորիզոնականներում՝ առաջ բերելով ՍՓԻԻՌ-ը (Արտերկիր) տերմինը հայերէն լեզուի մէջ: Այդ առթիւ վանեցի Չարենցը պիտի գրեր՝

ՀԱՅԸ...

Որ վաղո՞ւց իր հողից հեռու՝ եւ դարեր առաջ, եւ հիմա՞ Բշուել է տաշեղի ցմաց Աշխարհի բոլոր բացերում:

Ամէն տարի, քաղիւնայն այս օրերին միշտ մտածել եմ, թէ ո՞վ է եղել այն առաջին անհատը, եզակին, որի մտապատկերում է ծագել համազգային վշտի, ցաւի օր հիմնել իւրաքանչիւր տարի նշելու համար Հայոց Մեծ Եղեռնը: Ժրջան փնտռուողները արդիւնքում ինձ յաջողուեց յայտնաբերել արձակագիր Արամ Յովհաննիսեանի «Սգոյ իրաւունքի կնճառ ընթացքը» աւելի քան ծաւալուն յօդուածը՝ տպագրուած Հայաստանի «Առաւօտ» թերթի 2013 թ. Ապրիլ 23-ի համարում:

Պարզուում է, որ 1920 թուականի Մարտի 25-ին, մահուանից մէկ ամիս առաջ, մեծանուն գրող, հասարակական գործիչ Վրթանէս Փափագեանն է երկնել իրեն անամա հացնող մի՝ գաղափար, որն անմիջականորէն կապ ունի Հայ ժողովրդի մեծագոյն ողբերգութեան, Յեղասպանութեան պատմութեան սկզբնաւորման ու շարունակական ընթացքի հետ: Այդ օրը Վարդաշապատի (Էջմիածին) միջնակարգ դպրոցի տեսուչ Վրթանէս Փափագեանը միեւնոյն բովանդակութեամբ երեք նամակ է գրում: Առաջինն ուղարկում է Վեհափառ Հայրապետին, երկրորդը՝ Հայաստանի Առաջին Հանրապետութեան խորհրդարանին, իսկ երրորդը՝ Կրթութեան եւ Արուեստի նախարարին՝ վերջիններին յիշեցնելով Երիտթուրքերի կողմից Հայ ժողովրդի նկատմամբ իրագործած հրէշաւոր ոճրագործութիւնների, ի մասնաւորի 1915 թուականի մէկուկէս միլիոն հայերի կոտորածի մասին: Փափագեանի յուշագիրը անհետեւեւ չի մնում: Խորհրդարանը համապատասխան օրինագծով որոշում է Ապրիլի 24-ը համարել որպէս Համազգային Սգի ոչ աշխատանքային օր: Խորհրդարանի որոշումն անմիջապէս թեւեր է առնում:

1920 թուականի Ապրիլի 24-ին, առաջին անգամ Հայաստանի Հանրապետութեան ողջ տարածքում կանգ է առնում առօրեայ կեանքը: Փակուում են բոլոր գործատեղիները, ուսումնական հաստատութիւնները, առեւտրական ընկերութիւններն ու խանութները: Կազմակերպուում են բիրտաւոր գոհերին նուիրուած սօց հանդէսներ, հնչում են Հանրապետութեան բոլոր եկեղեցիների գանգերը: Եկեղեցիներում Եղեռնի գոհերի յիշատակին նուիրուած հոգեհանգստեան պատարագ են մատուցուում:

Նոյն թուականի Նոյեմբերի 29-ին Ռուսական Բոլշեւիզմը վերջ

է տալիս Հայաստանի անկախութեանը: Ահա թէ ինչ է գրում արձակագիր Արամ Յովհաննիսեանը այդ կապակցութեամբ:

«Երկրի խորհրդայնացումից յետոյ բոլշեւիկները լուրթեան պատկառուցեցին թեմայի (Եղեռնի մասին է խօսքը, - Հեն. Ա.) վրայ. Արգելուում էր ոչ միայն կոտորածների մասին գրել, յիշատակելը, այլեւ «բարեկամ» թուրքիային խեթ նայելը, նրա հասցէին թիւ խօսք ասելը: Հայոց հոգեւոր դասը, չնայած բռնութեանն ու արգելքներին, ամէն Ապրիլի 24-ին Մայր Տաճարում ու դեռեւս չգոցուած եկեղեցիներում ի յիշատակ գոհերի, պատարագ էր մատուցուում»:

Սովետական Հայաստանի առաջին մի քանի տարին, նոր հասարակարգ ստեղծելու դժուարին գործին մոլեռանդօրէն լծուած իշխանութիւնները առժամաբար աչքաթող էին արել Էջմիածնի Մայր Տաճարում եւ մնացեալ եկեղեցիներում իւրաքանչիւր տարուայ Ապրիլի 24-ին իրականացուող Յեղասպանութեան գոհերի յիշատակին նուիրուած հոգեհանգստեան պատարագի անցկացման փաստը:

Սակայն պիտի գար ժամանակը, որպէսզի Կոմունիստական Հայաստանի կառավարութիւնը վերջնականապէս արգելէր թէ՛ Յեղասպանութեան յիշատակումը եւ թէ՛ եկեղեցիներում հոգեհանգստեան պատարագ մատուցելը: Նման դաժան, անմարդկային որոշման առնչութեամբ ահա թէ ինչ է գրում Արամ Յովհաննիսեանը, - «Գրող, հրապարակախոս Վարդգէս Պետրոսեանի պատկերաւոր բնութագրմամբ՝ մեզ գրկեցին անգամ «տիրեւութիւնները»:

Վերից եկած հրամանով, 1930-ական թուականներից սկսեալ, ողջ խորհրդային հանրապետութիւններում բռնաճնշումներ էին միասին սկսեցին քանդել ճարտարապետական առումով մեծարժէք եկեղեցիներ ու շատ անգամ էլ դրանք վերածեցին կոլխոզային պահեստների եւ կամ՝ սովորական աղբատեղի:

Այսօրուայ պէս աչքիս առջեւ է Երեւանի՝ ներկայիս Ամիրեան փողոցի վրայ գտնուող Չարենցի անուան դպրոցի տեղում կառուցուած եկեղեցին, ուր ամէն Կիրակի մայրիկիս հետ ներկայ էինք լինում Սուրբ Պատարագին, մինչ այդ գրեթէ մէկ ժամ քայլած լինելով Արաբկիրից կենտրոն հասնելու համար: «Հայր Մեր»-ը եւ անգիր գիտէի 3-4 տարեկան հասակից, որն ամէն գիշեր Յիսուսի պատկերի առջեւ աղօթում էինք մայրս, եղբայրս եւ ես՝ ինդրելով Աստուծոն մեր հայրիկին ողջ եւ առողջ վերադարձնել պատերազմից:

Կոմունիստների կողմից Եկեղեցու եւ հաւատքի հանդէպ լայնամշտաբ ճնշման արդիւնքում հասարակութեանը պարտադրուեց ԱԹԵԻՉՄ (Աստուծոյ գոյութեան մերժում) ուսմունքը, որը որպէս պարտադիր առարկայ մտցուեց բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների ուսումնական ծրագրերի մէջ: Նոյնը՝ Կոմիտասի անուան պետական երաժշտանոցում, ուր Աթեհիզմի հետ միասին դասաւանդուում էր արուեստի, երաժշտութեան հետ բնաւ կապ չունեցող Քաղտնեսութիւն, Գիտական Կոմունիզմ առարկաները:

Իրաւամբ պիտի ընդունել, որ Յեղասպանութեան հարցը Հայաս-

տանի բնիկ բնակչութեանը հասու դարձնելու գործում չափազանց մեծ է 1946-47 թ.թ. Հայրենիք ներգաղթած սփիւռքահայերի դէրը: Իւրաքանչիւր սփիւռքահայ, տարիքով մեծ թէ՛ փոքր, ի տարբերութիւն բնիկ հայաստանցու, լաւագոյն տեղեակ էր Մեծ Եղեռնի պատմութեանը, որը աւելի կամ պակաս չափով հայաստանցին հասկացաւ թէ ինչի արդիւնքում են այդքան մեծաթիւ հայեր յայտնուել օտարութեան մէջ:

Հայաստանցիների համար: «Եղեռն» բառը նորութիւն էր: Շատեր «Եղեռնը» շփոթում էին «Եղեռնու» հետ ու զարմացած հարցնում, թէ ի՞նչ կապ ունի Եղեռնին մեր ժողովրդի կոտորածի հետ:

Անշուշտ Երեւանում չէին պակասում մեծաթիւ գրող-մտաւորականներ եւ Հայաստանի խորհրդայնացումից յետոյ օտարութեան մէջ գտնուող հայրենիք վերադարձած գրողներ, արուեստագէտներ, որոնք իրենց գործերում փորձում էին արծարծել Յեղասպանութեան յիշատակումը: Եւ այդ փորձը փորձանք բերեց նրանց գլխին:

Գրեթէ տաս տարի հալածուեցին ազգայնամոլ յորջորջուած գրողներ Եղիշ Չարենցը, Վահան Թոթովենցը, Ակսել Բակունցը Չապէլ Եսայեանը, Գուրգէն Մահարին, Վահրամ Ալազանը, Վաղարշակ Նորենցը եւ բազմաթիւ մտաւորականներ, որոնք ժամանակի ընթացքում կոտանքների ենթարկուեցին ԿԵԲ-ի կողմից: Շատերն աքսորուեցին Սիբիր, ոմանց էլ գնդակահարեցին:

Չնայած այս ամէնին, պիտի գար լոյսը, պիտի բացուէր արշալոյսը: Ստալինի մահից եւ մարդկային տակաւն ու ճիւղերի բերիայի գնդակահարումից յետոյ:

Ողջ սովետական ժողովուրդը ազատօրէն շունչ քաշեց:

Այնժամ անհրաժեշտ էր, որպէսզի Հայաստանը ունենար լայնախոհ, բանիմաց մի ղեկավար, որը կարողանար անհերքելի, փաստացի տուեալներով ապացուցել, որ թուրքերը 1915 թուականի Ապրիլի 24-ին սկսել են հայերի մաքրագործումը իրենց պապենական հողերից, ըստ որի այդ՝ նախապէս ծրագրուած նախճիրի առաջին օրը՝ Ապրիլի 24-ը պիտի համարուի 1,5 միլիոն հայերի նահատակման յիշատակի օր:

Եւ այդ ղեկավարը լուրջ քաղաքագէտ, մեծ հայրենասէր, հայասէր Եակով (Յակոբ) Չարոբեանն էր, որ անվերապահ, անմնացորդ սէր էր վայելում ողջ հայութեան մէջ:

Մեծ Եղեռնի յիշատակուման օր հաստատելու մասին ահա թէ ինչ է գրում Արամ Յովհաննիսեանը՝ «1964 թ. Դէկտեմբերի 13-ին Չարոբեանը պաշտօնապէս դիմում է խորհրդային Միութեան Կենտկոմին եւ, ներկայացնելով 1915-ին թուրքերի կողմից հայերի հանդէպ գործադրուած ոճրագործութիւնը, թոյլատուութիւն խնդրում Եղեռնի 50-րդ տարելիցը խորհրդային Հայաստանում նշելու, մամուլում եւ ռադիոյով նիւթեր հրապարակելու, Երեւանում նահատակներին նուիրուած յուշակոթող կանգնեցնելու»:

Հայ եւ օտար պատմաբանների, Եղեռնին նուիրուած գրքերի, մեծաթիւ լուսանկարների անհերքելի ապացոյցների լոյսի տակ, Մոսկուան թոյլատրում է նշել Յեղասպանութեան տարելիցը:

Համազգային Չարթունք՝ 1965 Թուական

Շարունակում է 9-էն

Մէջտեղ է գալիս երջանկալի-
շատակ, իմ որակումով՝ 20-րդ դարի
նորմեան Հայրիկ Վազգէն Վեհա-
փառը հետեւեալ կոնդակով:

- Բոլոր հայ եկեղեցական հա-
մայնքներուն եւ գաղութներուն մէջ
անխոր, բոլոր հայկական միու-
թեանց համերաշխ գործակցութեամբ
կազմակերպուին համազգային յուշի
եւ յարգանքի հանդիսաւոր հաւա-
քոյթներ, իրենց ՍԵՊՈՒՀ (Ապետա-
կան,- Հէն. Ա.) պարտքը համարեն
խօսքով ու գործով ոգեկոչելու նու-
րակններին մարտիրոսացած (Մահա-
նալ՝ գաղափարի սիրոյն,- Հէն. Ա.) Հայ
ժողովուրդին: 13-ը Մարտի, 1965:

Այժմ ես ցանկանում եմ որպէս
1965 թուականի Ապրիլի 24-ի Երե-
ւանում իրականացուած համաժո-
ղովրդական ցոյցի անմիջական մաս-
նակից, ընթերցողին ներկայացնել
որոշ մանրամասնութիւններ այդ
փառալոյս միջոցառումից:

Կառավարութիւնը որոշել էր
Մեծ Եղեռնին նուիրուած հանդի-
սութիւններ անցկացնել Ակադեմի-
ալում, գիտական հիմնարկներում
եւ ի լրումն այդ ամէնի, սգատօն
աւարտել կառավարութեան ղեկա-
վարների անմիջական մասնակցու-
թեամբ՝ Օպերային թատրոնում:
Սակայն, միամտաբար, թէ յատուկ
մտածուած ծրագրով, հաշուի չէր
առնուած ժողովրդի ներկայութիւնը,
որի գործօն անձինք իրենց հիմ-
նարկներում, ուսումնական հաստա-
տութիւններում օրեր առաջ յատուկ
աշխատանք էին ծաւալել աշխատող-
ների եւ ուսանողների ներկայու-
թիւնը ապահովելու համար Համազ-
գային այդ միջոցառումները: Յակ-
ուած եմ այն իրողութեանը, որ
իշխանութիւնները շատ լաւ էլ գի-
տէին, որ ժողովուրդը ինքնաբուխ
կերպով լցուելու էր քաղաքի փողոց-
ներն ու հրապարակները:

Առաւօտ փող, այսօրուայ Հան-
րապետութեան հրապարակում, մի
քանի հազար մարդ էր հաւաքուել:
Որքան առաջ են գնում ժամացոյցի
սլաքները՝ այնքան մարդաշատ է
դառնում հրապարակը: Ոստիկան-
ները բնաւ չեն միջամտում: Հնարա-
ւոր անկարգութիւնները կանխելու
նպատակով, հրապարակ են շտա-
պում Երեւանի կառավարական ան-
դամները, Ակադեմիայի նախագահ
Վիկտոր Համբարձումեանը, որոնք
հանդարտութեան կոչեր են հնչեց-
րել: Ելոյթ են ունեցել գրողներ
էդուարդ Թովչեանն ու Սերո խան-
գաղեանը: Քոչինեանին է փոխանց-
ուել յատուկ նամակ, նախորդ տար-
ուայ Օգոստոսին ձերբակալուած 7
քաղաքացիներին ազատ ար-
ձակելու ինդրանքով:

Կէսօրին 40 հազարի համող
բազմութիւնը շարժում է դէպի
Կոմիտասի այգի (Պանթէոն)՝ Յե-
ղասպանութեան ամենամեծ գոհի-
միտասի շիրիմի առջեւ խնկարկե-
լու եւ հսկայ ծաղկեպսակ դնելու
նրա շիրիմին: Բազմութիւնը գնա-
լով համալրում է նոր մարդկան-
ցով: Կրկեսից մինչեւ այգի, ճանա-
պարհին եղող բոլոր գործարաննե-
րից ու հիմնարկներից մարդիկ
թողնում են աշխատանքը ու միա-
նում հսկայ բազմութեանը:

Ամբողջ քայլարշաւի ընթաց-
քին ժողովրդի կողմից ոչ մի ան-
կարգութիւն, անվայել արարք չի
նկատուել: Ոչ մի թուփ, ծաղիկ կամ
խոտ՝ չի տրորուել: Ոչ մի գողու-
թիւն կամ վատ արարք չի գրանց-

ուել ոստիկանութիւնում: Իրաւա-
պահ մարմինները ոչնչով չեն խան-
գարել ժողովրդին՝ բարձրաձայնե-
լու պահանջատիրութեան կոչեր
հնչեցնելուն: Հարիւրաւոր պատաս-
ներ բռնած, «Հողերը՝, հողերը՝»,
«Ազատել 7 քաղաքացիներին»
եւ այլ կոչերով հսկայ թափորը
հասնում է քաղաքային Պանթէոն:
Այգում ասեղ գցելու տեղ չկայ:
Ելոյթներ, ճառեր, Եղեռնին նուիր-
ուած նորովի բանաստեղծութիւն-
ներ: Արտասանուում են Սիաման-
թոյի, Վարուժանի, Շիրազի՝ օրուայ
խորհուրդին համապատասխան բա-
նաստեղծութիւններ: Ելոյթ են ու-
նենում բանաստեղծուհի Սիլվա Կա-
պուտիկեանը, Պարոյր Սեւակը եւ,
ինչպէս յետոյ իմացայ, նաեւ դերա-
սան Արման Կոթիկեանը:

Ես այդ օրը պարտադրուած
աշխատանքի մէջ էի: Պիտի հսկէի
օպերային թատրոնում կայանալիք
երեկոյի ընթացքը ռադիոյով ժո-
ղովրդին փոխանցելու գործողութեանը
եւ պարտաւոր էի ժամը չորսին լինել
թատրոնում, ուր տեղի էր ունենալու
իշխանութիւնների կողմից որոշուած
կառավարական հանդիսաւոր միջո-
ցառում՝ նուիրուած 1915 թուականին
Եղեռնին զոհ գնացած մէկուկէս միլի-
ոն զոհերի յիշատակին: Երթեկու-
թեան իսպառ բացակայութեան պատ-
ճառով ստիպուած եղայ քայլելով
հասնել թատրոն:

Օպերային թատրոնի արտիս-
տական մուտքը խստագոյնս հսկուում
էր պատկան մարմինների կողմից:
KGB-ի գործակալ, արուեստագէտ-
ների գործունէութեանը հետեւող
Գեհան լաւ էր ճանաչում ինձ եւ ես
նրա ձեռքի շարժումին ենթակայ,
առանց փաստաթուղթ ներկայացնե-
լու գնացի բեմ՝ ուր ռադիոյի մեր
տղաները գրադուած էին միկրոֆոն-
ներ տեղադրելով:

Եւ, որովհետեւ բաւական ժա-
մանակ կար միջոցառման սկսելուն,
դուրս ելայ շէնքից ու գնացի առջե-
ւի հրապարակ: Աստուած իմ՝ այս
ո՞րքան ժողովուրդ: Խառնաշփոթ
իրավիճակ, կարծես թէ ամբողջ
օրուայ խաղող ցոյցի մասնակիցները
չլինէին: Մարդիկ ցանկանում էին
սրահ մտնել, իսկ դռները փակ էին:
Հանդիսաւոր ժողովի բոլոր մասնա-
կիցները յատուկ անցագրերով ար-
տիստական մուտքից էին սրահ մտել:

Երկրորդ անգամ թատրոն
մտնելը շատ դժուարացաւ: Արտիս-
տական մուտքին չհասած, քսան
մետրի վրայ երկու շարքով ոստի-
կաններ էին շարուած ու իւրաքան-
չիւր անձ, հրակէր ձեռքին պիտի
անցնէր ոստիկանական երկու շարքի
միջով՝ մինչեւ մուտքին հասնելը:
Գնդապետի կոչումով գինուորակա-
նին ասում, բացատրում եմ, որ ես
աշխատանքի մէջ եմ եւ, որ իմ
անունը մուտքին է՝ օգուտ չունի:
Վերջապէս օգնութեան հասաւ ամէ-
նակարող Գեհան:

Հագիւ էին կառավարութեան
բոլոր անդամները շարուել բեմի
երկարաւուն «սեղանի» ետին, մէկ
էլ, ահաւոր արմուկով մի հսկայ
բազմութիւն սրահ ներխուժեց պար-
տերի վերին մասի գոյգ դռներից:
Ապահովութեան առումով բե-
մը սրահից բաժանող այսպէս կոչ-
ուած «երկաթեայ վարագոյր» գո-
յութիւն ունի, որն իջեցուած է
արտակարգ դէպքերի ժամանակ
(հրդեհ, դահլիճում իրարանցում,
խռովութեան փորձ եւն.):

Խնդրեմ, ահա մի նմանօրինակ
իրավիճակ, եւ հարկաւոր է դրա
դէմն առնել: Անմիջապէս իջեցուց

«երկաթեայ վարագոյր»ը: Կառա-
վարութեան բոլոր անդամները լքե-
ցին իրենց աթոռները եւ յայտնուե-
ցին բեմի ետեւում:

Յայտնի դարձաւ, որ օպերային
թատրոնի մուտքին, մի խումբ երի-
տասարդներ պահանջել են թոյլ տալ
մտնել սրահ եւ նախագահութեանը
յանձնել ինչ որ մի անյայտ խմբա-
ւորման պահանջագիրը, որը իրենց
պահանջով, ի լուր աշխարհի պիտի
ընթերցուէր ամբիոնից:

Հանդիպելով դիմադրութեան,
գայրացած ամբոխը մեծագոյն
դժուարութեամբ կոտրել էր թատ-
րոնի մուտքի դուռն ու ապակիները
եւ մտել սրահ: Ես հագիւ երկու քայլ
հեռաւորութեան վրայ էի Կուսակ-
ցութեան առաջին քարտուղար Ես-
կով Զարոբեանից եւ ամէն ինչ լսում
էի ինչ որ զեկուցում էին իրեն:

Մէկ էլ նրան մոտեցաւ Գերա-
գոյն Սովետի նախագահ Յովհաննէս
Բաղդասարեանը եւ ասաց.

- Ի՞նչ էք ասում Եսկով Նիկի-
տիչ, կրակ չբացե՞ք ամբոխի վրայ:

- Ի՞նչ... կրակ բացել սեփական
ժողովրդի վրա՞նք...,- աչքերը սեւե-
ռելով դիմացինի աչքերի մէջ, ասաց
Հանրապետութեան Առաջին դէմքը
ու ձեռքը թափ տալով հեռացաւ:

Այնուհետեւ, որքան մարդ կար
բեմի վրայ՝ բոլորին տարան օպերա-
յին թատրոնի տնօրէն, կոմպոզիտոր
էդգար Յովհաննիսեանի ծաւալուն
ընդունարանը՝ ճշդելու թէ ով ով է
եւ ինչ էր անում բեմի վրայ: Երբ
հերթն ինձ հասաւ, ես չհասցրի
ներկայանալ, իմ փոխարէն ներկա-
յութիւնս հաստատեց նշանաւոր Գե-
նան,- ես նրան ճանաչում եմ, աշխա-
տում է Ռադիոյում եւ երեկոն
ռադիոյով սփռելու պատասխանա-
տուն է,- ասաց նա:

- Ես լաւ եմ ճանաչում Հենրիկ
Անասեանին, նա կոնսերվատորիա-
յում է սովորում,- հաստատելով իմ
անձը ասաց էդգար Յովհաննիսեանը:

Մինչ ես գտնուում էի «հար-
ցաքնութեան սենեակում», բեմն ու
սրահը ամայացել էին, բայց ինչ էր
կատարուում դրսում, շէնքի մուտքի


հրապարակում: Կարծես թէ ամբողջ
օրուայ հանդարտաբարոյ հասարա-
կութիւնը չլինէր: Աղմուկ, աղաղակ,
նոյնիսկ հակասովետական կոչեր,
արտայայտութիւններ:

Հագարաւոր ցուցարարներ պա-
հանջում էին, որպէսզի կառավարու-
թիւնն իր խօսքն ասի Եղեռնի վերա-
բերեալ եւ պահանջ ներկայացնի
Մոսկուային՝ անսալ Հայ ժողովրդի
արդարացի խնդրանք-պահանջին:

Մարդկանց կրքերը գնալով բոր-
բոբում էին: Ոստիկանութիւնն ան-
գոր էր գապել հոծ բազմութեան
մուտքը հրապարակ: Ժամ, պատա-
րագ նայող չկար, գիշերուայ այդ
ժամին մարդիկ գալիս էին ու
գալիս: Աստուած գիտի թէ ինչով
կ'աւարտուէր այդ դժոխային իրա-
վիճակը, եթէ ոստիկանութիւնը չդի-
մեր ծայրայեղ միջոցի:

Կէսգիշերն անց, լուսարձակնե-
րի լոյսի տակ, օպերային թատրոնի
բարձր տանիքից հրչէջները սկսե-
ցին լաստիկէ լայն խողովակներով
ուժեղ ճնշման հզորութեամբ ջուր
տեղալ ամբոխի վրայ, իսկ չորս
կողմից հրապարակ ներխուժած ոս-
տիկաններն ու գինուորները աստի-
ճանաբար դուրս մղեցին ժողովրդին
հրապարակից:

Այս ամէնն անշուշտ, չէր կարող
աննկատ մնալ խորհրդային երկրի
վերին մարմինների ուշադրութիւ-
նից եւ, իհարկէ, քառութեան նոխազ
պիտի դառնար ժողովրդի կողմից
անչափ սիրուած ու գնահատուած,
մեծ հայրենասէր, Հայաստանի Կո-
մունիստական Կուսակցութեան ղե-
կավար Եսկով Զարոբեանը: Այդպէս
էլ եղաւ: Քիչ ժամանակ անց նա
հեռացուեց պաշտօնից: Նրան փո-
խարինելու եկաւ Անտոն Քոչինեա-
նը: Հայրենասիրութեամբ տոգոր-
ուած գործիչ, որը շարունակեց եւ
աւարտին հասցրեց Զարոբեանի երա-
զը: 1967 թուականին աւարտին
հասաւ Ծիծեռնակաբերդի՝ 1915
թուականի Մեծ Եղեռնի, Յեղասպա-
նութեան օրերին զոհ գնացած մէ-
կուկէս միլիոնի հայերի յիշատա-
կին նուիրուած յուշակոթողը:



Massis Weekly

Volume 42, No. 15

Saturday, APRIL 23, 2022

Pashinyan and Putin to Intensify Cooperation Between Armenia and Russia



MOSCOW -- Armenian Prime Minister Nikol Pashinyan and Russian President Vladimir Putin have agreed to intensify cooperation between their two countries and strengthen their political, economic and security ties.

During talks in Russian President's residence in Novo-Ogarevo on Tuesday, the leaders exchanged views on the situation in the South Caucasus, spoke in favor of the continuation of the constructive work in the sidelines of the regular meetings between the leaders of Azerbaijan, Armenia and Russia and the consistent implementation of the November 9, 2020, January 11 and November 26, 2021 agreements reached between the

three leaders for the benefit of regional stability, security and economic development, stressed the decisive contribution of the Russian peacekeeping contingent to the provision of security of Nagorno Karabakh and creation of favorable and safe living conditions for the population, emphasized the need for an urgent solution to pressing humanitarian issues and the settlement of all issues through political and diplomatic means.

In this context, both leaders underlined the importance of using the potential and experience of the institute of the OSCE Minsk Group Co-

Continued on page 4

Message on the Occasion of the 107th Anniversary of April 24

Today we mark the 107th anniversary of the first genocide of the 20th century, perpetrated against the Armenian people. We bow our heads in remembrance to the one and a half million martyrs and stand once again to renew our commitment to remain faithful to the memory of the victims and to thank all the countries of the world that have recognized the great Armenian tragedy.

The recognition of the fact of the genocide committed against the Armenian people is gradually gaining new sincerity in many countries, which were very indifferent to our inalienable cause in the past. Today, the expansion of that circle has formed a greater contingent, led by the United States, whose president officially recognized the Armenian Genocide a year ago. In light of these developments in recent years, we believe that through reparation alone can our people achieve their just demands.

The inhumane atrocities committed against the Armenian people remain unpunished and the Turkish state refuses to face the dark pages of its history. Moreover, our heroic people in Artsakh face the danger of a new genocide by the Turkish-Azerbaijani alliance.

The current situation in Artsakh and the rapidly evolving events in the region inevitably require all Armenians to be vigilant to prevent further attacks on the civilian population of Armenia and the Armenians of Artsakh that seek to prevent them from maintaining their existence and self-determination.

A century after the Armenian Genocide, the international community has not yet taken a clear position. In other words, it has not taken practical action regarding the freedom-loving peoples who continue their just struggle for a sovereign, free and peaceful life.

Until then, the Armenian people in Armenia and the Diaspora will continue their struggle for the protection of their full rights and the restoration of justice, until final victory. We are united with the organizations of the Armenian community of Los Angeles, this year as well, to raise our voice and demand the just rights of our people.

In veneration of all the martyrs of the Armenian people,

SDHP Western United States Executive Committee

ARF Western United States Central Committee

ADL United States Western District Committee

April 24, 2022

Armenia Improves Democracy Score in Nations in Transit 2022 Report

Country	Score	Change	Freedom House Rating
Armenia	2.96 TO 3.04	34%	▲
Azerbaijan	1.07	1%	▲
Belarus	1.29 TO 1.18	3%	▼
Georgia	3.18 TO 3.07	35%	▼
Kazakhstan	1.32 TO 1.36	6%	▲
Kyrgyzstan	1.86 TO 1.75	13%	▼
Moldova	3.11	35%	▲
Russia	1.39 TO 1.32	5%	▼
Tajikistan	1.11	2%	▲
Turkmenistan	1.00	0%	▲
Ukraine	3.36	39%	▲
Uzbekistan	1.25	4%	▲

Armenia has improved the democracy score from 2.96 to 3.04 in the Nations in Transit 2022 report published by the Freedom House.

Nations in Transit 2022 evaluates the state of democracy in the region stretching from Central Europe to Central Asia. The 24th edition of this annual study covers events from January 1 through December 31, 2021. In consultation with country report authors, a panel of expert advisers, and a group of regional expert reviewers, Freedom House provides numerical ratings for each country on seven indicators: national democratic governance, electoral process, civil society, independent media, local democratic governance, judicial framework and independence, corruption.

According to the report, “three authoritarian regimes made democratic strides and joined the ranks of hybrid regimes: Moldova, Kosovo, and now Armenia.”

The Freedom House notes that countries that have moved from authoritarian to hybrid forms of governance present a somewhat more promising picture, though they still fall short of democratic standards. “In Armenia, for example, citizens used a protest movement in 2018 and a series of competitive elections, most recently in 2021, to decisively end the Republican Party’s multidecade reign. The incumbents were replaced with a new generation of politicians who, despite notable flaws, possess a basic commitment to democracy and the public interest.”

Genocide Museum Director Unveils List of Events to Mark Armenian Genocide Anniversary



YEREVAN — The Director of the Armenian Genocide Museum Harutyun Marutyan unveiled today the list of events which will be held this week to mark the 107th anniversary of the Armenian Genocide.

Speaking at a press conference, he said a conference on the challenges of teaching the Armenian genocide in the 21st century will be held on April 20-22. The key speakers from Armenia, the U.S., Spain, Rwanda, Cambodia, Libya and Israel will present 29 reports.

Also, on April 20, the Genocide Museum will feature a new exhibition, called “Testimonies of an Enlightened Nation in the Footsteps of Armenian Schools.”

“The Armenian nation left a tremendous legacy in the Ottoman Empire, Western Armenia and Cilicia – a developed educational system. Armenians, having no statehood and being under pressure, were able to organize education, and the exhibition is de-

Continued on page 4

Any Attempt to Incorporate Artsakh into Azerbaijan Would Lead to the Destruction of Artsakh – NKR Parliament



STEPANAKERT — “The statehood of Artsakh, the right to live freely and independently in the historical homeland are absolute values”, the National Assembly of Artsakh said in a statement.

“The current legal and political status of the Republic of Artsakh has been formed by the will of the people as a result of three referendums and the adoption of a constitution based on their results and through a nationwide agreement established in the previous years,” the Parliament said in a statement.

“The Armenians of Artsakh are well aware of the price of peace. The statehood of Artsakh, the right to live freely and independently in the historical homeland are absolute values from which even the threat of war cannot keep us,” the statement reads.

The MPs demand that the authorities of the Republic of Armenia renounce their current position and be guided exclusively by these values. “No government has the right to lower the bar of internationally recognized

self-determination to a status unacceptable to Artsakh, under the pretext of peace,” the National Assembly said.

On behalf of the Armenians of Artsakh the MPs apply to:

Armenians all over the world to stand united and resolutely by the brothers and sisters of Armenia and Artsakh in this just struggle,

the colleagues in the National Assembly of the Republic of Armenia to not deviate from the decision of the Supreme Council of the Republic of Armenia of July 8, 1992,

the leadership of the Russian Federation. During the peacekeeping mission, it is very important for us that you do not allow anyone to manipulate the problems that arise, as a basis for questioning the further security of the people of Artsakh,

the leaders of the OSCE Minsk Group Co-Chair countries. Make efforts to maintain the only international mandate for the settlement of the Nagorno-Karabakh conflict regardless of all other disagreements.

Russia Appoints Special Envoy to Facilitate the Normalization of Relations Between Armenia and Azerbaijan

MOSCOW -- Russian Foreign Ministry has appointed a special representative to facilitate the normalization of relations between Armenia and Azerbaijan, Russian Foreign Ministry spokesperson Maria Zakharova said on Thursday.

Moscow announced late on Thursday that Igor Khovaev, the Russian co-chair of the OSCE Minsk Group, will now work as Foreign Minister Sergei Lavrov’s special envoy on “fostering the normalization of relations” between the two South Caucasus states.

“The issue of preparing for the peace treaty will be at the center of his attention,” said Zakharova. “We count on the support of Khovaev’s efforts by our allies and partners in Baku and Yerevan.”

Zakharova recalled that this issue was discussed by Russian President Vladimir Putin in telephone calls with Azerbaijani President Ilham Aliyev and Armenian Prime Minister Nikol Pashinyan on April 9, and a day earlier by Russian Foreign Minister Sergei Lavrov with his Armenian and Azerbaijani counterparts Ararat Mirzoyan and Jeyhun Bayramov.

“Russia is determined to promote the conclusion of a peace treaty between Yerevan and Baku,” she said.

Zakharova noted that Washington and Paris curtailed all contacts with Moscow within the framework of the OSCE Minsk Group co-chairing



troika on Feb. 24, despite the fact that the real situation in the South Caucasus does not allow negotiating pauses, and further consistent steps are needed to restore lasting peace and stability in the region.

She said also that Ambassador at Large Igor Khovayev will act in a new capacity as special representative of Russian Minister of Foreign Affairs to promote normalization of relations between the Republic of Azerbaijan and the Republic of Armenia.

According to Zakharova, he will focus on the preparation of the above-mentioned peace treaty. “We expect our allies and partners in Baku and Yerevan to support Khovayev’s efforts. We are open for constructive interaction with other interested players,” Zakharova said.

Third Meeting of the Special Representatives of Armenian and Turkey Will Be Held in Vienna



ANKARA — The third meeting of the special representatives of Armenia and Turkey on the normalization of Armenian-Turkish relations will take place in Vienna, according to Turkish Foreign Minister Mevlut Cavusoglu.

Interviewed on Turkish NTV channel, Cavusoglu called on Armenia to be bolder and stop insisting on third countries being the venues of those talks.

“On one hand, you say that relations must be normalized and the [Turkish-Armenian] border must be opened,” Cavusoglu told the TV channel. “On the other hand, you do not dare to meet

in Turkey and Yerevan.”

“If you don’t agree to even meet in each other’s countries how are you going to take steps on other issues?” he said, appealing to Yerevan.

Armenia’s Foreign Ministry spokesperson Vahan Hunanyan rejecting Cavusoglu’s criticism saying bilateral talks should continue without third party involvement.

The Special envoys of the two neighboring states Ruben Rubinyan and Serdar Kilic met in Moscow in January and in Vienna in February for talks described by both sides as productive.

ability of the internationally accepted existing format, as well as promotion of the peace process was emphasized.

The interlocutors exchanged views on the issues of mutual interest within international and regional agenda.

Armenia, China FMs Stress Need for Unblocking Transport and Economic Infrastructure



YEREVAN -- Foreign Minister of the Republic of Armenia Ararat Mirzoyan held a phone conversation with the Foreign Minister of People’s Republic of China Wang Yi.

The interlocutors referred to the 30th anniversary of the establishment of diplomatic relations between Armenia and China, emphasizing the tangible world carried out through that period for the establishment and development of bilateral relations in political, trade and economic, humanitarian and other directions. The sides expressed their readiness to resolutely strengthen and deepen the Armenian-Chinese relations.

The utilization of the potential in the field of economic cooperation, the promotion of investments, development of infrastructures and addressing of logistic challenges was underlined. In this regard. The need for the process of unblocking transport and economic infrastructures was highlighted.

Presenting Armenia’s position on the establishment of peace and stability in the region, Ararat Mirzoyan stressed the importance of negotiations between Armenia and Azerbaijan in different directions, as well as the role of the OSCE Minsk Group Co-Chairmanship in the settlement of Nagorno-Karabakh conflict. The vi-

ACA Supports The Armenian Genocide Education Act

WASHINGTON, DC -- The Armenian Genocide Education Act, authored by Representatives Carolyn Maloney (D-NY) and Congressional Caucus on Armenian Issues Co-Chair Gus Bilirakis (R-FL), has at present, garnered support from twenty three members of the congress.

The bipartisan measure aims to fund – \$10 million in funding over five years – the Library of Congress educational programs to counter Turkish backed discourse and propaganda that claims that the deliberate state-sponsored mass murder, national dispossession, cultural erasure and exile of millions of Armenians, Greeks, Assyrians, Chaldeans, Syrians, Arameans, Maronites and other Christians between 1915 and 1923 did not occur. The curriculum will also incorporate the history, lessons, consequences and ongoing costs of the Armenian Genocide.

“ACA is grateful to Congresswoman Maloney and Congressman Bilirakis for spearheading the Armenian Genocide Education Act,” said ACA Chairman Sevak Khatchadorian. “In the wake of official US recognition, this bill will enable the Library of Congress to take the proper next steps in promoting education on the Armenian Genocide. Each genocide is unique, however each case also shares similar patterns and dynamics with other genocide and offers lessons about the past, present and future. Unfortunately, the thought of ethnic cleansing or genocide, is still seen as a viable option, as evident by the Azerbaijani regime’s actions towards Armenians in Artsakh and Armenia. ACA wholly supports this bill and looks forward to its pas-



sage by Congress.”

Current supporters include Congressional Caucus on Armenian Issues Co-Chairs Congressman Frank Pallone, Jr. (D-NJ), Jackie Speier (D-CA), David G. Valadao (D-CA), and Adam B. Schiff (D-CA). They are joined by Assistant House Speaker Katherine Clark (D-MA), Anna Eshoo (D-CA), Jimmy Gomez (D-CA), Ilham Omar (D-MN), Barbara Lee (D-CA), Jan Schakowsky (D-IL), Jim McGovern (D-MA), Katie Porter (D-CA), John Garamendi (D-CA), Nicole Malliotakis (R-NY), Brian Higgin (D-NY), Eric Swalwell (D-CA), Grace Meng (D-NY), Lou Correa (D-CA), Juan Vargas (D-CA), Linda Sanchez (D-CA), Eleanor Holmes Norton (D-DC), Dina Titus (D-NV), and Grace Napolitano (D-CA).

Members of Congress can join Representatives Maloney and Bilirakis as original cosponsors of the measure in the days leading up to its introduction timed around April 24th, the day of remembrance of the Armenian Genocide. Contact your representative and ask them to support the Armenian Genocide Education Act.

Major Research on Diaspora Public Opinion to Be Launched in North America

The Armenian Diaspora Survey begins in May in the United States and Ontario, Canada

Preparations are underway for the launch of the Armenian Diaspora Survey in North America, which will be carried out this summer.

The Armenian Diaspora Survey (ADS), an initiative of the Calouste Gulbenkian Foundation, is led by a group of scholars and researchers under the auspices of the Armenian Institute in London.

The study provides valuable insights into diaspora public opinion and an important snapshot of people’s thoughts on a host of issues. It offers evidence-based knowledge to the public and valuable data to community leaders, activists and policy makers in particular, giving them a better understanding and analysis of their communities for the development of programmes and projects.

ADS director Dr. Hratch



Tchilingirian of Oxford University explained: “In our research we ask the respondents their thoughts and views on identity and related issues of belonging. Other themes include language and culture, church and religion, community engagement, and relations with Armenia.”

Any Armenian, aged 18 and older, living in the United States and Ontario, Canada can take the survey online, starting on May 6th. Printed questionnaires will also be available to those who wish to complete it offline.

Israeli Police Impose Severe Restrictions on Armenians Attending Mass at Holy Sepulcher Church on Easter



JERUSALEM — The Armenian Patriarchate of Jerusalem has informed its faithful about the severe restrictions imposed this year by the Israeli Police during the Easter Holiday.

“On April 11, 2022, the representatives of the Armenian Patriarchate of Jerusalem met with the responsible authorities of the Police who informed about the decision that this year only 1000 attendees would be allowed to enter the Holy Sepulcher Church, of which only 200 would be Armenians to participate the Holy Fire ceremony. Patriarchate’s representatives expressed their deep concern and disagreement to this unfair arrangement and the meeting was dispersed after a long discussion,” the Patriarchate said in a statement.

It is a known fact, as the Status Quo of the Holy Places describes, that the Armenian Apostolic Church has exceptional rights during the Holy Fire ceremony.

To start the day of Holy Fire celebration, the door of the Holy Sepulcher Church is opened by the Armenian Church by right, giving opportunity to hundreds of Armenian and non-Armenian pilgrims to attend and witness the opening ceremony. And with

a second procession, the Armenian Patriarch of Jerusalem, joined with hundreds of pilgrims, proceeds to the Holy Sepulcher Church to make a solemn entry. Then an Armenian clergyman joins the Greek Patriarch of Jerusalem and the two enter the Tomb of Christ to bring out the Holy Fire, symbolizing the Resurrection of our Lord Jesus Christ.

“The Armenian Church for centuries has practiced these rights without any restrictions or limitations during each Government that ruled the area. Therefore, with this statement the Armenian Patriarchate of Jerusalem expresses its disagreement and protests against Israeli Police for imposing such restrictions. The Patriarchate demands that the Holy Fire ceremony be celebrated similar to previous years without limiting the number of faithful attendees,” the Patriarchate said.

“The Israeli Government on international level took in charge to secure the freedom of religious activities and performances without restraint. Therefore, the Armenian Patriarchate of Jerusalem hopes and expects that the Israeli Police would respect and follow its undertaking,” the statement reads.

Armenian School Vandalized in Istanbul

ISTANBUL– The gate to an Armenian school in Istanbul, Turkey was vandalized with a swastika. The act of vandalism occurred as Armenians prepare for Easter and look to remember the Armenian genocide anniversary, observed on April 24.

The same school in Istanbul faced anti-Armenian persecution in November 2016 when graffiti was written on the walls stating “One night, we suddenly will be in Karabagh”. Also in 2016, walls of Uskudar Surp Khach

Seminary and Uskudar Kalfayan School were vandalized with anti-Armenian graffiti. The graffiti read “May the Turkish race live!” and “Torment Armenians”.

Armenian Christians and churches have faced vandalism and discrimination in Turkey annually around the time of the commemoration of the Armenian Genocide anniversary. Recently this included the acquittal of those who danced on the gate of an Armenian church in 2021.

ADS started with a pilot study in 2018. So far the survey has been carried out in 10 countries and in over 20 diaspora communities.

“We are pleased this multi-country systematic survey is coming to North America,” said Dr. Razmik Panossian, Director of the Calouste Gulbenkian Foundation’s Armenian Communities Department. “Given the enormous challenges facing Armenia

and Armenians, this research will have tangible policy consequences,” he added.

The results of the 2018 and 2019 studies have been published separately. In addition to English, the 2019 study is also available in Armenian and Spanish. All of the reports could be downloaded for free from ADS website: <http://www.armeniandiasporasurvey.com>.

Glendale's Annual Armenian Genocide Commemorative Event

GLENDALÉ – The City of Glendale proudly invites the public to its Annual Armenian Genocide Commemorative Event at The Alex Theatre on Sunday, April 24, 2022, at 7:00 p.m. For the first time in two years, the event will be held in person for the community to experience a contemporary perspective on the horrific events of 1915 through music and dance. This year's program will showcase the work of Komitas through intricate dance and musical performances curated by The Lark Musical Society. Komitas was an Armenian priest, musicologist, composer, arranger, singer, and choirmaster who is considered the founder of the Armenian national school of music. His work ensured the preservation of Armenian culture through studying, recording, and har-

monizing the folk and dance songs sung by Armenian peasants working in the fields on the outskirts of cities.

Tickets to the Armenian Genocide Commemorative Event are free and required for entry; limit 4 tickets per transaction. Tickets can be reserved at www.itsmyseat.com/april24.

At their regularly scheduled meeting, the Glendale City Council will pass a proclamation recognizing April 2022 as Genocide Awareness Month, and April 24, 2022, as the Day of Commemoration of the 107th Anniversary of the Armenian Genocide.

The City of Glendale looks forward to bringing the community together through a program that will allow us to reflect upon the lives of the 1.5 million Armenian people who senselessly lost their lives in an act of genocide.


Armenian Communities of Persia/Iran Book Launch

7:00 pm Thursday, April 28
Armenian Society of Los Angeles
117 S Louise St, Glendale, CA 91205

Armenian Communities of Persia/Iran: History, Trade, Culture, recently released by Mazda Publishers, will be presented by Professor Richard G. Hovannisian, the book's editor, and will be available for purchase. This 670-page volume is the fifteenth and final volume in the series "Historic Armenian Cities and Provinces," edited by Professor Richard G. Hovannisian of the University of California and Chapman University.

The volume covers the Armenian presence in Iran from antiquity to the contemporary times, includes Armenian-Iranian relations from the pre-Christian era to the Middle Ages, the Maku and Tabriz districts, with the monasteries of St. Thaddeus, St. Stepanos, and Tsortsor, the importance of Persian Azarbayjan/Atrpatakan in the Armenian and Iranian revolutionary movements, and the displacements and massacres of the Christian inhabitants of the Urmia, Salmast, and Khoy districts during the Turkish offensives in World War I, as well as the leadership in relief efforts of Archbishop Nerses Melik-Tangian of Atrpatakan (Tabriz).

Another section of this book assesses the impressive place of the all-Armenian municipality of New Julfa in Iranian-Armenian history, with its painters and artisans, unique churches, and monastic complex (the Vank), its merchants who were prominent in the inter-



national commercial networks from East Asia to Russia and Western Europe, and its distinguished Armenian theater. The volume concludes with a pictorial essay featuring the paintings of New Julfa and outlying districts by the noted Julfan artist Sumbat. Other chapters assess the interactions between the current Armenian leadership in Tehran with the Iranian authorities, and the socio-economic integration of Armenian Iranians in Southern California. The volume is enhanced by numerous color illustrations.

This fifteenth volume is the only one in the series that concentrates on Armenian communities outside the Ottoman Empire and is dedicated to Dr. Vartiter K. Hovannisian, a constant companion and professional collaborator since the very beginning of the series and long before.

Admission is free.

Genocide Museum Director Unveils

Continued from page 1


voted to it," Marutyan said.

Also, an exhibition of French-Armenian painter Jean Pierre Seferian's "Death March in the Desert" will kick off on April 23. On April 29 an exhibition of a Dutch researcher titled "Armenian Terrors through the Eyes of the Dutch" will open.

Marutyan said also that many of

foreign delegations that visit the Genocide Memorial on April 24 to remember the victims of the Armenian genocide, visit also the Museum. He said this year they expect at the Museum delegations from the Armenian-Israeli and Armenian-Syrian parliamentary friendship groups, a minister from the Netherlands, as well as a representative of Francophone Organization.

Aurora Co-Founder Vartan Gregorian's Legacy Honored in New York City



NEW YORK -- The Aurora Humanitarian Initiative joined the memorial service organized by the Carnegie Corporation of New York on April 13, 2022 at Carnegie Hall in New York City. Dr. Gregorian, President of Carnegie Corporation in New York, Co-Founder of the Aurora Humanitarian Initiative, and Aurora Prize Selection Committee Member, died in April 2021.

During the memorial, members of the Gregorian family, lifelong friends, and distinguished colleagues shared memories and teachings and paid tribute to Dr. Gregorian's exceptional achievements in philanthropy, libraries, educational institutions, and arts and cultural organizations. Videos and photos of Dr. Gregorian at every stage of his life were interspersed with personal memories shared in heartfelt video messages.

"For the many years I knew Vartan, I always felt he was looking over my shoulder. Looking out for me, challenging me, guiding me. And I feel his spirit here today, watching over all of us. Vartan was a guiding light. Shining for those who knew him and for those he did not," said Noubar

Afeyan, Co-Founder of the Aurora Humanitarian Initiative, Founder & CEO of Flagship Pioneering, and Founder & Chair of Moderna.

Born in Tabriz, Iran, Vartan Gregorian overcame countless challenges he faced as a young immigrant to the United States and went on to build a remarkable career that spanned several decades and crossed the lines of academia, philanthropy, and culture within and beyond his adopted country. He has made a crucial contribution to countless projects and foundations and was one of the Co-Founders of the Aurora Humanitarian Initiative that seeks to address on-the-ground humanitarian challenges around the world with a focus on helping the most destitute.

Uniquely dedicated to discovering and supporting the world's unsung humanitarian heroes to enable and raise awareness of their courageous work, Aurora has made a significant impact on the lives of those in greatest need. Representatives of Aurora's community, including Co-Founders of the Initiative, several members and Chair of the Aurora Prize Selection Committee, and Aurora Laureates, attended the memorial service.

Pashinyan and Putin to Intensify Cooperation

Continued from page 1

chairs, in accordance with its international mandate.

In a joint statement issued after their talks Putin and Pashinyan said the "privileged alliance" of their states will grow stronger.

"Vladimir Putin and Nikol Pashinyan expressed concern over the use of unilateral restrictive measures by a number of countries," they said, clearly referring to the Western sanctions. "They expressed their intention to jointly overcome the challenges caused by these measures, including in the field of food and energy security of the two countries, logistics, etc."

In particular, they said, the two sides will continue to "facilitate the flow of Russian investments in Armenia."

Pashinyan and Putin hailed the results of the work aimed at bringing the trade turnover between Armenia and Russia to the path of sustainable growth.

The need for further diversification of the categories of trade, further progressive growth of volumes, the development of cooperation in various spheres of production, the active imple-

mentation of the mechanisms of the Eurasian Economic Union were stressed.

An agreement was reached to encourage the establishment of close ties between the business circles of the two countries, including through interregional and local self-government platforms, through the application of business mission mechanisms, the leaders of the two countries said in a joint statement.

The work done to finalize the economic cooperation program between the Government of the Republic of Armenia and the Government of the Russian Federation for 2022-2025 was positively assessed.

The high demand and efficiency of the Intergovernmental Commission on Economic Cooperation between the Republic of Armenia and the Russian Federation, as well as the Working Group on Industry in terms of elaboration and implementation of bilateral practical arrangements were underlined. Mutual interest was expressed in holding permanent industrial exhibitions in the territory of Armenia, including, with the emphasis on cooperation in the field of high technologies.

ԺԹ. ԵՆ Ի. Դարերու Օսմանեան Հոգեբանութիւնը եւ Հայկական Ջարդերը


ԱՐՄԵՆ ՔԻՐՔԵՏԱՆ

«Մոռցուած Յեղասպանութիւն», «Չիշուող Յեղասպանութիւն», «Թաքնուած Հոլոքոսթ» կամ «Գաղտնի Յեղասպանութիւն» ձեւերով ալ որակուած Հայոց Յեղասպանութիւնը այսօր Օսմանեան կայսրութեան ժառանգորդ Թուրքիոյ Հանրապետութեան կողմէ կ'ուրացուի եւ իր սերտ գործակիցներուն՝ Անգլիոյ եւ Իսրայէլի կողմէ ալ ցարդ չէ ճանչցուած:

Երբ Թալէաթ Հայոց մահապատժիւր կ'արձակէր, յոյս ունէր, որ ժամանակի ընթացքին մարդկութիւնը պիտի մոռնար աշխարհի այդ առաջին կոտորածը: Նոյնպէս խորհեցաւ Հիթլեր: Հայոց Յեղասպանութեան հազիւ 24 տարի անց, երբ 1939-ին Լեհաստանի վրայ պիտի յարձակէր, իր հրամանատարներուն «Այսօր ո՞վ կը լիշէ Հայոց կոտորածը» ըսած էր:

Հակառակ այն իրողութեան, որ Թուրքիոյ Հանրապետութիւնը միջազգային մակարդակի վրայ միլիտարիստ տոլարներ ծախսելով ճիշդ չի խնայեր աղաւաղելու, հերքելու եւ կեղծելու ճշմարտութիւնը, շնորհիւ աշխարհի զանազան երկիրներու մէջ բնակութիւն հաստատած հայերու տեւական եւ հետեւողական աշխատանքներուն եւ թափած ջանքերուն՝ 20-րդ դարու այս առաջին յեղասպանութիւնը երբեք մարդկային լիշողութեան փոշիներուն տակ չէ մնացած եւ խղճմտանքի տէր ժողովուրդներու պետութիւնները՝ թիւով 36, ներառեալ աշխարհի հզօրագոյն պետութիւնները՝ Ռուսիոյ Համադաշնութիւնը (1995), Ամերիկայի Միացեալ Նահանգները (2021), եւ ջարդերու օրով իր դաշնակից Գերմանեան (2016), առաջինը Ուրուկուայ (1965), ինչպէս նաեւ յայտնի կազմակերպութիւններ (գոյգ ցանկերը, ըստ 2022 տարուան տուեալներուն, տեսնել յօդուածի վերջաւորութեան) ճանչցան Հայոց Յեղասպանութիւնը ու բացայայտօրէն յայտարարեցին, թէ 1915 թուականին հայեր ցեղասպանութեան ենթարկուած էին: Անոնք դատապարտեցին ուրացման եւ մերժումի քաղաքականութիւնը: Հոս անմիջապէս լիշենք, որ քաղաքականութեան մէջ խիղճ եւ բարեկամութիւն չկայ: Ո՛չ տեւական բարեկամութիւն կայ եւ ո՛չ՝ տեւական թշնամութիւն: Քաղաքական եւ տնտեսական գետնի վրայ մնացունը եւ տեւականը տուեալ պետութեան շահերն են: Մեզի անկ է այդ պահերը որսալ:

Անտարակոյս, չափազանց գովելի եւ գնահատելի է այս երկիրներուն ընդունած պաշտօնական դիրքը, սակայն եւ այնպէս ատիկա մեր վէրքին բալասանը չէ եւ ոչ ալ վերջնական բուժումը, այնքան ատեն, որ արար աշխարհի գիտցած, Օսմանեան կառավարութեան դատարաններուն ճանչցած, յանցապարտները մահուան դատապարտած Հայոց Յեղասպանութիւնը Թուրքիոյ Հանրապետութեան կառավարութիւնները կ'ուրանան, սկսեալ 1921-ին դատապարտելիներուն ներում շնորհած եւ Երզրակի մէջ 60 հազար հայու ջարդով կախարհան հանուած Պողոզլըեանի գոյմագամ (գաւառապետ) Մեհմետ Բեմալ պէյի զաւակներուն ցիւանս ամսաթոշակ եւ 1927-ին ալ կնոջը հայերէ բռնագրաւուած երկու յարկաբաժին յատկացուցած



Մուսթաֆա Բեմալի օրէն: Մուսթաֆա Բեմալ այն թեզը առաջ քշած է, որ հայ ժողովուրդը անշնորհակալ գտնուելով՝ ապստամբութիւն կազմակերպած է օսմանեան իշխանութեան դէմ եւ դարձած է գործիք ուսերուն: Օսմանեան կառավարութիւնն ալ ստիպուած տեղահանած է հայ ազգաբնակչութիւնը սահմանամերձ շրջաններէն դէպի երկրին խորերը: Կ'երեւի թէ Մուսթաֆա Բեմալի քարտէսին վրայ Կ.Պոլսոյ մօտակայ Պուրսա քաղաքը կամ Փոքր Ասիոյ կեդրոնը գտնուող Կեսարիա քաղաքը եւ անոնց շուրջի քաղաքները Ռուսիոյ սահմանամերձ քաղաքներ ըլլալով տեղադրուած էին:

Մուսթաֆա Բեմալ ոչ միայն երիտթրքական «Միութիւն եւ Յաւանք» կուսակցութեան անդամ էր, նաեւ մաս կը կազմէր կուսակցութեան գաղտնի կազմակերպութեան՝ «Թեշքիլատ-ը Մահսուսա»-ին:

Մուսթաֆա Բեմալ, գինադադարի ստորագրումէն վերջ (30 Հոկտեմբեր 1918), կու գայ Կ. Պոլիս, ուր կը գտնուէր Երիտթուրքերու ընտրանի հատուածը: Երիտթուրքերու պարագլուխները փախուստ տալէ առաջ կազմած էին «Քարաքոլ» կոչուած գաղտնի կազմակերպութիւնը՝ նպատակ ունենալով այդ կազմակերպութեան միջոցով նախապատրաստել իրենց երկիր եւ իշխանութեան վերադարձը: Մ. Բեմալ նախ կը հաստատուի «Փերա Փալատ» հիւրանոցը: Մի քանի օր վերջ կը տեղափոխուի ընկերոջ մը տունը: Կապ կը հաստատէ «Քարաքոլ» կազմակերպութեան հետ: Դաշնակիցներուն կողմէ ձերբակալուելու մտավախութեամբ՝ Կ. Պոլսոյ Շիշլի Գասապեանի երեք յարկանի տունը 2 Դեկտեմբեր 1918 թուականին սկսեալ մինչեւ 30 Ապրիլ 1919 շնորհիւ իր երիտթուրք ընկերներու ջանքերուն պարտուած Օսմանեան կայսրութեան 9-րդ բանակին ընդհանուր քննիչ նշանակումը: Պատերազմական նախարար Շաքիր փաշա 6 Մայիսին նշանակումը իրեն կը տեղեկացնէ: Իրեն կը տրուին նախարարաց խորհուրդին ցուցմունքները՝ հաստատել կարգու կանոն իր պատասխանատուութեան տակ գտնուող տարածաշրջանին՝ Տրապիզոնի, Կարինի, Սվազի, Վանի վիլայեթներու, ինչպէս նաեւ էրզրոմիտի եւ Ճանիկի քաղաքացիական իշխանութիւններուն մէջ: Քեմալ անմիջապէս կը մեկնի Փոքր Ասիա:

Գասապեանի տան մէջ գտնուած միջոցին, անգլիացիներուն կողմէ ձերբակալուելէ խուսափելու նպատակով՝ Կ.Պոլիս տեղա-

կայուած Խալիփ Բարձր յանձնակատարէն (Count Carlo Sforza) կը խնդրէ իր բնակատեղին խալիփական բանակի ստորաբաժանման պաշտպանութեան տակ առնել:

Մուսթաֆա Բեմալ Փոքր Ասիոյ մէջ կը սկսի ազգայնամոլ շարժում մը, որուն կորիզը կը կազմեն երիտթուրքերը՝ հիմնականին «Թեշքիլատ-ը Մահսուսա»-ի անդամները: 23 Յուլիս 1919-ին Կարին (էրզուրում) գումարուած համաժողովին կը մասնակցին 60 անձեր, որոնցմէ 34-ը Երիտթուրք կազմակերպութեան անդամներ էին:

Թուրքիոյ Հանրապետութեան ծագման շրջանին Մ. Բեմալ լայնօրէն կը չենի «Միութիւն եւ Յաւանք» կուսակցութեան եւ «Թեշքիլատ-ը Մահսուսա»-ի անդամներուն վրայ: Ընկերական սերտ կապեր կը պահէ Հայոց Յեղասպանութեան համար պատասխանատուութիւն կրող թեշքիլատական յանցագործներու հետ՝ էշրեֆ Քուշնուպաշը, Շիքրիւ Քայա, ձեւալ Պայար, որ Բեմալի օրով հանրապետութեան երկրորդ վարչապետը կ'ըլլայ: Քեմալ լայնօրէն կ'օգտագործէ հայ ժողովուրդին դէմ գործուած ոճիրին մեծագոյն յանցագործները, զանոնք կը նշանակէ բարձրագոյն պաշտօններու՝ փրկելով դատաստանէ: Այսպէսով անոնք պարտական կ'ըլլան Մուսթաֆա Բեմալի ու հլու-հնազանդ անոր:



Քազըմ Քարապէքիր

Քեմալի թելադրանքով՝ թրքական արեւելեան ճակատի հրամանատար Քազըմ Քարապէքիր փաշային յոյժ գաղտնի հրաման մը կը դրկուի. «Հայաստանը մէջտեղէն վերցնել»: 6 Յունիս 1920-ին, Թուրքիոյ ազգային մեծ ժողովի կառավարութիւնը, Մուսթաֆա Բեմալի ղեկավարութեամբ, կ'որոշէ Հայաստանի վրայ յարձակում սկսիլ:

8 Սեպտեմբեր 1920-ին, Կարին կը հասնի համայնավար Ռուսիոյ կողմէ որպէս օգնութիւն ղրկուած 200 քրիտկրամ ոսկին, որուն մէկ մասը կը յանձնուի Քազըմ Քարապէքիր փաշայի հրամանատարութեան տակ գտնուող բանակին, միւս մասն ալ կը դրկուի Անգարա՝ քեմալական պաշտօնեաներու եւ սպաներու աշխատավարձերը վճարելու նպատակով:

Քեմալ, 20 Սեպտեմբեր 1920-ին, կառավարութեան անունով Քազըմ Քարապէքիր փաշային հրաման կու տայ սահմանը անցնիլ եւ պատերազմիլ Հայաստանի Հանրապետութեան դէմ: Այսպէսով կը յստականայ Մուսթաֆա Բեմալի վերջնական նպատակը՝ վերջ տալ Հայաստանի Հանրապետութեան գոյութեան:

30 Հոկտեմբեր 1918-ին ստորագրուած Մոնտրոսի գինադադարին քանի մը կէտերը՝ 4, 11, 15, 16 եւ 24, Հայաստանի համար նպաստաւոր էին: Կը նախատեսուէր, որ թուրքերու կողմէ գերեվարուած եւ բռնագաղթեցուած բոլոր հայերը պէտք է Կ.Պոլիս տեղափոխուէին եւ դաշնակիցներուն յանձնուէին: Թրքական զօրքերը պէտք է դուրս հանուէին Անգլիոյ կասի որոշ շրջաններէն եւ Հայկական Կիլիկիայէն: Հայկական վիլայեթներէն որեւէ մէկուն մէջ անկարգութիւններու պարագային դաշնակիցները իրաւունք պիտի ունենային այդ տեղերը անյապաղ գրաւելու: Սակայն Արեւմտեան Հայաստանի եւ Անգլիոյ կասի շարք մը շրջաններու մէջ տեղակայուած օսմանեան բանակի ստորաբաժանուները գինաթափութեան չենթարկուեցան: Այս կը նշանակէր, որ Հայոց անկախ պետականութիւնը լրջօրէն վտանգուած էր եւ Յեղասպանութեան փրկուած հայութեան մնացորդները կը գտնուէին նոր կոտորածներու վտանգին առջեւ: Յիշուած այս ստորաբաժանումները մասնակցած էին 1915-1916 թուականներուն Արեւմտեան Հայաստանի հայութեան եւ 1918-ին ալ Արեւելեան Հայաստանի ու Անգլիոյ կասի հայաշատ վայրերու հայութեան բնաջնջման:

Մուտրոսի գինադադարը փաստեց, որ Անթանի անդամ պետութիւնները, առաջին հերթին Անգլիա, անգամ մը եւս գոհաբերեցին հայ ժողովուրդի կենսական շահերը ի նպաստ իրենց աշխարհաքաղաքական հաշիւներուն:

Մուտրոսի գինադադարը ի գօրու կ'ըլլայ ստորագրութեան յաջորդ օրը՝ 1 Նոյեմբերին: Այդ օր, «Միութիւն եւ Յաւանք» կուսակցութիւնը պաշտօնապէս կը յայտարարէ, որ դադարած է գոյութիւն ունենալ: Նոյն օրուան գիշերը Թալէաթը, էնվերը, ձեմալը եւ Երիտթուրքերու չորս այլ պարագլուխներ գերմանական սուզանավով գաղտնաբար երկրէն կը հեռանան: 6 Նոյեմբերին կը գինաթափուին օսմանեան բանակի նեղուցները պաշտպանող ստորաբաժանումները, որով դաշնակիցներու նաւերուն համար դէպի մայրաքաղաք՝ Կ.Պոլիս, ճանապարհը կը բացուի: 13 Նոյեմբեր 1918-ին, Անթանի երկիրներու նաւերէն ափ կ'իջնեն 3,500 գինուորներ, որոնք կը հսկեն մայրաքաղաքի կարեւոր կէտերը:

Ձաւէն պատրիարք իր յուշերուն մէջ կը գրէ. «Նախագահ Ուիլսոնի քիչ թէ շատ գոհացուցիչ սահմանագծում մը ըրաւ Հայաստանի համար: Բ. Դուրը յանձնառու եղած էր, ինչ որ ալ ըլլար Ուիլսոնի իրաւարարութեամբ ճշդուած հողերը, յանձնել Հայաստանին, սակայն Անատոլի մէջ կազմուած Մուսթաֆա Բեմալի կառավարութիւնը մերժեց Բ. Դուրան կնքած դաշինքը եւ չուզեց համակերպիլ: Այժմ որոշուած սահմանները գրաւելու համար զօրքի պէտք կար եւ ատիկա տրամադրող ոչ մէկ պետութիւն գտնուեցաւ: Միշտ բոլոր խորհրդաժողովներուն մէջ Դաշնակիցները կը յայտարարէին թէ իրենց վրայ յոյս պէտք չէ դնել, վասնզի անոնք տրամադիր չէին մեզի համար գոհողութիւն ընելու» (էջ 351):

«Այդ դաշնագիրով ոչ միայն կը ճանչցուէր Հայաստանի անկախութիւնը, այլ՝ իրապէս գործարարութեան շարք մը շրջաններու մէջ տեղակայուած օսմանեան բանակի ստորաբաժանումները գինաթափութեան չենթարկուեցան: Այս կը նշանակէր, որ Հայոց անկախ պետականութիւնը լրջօրէն վտանգուած էր եւ Յեղասպանութեան փրկուած հայութեան մնացորդները կը գտնուէին նոր կոտորածներու վտանգին առջեւ: Յիշուած այս ստորաբաժանումները մասնակցած էին 1915-1916 թուականներուն Արեւմտեան Հայաստանի հայութեան եւ 1918-ին ալ Արեւելեան Հայաստանի ու Անգլիոյ կասի հայաշատ վայրերու հայութեան բնաջնջման:

Մուտրոսի գինադադարը փաստեց, որ Անթանի անդամ պետութիւնները, առաջին հերթին Անգլիա, անգամ մը եւս գոհաբերեցին հայ ժողովուրդի կենսական շահերը ի նպաստ իրենց աշխարհաքաղաքական հաշիւներուն:

ԺԹ. ԵՆ Ի. Դարերու Օսմանեան Հոգեբանութիւնը եւ Հայկական Ջարդերը

Շարունակուած էջ 15-էն

յուլիան: Հայաստանը կը յիշուէր իբր դաշնակից պետութիւն եւ պայմանագիր կողմերէն մէկը եւ պարտադրող կողմին մէկ անդամը: 36-րդ յօդուածի տրամադրութեան համաձայն՝ եթէ թուրքիա չգործադրէր դաշնագիրին պայմանները, Հայաստան եւս ձայն պիտի ունենար Կ.Պոլսոյ բախտորոշման մասին պետութեանց տալիք վճիռին մէջ: Նշանակելի էր որ Հայաստան եւս իբր դաշնակից պետութիւն թուրքիոյ յանցաւորները պահանջելու եւ դատելու իրաւունք կը ստանար (Յօդ. 226-231)» (էջ 353):

Այնքան ատեն, որ թուրքեր իրենց արիւնոտ անցեալին հետ չեն հաշտուիր, մեր ցաւը իր սաստկութեամբ պիտի շարունակուի: Երբ Փոքր Ասիոյ մէջ հայոց գոյութեան նշան եւ ապացոյց հայապատկան եկեղեցիներու, վանքերու, գերեզմաններու կործանումը՝ մեր հազարաւոր տարուան մշակոյթին փճացումը բոլորիս աչքերուն առջեւ տեղի կ'ունենայ, մեր վէրքը պիտի շարունակէ կոտորել:

Մենք՝ հայերս, ազգովին պիտի շարունակենք պայքարը յանուն արդարութեան հաստատման եւ մեր իրաւունքներու վերատիրացման: Շնորհիւ ամէն մակարդակի վրայ տարուած հետեւողական ջանքերու՝ թուրք ժողովուրդէն շատեր սկսած են սերտել իրենց ճշմարիտ պատմութիւնը եւ ճանչնալ Հայոց Յեղասպանութիւնը:

Թուրքիոյ յայտնուած պաշտօնական կեցուածքը այն է, թէ Ա. Համաշխարհային Պատերազմին տեղի ունեցած են տեղահանումներ եւ այդ ժամանակ թէ՛ հայ եւ թէ՛ թուրք բնակչութեան մէջ եղած են բազմաթիւ զոհեր, սակայն ծրագրուած ցեղասպանութիւն չէ եղած:

Թէեւ թուրքիոյ կառավարութեան վրայ Յեղասպանութեան ճանաչման համար կատարուած արտաքին ճնշումները կարեւոր են, սակայն ամենակարեւոր եւ ազդու ճնշումը ներքին՝ լուսաբանուած թուրք ժողովուրդին իր կառավարութեան վրայ գործադրելիք ճնշումն է. պահանջել երկրէն ներս ժողովրդավարական կարգերու հաստատումը, որու հետեւանքով կը փրկին կարծրատիպ պատերը եւ կը ճանչցուի Հայոց Յեղասպանութիւնը:

Երբ անձ մը, հաւաքականութիւն մը, կառավարութիւն մը չ'ընդունիր, կ'ուրանայ կամ չ'ուզէր ըմբռնել, թէ ինք անցեալին ոճիր մը գործած է, ան հակամէտ է եւ կարող նոր ոճիրներ գործելու: Օսմանեան կայսրութեան ժառանգորդը՝ Թուրքիոյ Հանրապետութիւնը, իր 99 տարուան գոյութեան ընթացքին՝ 1923-էն ի վեր, քանիցս փաստեց այս իրողութիւնը: Վերջին ապացոյցը Արցախի 2020 տարուան 44-օրեայ պատերազմն է:

Օսմանեան կայսրութեան փլուզումը արագացնող «Հայկական Հարց»-ը անցեալին եւրոպական պետութիւններու առօրեայ քաղաքականութեան նիւթն էր, այսօր ալ՝ Հայոց Յեղասպանութիւնը: Անփոփոխ իրողութիւնն է, որ աշխարհի վրայ ոչ մէկ բան կը կորսուի, այլ կը կերպարանափոխուի:

19-րդ դարուն Օսմանեան կայսրութիւնը հասած էր իր կործանման շրջանին:

Օսմանեան կայսրութիւնը

կայսրութիւն մըն էր առանց ինքնուրոյն ժողովուրդի, ինչպէս անցեալին եղած էին բոլոր կայսրութիւնները: Կայսրութիւն մըն էր, ուր թէ՛ մահմետական եւ թէ՛ քրիստոնեայ ազգեր նոյն դրօշակին տակ հաւաքուած էին: Օսմանեան ազգային հասկացութիւն մը, ազգային զգացում մը չկար եւ չէր ալ կրնար ըլլալ: 60-է աւելի ազգեր եւ ցեղեր իր մէջ պարփակող այս կայսրութեան մէջ օսմանցի թուրքը փոքրամասնութիւն մըն էր:

Կայսրութիւնը ազգային քայլերդ իսկ չունէր: Երբ 1908-ին Երիտթուրքերու յեղափոխութեամբ սուլթան Համիտ կը ստիպուէր սահմանադրութիւնը վերահաստատել, Սեյանիկի ու Կ.Պոլսոյ մէջ, ուրախութեան ցոյցերու ընթացքին, ազգային քայլերդի չգոյութեան պատճառով ֆրանսական «Մարսէյեզ»-ը երգուած էր:

Օսմանեան կայսրութեան մէջ թրքութեան գաղափարը եւ հետեւաբար թուրք ազգային գիտակցութիւնը չափազանց տկար էր:

Փոքր Ասիոյ մէջ Օսմանեան պետութիւնը հաստատող օսմանցի թուրքերը իրենց սահմանները ընդարձակելու համար՝ նախ կը գրաւեն շրջանի միւս թրքական «պէյլիք»-ները (իշխանութիւնները): Երբ Լենկիթիմուր Փոքր Ասիա կը մտնէ ու հողերը գրաւուած այդ թուրք պէյլերու օգնութեամբ օսմանցի սուլթանը՝ Պայազիտ Ա.-ը, պարտութեան կը մատնէ, զայն կալանաւորուած քաղաքէ-քաղաք կը պտտցնէ: Ի տես սուլթանին նուաստացումի ենթարկման՝ օսմանցին ինքզինք թրքութենէ ձեռքազատելով՝ թրքութեան դէմ ատելութիւն կը զգայ:

Իրենց կրօնքին՝ իսլամութեան, եւ իսլամութեան հետեւանքով ալ արաբական ու պարսկական մշակոյթներու ազդեցութեամբ, թուրքին ազգային զգացումը հետզհետէ կը տկարանայ: Մինչեւ 1911, օսմանեան դպրոցներու մէջ փոխանակ թրքական պատմութիւն դասաւանդուելու, Մուհամմէտի կենսագրութեամբ սկսած մահմետական-օսմանեան պատմութիւն մը կը սորվեցուի:

Մինչեւ 19-րդ դար՝ հայրենիքի ըմբռնում չկայ: Հայրենիք բառը կը գործածուի ծննդավայր կամ բնակավայր իմաստով:

Օսմանեան կայսրութեան դեկավարութիւնն ալ՝ սուլթանները եւ մեծ վեզիրները, որոնցմէ ոմանք խառն կամ ոչ-մահմետական ծագում ունեցած են, ի շահ այս բազմազգ պետութեան գոյատեւման՝ թուրք ազգայնականութեան բնաւ ուժ չեն տուած: Ճիշդ այդ պատճառով ալ, հանրապետական շրջանին, թուրք ազգային գիտակցութեան գաղափարը մշակող մտաւորական դասակարգը զանոնք մեղադրած է թուրք ցեղը բնաջնջելու յանցանքով:

Փոքր տարիքին մահմետականացուած (տեղի չի ունէ) տղոցմէ ոմանք բարձր ուսում ստանալէ ու պետական վարչամեքենային մէջ պատասխանատու պաշտօններու բարձրանալէ չեսոյց, թուրքերուն միշտ վատ աչքով նայած են:

Օսմանեան շրջանին մտաւորական ու հարուստ դասակարգին համար թուրք բառը հաճելի իմաստ մը չէ ունեցած: Գործածուած է որպէս անարգական բառ՝ գիւղացի, կոշտ, անուս, ըմբռնողութենէ զուրկ, անխելք իմաստներով: Թուրք պատմաբան Նաիմա Մուսթաֆա էֆենտի

իր «Թարիհ-է-թուրքի» անուն գրքին մէջ թուրքը ներկայացուցած է հետեւեալ բառերով՝ «ըմբռնողութենէ զուրկ, խարդախ, տգեղ դիմագիծով անձ մը»: Եւրոպացին ալ թուրքին վատ աչքով նայած է: Անոնց համար թուրք կը նշանակէր բարբարոս, բռնակալ, բիրտ, իմացականութենէ զուրկ անհատ մը:

Երբ հունգարացի արեւելագետ Վամպերի (Armin Vambery, 1832-1913) Միջին Ասիոյ վազկատուն ու թափառական թուրքերուն եւ Փոքր Ասիոյ օսմանցի թուրքերուն ցեղային ու մշակութային կապերուն մասին ելոյթներ կ'ունենայ, ուսեալ դասակարգը կ'ընդվզի, ինքզինք նախատուած կը զգայ: Վամպերի գերմաներէն-թրքերէն բառարան մը հրատարակած է, եւ 1861-ին ծայտեալ՝ տերվիշի մը երեւոյթով ու Ռեշիթ էֆենտի անունով, Կ.Պոլսէն մեկնելով մինչեւ Միջին Ասիա կը ճամբորդէ ու 1864-ին Կ.Պոլիս կը վերադառնայ: Նոյն տարին Լոնտոնի մէջ իր ճամբորդական նոթագրութիւնները կը հրատարակէ "Travels in Central Asia" խորագրով:



Ազգային գիտակցութեան չգոյութեան հետեւանքով, օսմանեան սահմաններուն մէջ ապրող ազգերու ազատագրական շարժումները փոխանակ ազգային ինքնորոշում նկատուելու, կը նկատուին որպէս ապերախտութիւն եւ դաւաճանութիւն: Թուրք, պուլկար, հայ, յոյն, հրեայ, արաբ, սերպ, մակեդոնացի չկար, այլ կար օսմանցի: Որով ինչո՞ւ սահմանային ազգերը կը բաժնուէին: Աստիկա ապերախտութիւն էր, դաւաճանութիւն էր:

Սահմանային ազգերէն սերպերու ազատագրական շարժումները արեան մէջ կը զսպուէին: Սակայն արտաքին ազդեցութիւններու տակ Օսմանեան պետութիւնը կը ստիպուի 1826-ին Ազգերմանի եւ 1828-ին ալ Էստրինէի համաձայնութիւնները ստորագրել: Ըստ այս բարեկարգումներու համաձայնութիւններուն՝ սերպ մը մահմետականի մը հաւասար պիտի նկատուի եւ հոն բնակութիւն հաստատած թուրք գիւղացին իր հողը սերպերուն ծախելով Փոքր Ասիա պիտի գաղթէ: Հակառակ այս համաձայնութեան, շատ քիչ թիւով գիւղացիներ իրենց հողը կը ծախեն ու կը գաղթեն:

Ըստ իսլամական կրօնքին՝ «Իսլամը ուրիշներէն միշտ բարձր է»: Յաղթական օսմանցին, արտաքին ճնշումներու հետեւանքով, երբ

կը ստիպուի իր ծառային (raya) հետ հաւասարէ հաւասար համաձայնութիւն ստորագրել, իր մէջ բարեկարգութիւններու գաղափարին դէմ ընդվզում մը, անհանդուրժողականութիւն մը կը սկսի:

1839-ի Նոյեմբեր 3-ին կը յայտարարուի «Կիւլհանէ Հաթիթ-ը Հիւմայուն»-ը (Կիւլհանէի հրովարտակը), Օսմանեան պետութեան բոլոր հպատակներուն շնորհելով օրէնքի առջեւ հաւասարութիւն:

Մեծ վեզիր Ալի փաշա, Ղրիմի պատերազմին վերջ տուող Փարիզի դաշնագրի (30 Մարտ 1856) նախօրեակին, Անգլիոյ դեսպան Լորտ Սթրաֆորտը (Stradford de Redcliffe) յորդորով, 12 Փետրուար 1856-ին, կը յայտարարէ Թանգիմաթ-ը Հայրիյէ (Tanzimat-i Hayriye) հրովարտակը (Հաթիթ-ը Հիւմային): Ըստ այս հրովարտակի 3-րդ յօդուածին՝ ոչ-իսլամ ժողովուրդներ որոշ պայմանաժամի մը մէջ պիտի պատրաստեն իրենց համայնքին ընկերային, կրօնական եւ մշակութային կառուցուածքը տնօրինող «կանոնագիր» մը ու զայն պիտի ներկայացնեն կառավարութեան: Տոքթ. Սերվիլէն, տոքթ. Նահապետ Ռուսինեան, Գրիգոր Օտեան, Գրիգոր Աղաթօն, Կարապետ Պալեան եւ Կարապետ Իւթիւճեան կը պատրաստեն մեր «Ազգային Սահմանադրութիւն» կոչուած, 145 յօդուածէ բաղկացեալ եւ 20 Մայիսին Ազգային Ընդհանուր ժողովին վաւերացեալ «կանոնագիր»-ը եւ 24 Մայիս 1860-ին պետութեան կը յանձնեն:

Կառավարութիւնը, կարգ մը փոփոխութիւններէ ետք, 99 յօդուածի վերածուած այս «կանոնագիր»-ը 17 Մարտ 1863-ին կը վաւերացնէ:

Ալի փաշայի եպարքոսութեան (վարչապետ) շրջանին, Կ.Պոլսոյ մէջ հայերու դիրքն ու ազդեցութիւնը աւելի կը զօրանան, ինչ որ ազգայնամոլ մահմետականներու նախանձը կը գրգռէ:

26 Նոյեմբեր 1876-ին, Միթհատ փաշա կը նշանակուի մեծ վեզիր: Թէեւ ան պետական շրջանակներու մէջ ճանչցուած էր որպէս յառաջդիմական անձ, բայց ըստ պուլկարներու՝ ան իրենց ջարդարարը, իրենց դահիճն էր: 1867-ի պուլկարական ինքնավարական պահանջներուն արիւնալի ձեւով արգելք եղած, գիւղացիները ահաբեկչութեան ենթարկած, զանոնք գլխատել տուած էր: Պուլկարներու 1875-ի ինքնավարական պահանջի շարժումն ալ նոյն ճակատագրին կ'ենթարկուի: Սեպտեմբերին օսմանեան գործը ահաբեկի ջարդ մը կը կատարէ: Խողխողուած 10.000 պուլկարներու լուրը ամբողջ Եւրոպան կը ցնցէ: «Ութ դար առաջ Կեզրոնական Ասիայէն Փոքր Ասիա եկած թուրքերը տակաւին չեն փոխուած», «Թուրքերը բռնութեամբ Եւրոպայէն վտարել» լոզունգները կը սկսին շրջագայել:

Չաւէն պատրիարք «Պատրիարքական Յուշերս» գիրքին մէջ կը գրէ. «Թուրքը Միջին դարուն մէջ Ասիոյ խորերէն դէպի Արեւմուտք յառաջանալով իր սուրի ուժով կը ցաւ տիրել Փոքր Ասիոյ: Բիւզանդական տէրութիւնը կործանելէ չեսոյց՝ Եւրոպայի արեւելքն ու Ափրիկէի հիւսիսը գրաւեց եւ այս երկիրներուն մէջ բնակող ազգերը բռնութեամբ իրեն հպատա-

ԺԹ. ԵՆ Ի. Դարերու Օսմանեան Հոգեբանութիւնը Եւ Հայկական Ջարդերը

Շարունակուած էջ 16-էն

կեցող: Այդ ոչ ժր թէեւ բաւական ժամանակ կրցաւ ճնշել այդ ազգերը, սակայն անոնք հետզհետէ քաղաքակրթութեան մէջ աւելի առաջանալով քան իրենց վրայ իշխողը, ժԺ դարուն մէջ սկսան թօթափել իրենց վրայ պարտադրուած լուծը եւ ազատիլ թրքական բռնապետութենէն: Թուրքը թէեւ տիրացած էր ընդարձակ երկիրներու, սակայն ոչ մէկ կերպով կրցած էր անցնող ժամանակամիջոցին մէջ զանոնք իրեն կապել եւ սիրաշահիլ, հետեւեալ սկսաւ զանոնք հետզհետէ կորսնցնել» (էջ 322):

Օսմանցին, Օսմանեան կայսրութեան ենթակայ քրիստոնեայ ազգի մը ինքնավար վիճակ ստանալու գաղափարին հետ երբեք չէ կրցած հաշտուիլ:

Եւրոպական պետութիւնները կ'որոշեն Կ.Պոլսոյ մէջ յատուկ դեսպանաժողով մը գումարել: Ներսէս Վարժապետեան պատրիարք (1874-1884) անգլիոյ դեսպանէն կը խնդրէ հայերու կացութիւնը նկատի առնել: Ասիկա Հայկական Հարցին առաջին անգամ օտար պետութեան մը ներկայացումն էր: Մինչ այդ Վանի շուկան կը հրկիզուի: Բոլոր խանութները, որոնք մեծամասնութեամբ հայերու կը պատկանէին, կը թալանուին: Ապահովութեան պաշտօնեաներն ալ կը մասնակցին կողոպուտին:

Սատրագամ Միթհատ փաշա, դեսպաններու ժողովին Օսմանեան կայսրութեան ներքին գործերուն միջամտութեան արգելք հանդիսանալու մտադրութեամբ, 30 Նոյեմբեր 1876-ին կը յայտարարէ Օսմանեան կայսրութեան առաջին սահմանադրութիւնը, որու պատրաստութեան մէջ իր քարտուղարը՝ Գրիգոր Օտեան, մեծ դեր կ'ունենայ:

Հայոց պատրիարքարանին՝ Արեւելեան Փոքր Ասիոյ հայաշատ նահանգներուն մէջ ոչ թէ ինքնավարութիւն, այլ հայ ժողովուրդի կեանքի պայմաններուն բարելաւումի համար տարիներէ ի վեր կատարած խնդրանքները միշտ անպատասխան կը մնան: Բարձր Դուռը Հայկական Հարցին բնաւ կարեւորութիւն չի տար:

Rev. Frederick Davis Greene (Պրուսա-Թուրքիա, 1863-1962, Ohio-USA) 1897-ին հրատարակած իր «The Rule of the Turk, and the Armenian Crisis» անուն գրքին մէջ ակնարկելով օսմանեան սահմանադրութեան՝ գրած է. «Երբ այս հրովարտակիրն մեկնաբանութիւնը եւ գործադրութիւնը բացարձակապէս թուրք կառավարութեան ձեռքն է, կարիք չկայ ըսելու, թէ ասիկա մեռեալ հրովարտակ մըն է»:

Պուլկարներու պաշտպան ու անոնց դաւանակից Ռուսիա, 24 Ապրիլ 1877-ի առաւօտեան, առանց իսկ պատերազմ յայտարարելու՝ Ռուսիոյ սահմաններէն Պուլկարիա կը մտնէ: Կը սկսի 1877-78-ի ռուս-օսմանեան պատերազմը: Ռուսիոյ կովկասեան բանակը, հրամանատարութեամբ ծագումով հայ գորավարներու՝ Յովհաննէս Լազարեւ, Յակոբ Ալիսաղով, Լորիս Մեղիքով, Արշակ Տէր-Ղուկասով, կը գրաւէ Արթուինը, Արտասանը, Անին, Կարսը, Պաթումը, Պէյլաքիտը, եւ արեւմտեանքի բանակն ալ մինչեւ Կ.Պոլսոյ արուարձաններէն Սան Ստեֆանո (այժմ՝ Եշիլքէօյ) կը հասնի: Ռուսներուն նեղուցներուն

չափազանց մտենալը Անգլիոյ մտահոգութիւն կը պատճառէ եւ իր նաւատորմը Տարտանել (Չանաք-քալէ) կը դրկէ: 3 Մարտ 1878-ին կը ստորագրուի Սան Ստեֆանոյի դաշնագիրը, որու համաձայն պուլկարները կը ստանան ներքին ինքնավարութիւն՝ Օսմանեան պետութեան ենթակայ պուլկար իշխանի մը ղեկավարութեամբ:



Ներսէս Վարժապետեան պատրիարք, 1874-1884

Սան Ստեֆանոյի դաշնագրի (19 Փետրուար (3 Մարտ) 1878) 16-րդ յօդուածով Հայկական Հարցը առաջին անգամ, պաշտօնապէս, միջազգային բնոյթ կը ստանայ: Բանակցութիւնները կը կատարուին Տատեան ընտանիքի ապարանքին մէջ օսմանեան պատուիրակութեան եւ Նիքոլա մեծ դուքսին միջեւ՝ Ներսէս Վարժապետեան պատրիարքին ներկայութեամբ: Օսմանեան կայսրութիւնը կը խոստանայ արեւելեան նահանգներուն մէջ բարեկարգութիւններ կատարել: Ռուս բանակն ալ, արեւելեան նահանգներուն մէջ իր ներկայութեամբ, պիտի ապահովէ բարեկարգումներու գործադրութիւնը:

Բարեկարգումները թրքահայաստանի հայ բնակչութեան համար չափազանց կենսական էին: Թուրքերու եւ քիւրտերու կատարած առեւանգումներն ու ոճրագործութիւնները չափ ու սահման չունէին: Արտը քաղէի, բերքը հաւաքել կառավարութեան մթերանոցի պաշտօնեային ներկայութեան՝ կարելի էր: Այլազան ծանր տուրքերով պետութիւնը կը շահագործէր հայ գիւղացին՝ մշակ եւ արհեստաւոր: 15-էն մինչեւ 75 տարեկան իւրաքանչիւր այր մարդ ամէն տարի «քելլէ վերկիսի» (գլխահարկ) պէտք է վճարէր, նաեւ հողի, անասունի... տուրք: Այդ տուրքերու գումարը ոմանց համար այնքան բարձր կ'ըլլար, որ անոնք այդ տուրքերը վճարել կարենալու համար մեծ քաղաքներ կ'երթային՝ զանազան ծանր աշխատանքներով դրամ շահելու: Թէեւ հայը գինուորական ծառայութեան չէր կանչուեր, սակայն պէտք էր «պետել վերկիսի» (փրկագին) վճարէր: Դատարանները «Շերիաթ մահքեմեսի» էին, իսլամ կրօնքի սկզբունքներուն համաձայն կը գործէին, ուստի քրիստոնեայ հայը օրէնքի պաշտպանութիւնը չէր կրնար վայելել: Երկու մահմետական վկայով հայ մը ամենածանր պատիժի ենթարկելը սովորական երեւոյթ մըն էր: Քաղաքին մէջ ձի հեծնելու իրաւունքը միայն օսմանցի իսլամին վերապահուած էր: Թուրքը իր

եաթաղանին սրութիւնը կրնար հաշտու մը վզին վրայ փորձել:

Անհաւատալի համեմատութիւններու հասած էր կաշառակերութիւնը պետական շրջանակներուն մէջ: Այլազան կամայական միջոցներով հողաշերտեր կը խլուէին հայոց ձեռքէն ու կեղծ կալուածագրերով կը նուիրուէին գիւղին թուրքերուն: Կարեւորութիւն չէր տրուեր, նոյնիսկ կը քաջարեւուէին քրտական պարբերական յարձակումները հայ գիւղերուն վրայ, հարստահարութիւնները, բռնաբարութեան դէպքերը:

Թուրքիոյ հայերը համիտեան բռնապետութեան ամբողջ շրջանին ապրած էին սարսափելի կեանք մը եւ կը գարհուրէին օտարներու հետ յարաբերութիւն ունենալ՝ պետութեան կասկածը իրենց վրայ չհրաւիրելու համար:

Ձաւէն պատրիարք կը գրէ. «Թուրք տիրապետութեան տակ զանազան եւրոպական ազգերը ազատագրուել վերջ՝ Ասիոյ կողմը բնակող ազգերը, Արաբ, Հայ, Մարոնի, Քիւրդ, եւայլն նոյն ձգտումը ցոյց տուին: Մահմետական ազգերը կրօնապէս կապուած էին Թուրքիոյ՝ խալիֆա-սուլթանով, եւ անտրտուն զլուխ կը ծռէին անոր, բայց քիստոնեաները, եւրոպական քաղաքակրթութեան աւելի հետամուտ ըլլալով, չէին կրնար հանդուրժել իրենցմէ պակաս քաղաքակրթուած ազգի մը պարտադրած լուծին ու միշտ անկէ ազատելու միջոցը կը հետապնդէին:

Հայը, որ 1908-ի Օսմ. Սահմանադրութենէն եւ սուլթան Համիտի անկումով գործի գլուխ եկող իթթիհատական կառավարութենէն յուսախաբ եղաւ, տեսնելով անոր հայահալած ուղղութիւնը եւ մանաւանդ Կիլիկիոյ կոտորածը, ինքն ալ սկսաւ աշխատել հայաբնակ նահանգներու վիճակը բարելաւելու եւ իր կեանքը ապահովելու համար դիմումներ ընել:

Արդէն հայ պաշտօնական շրջանակները սկսած էին ձայն բարձրացնել կառավարութեան հետապնդած քաղաքականութեան դէմ, որ հայ տարրը իր պայանական երկիրէն հեռացնելու, ցրուելու եւ բնաջնջելու նպատակը ունէր դարերէ ի վեր դրացի քիւրդը հովանաւորելով եւ զինելով ընդդէմ հայուն, եւ զաղտնի քաջալերանքով անոր տուած հարւածները հայու կեանքին, պատիւին ու ինչքին: Ի գուր կը բողոքէին առաջնորդներն ու պատրիարքները եւ անլսելի կը մնային տէրութեան կատարած դիմումները ու դիտողութիւնները, որոնք նոյնիսկ հիմնուած էին դաշնագիրներու վրայ:

Անցեալին Թուրքիոյ հողային ամբողջականութիւնը պահպանելու նախահոգութեամբ եւրոպական պետութիւնները դաշնագիրներու մէջ ներմուծած էին տրամադրութիւններ, որոնց անկեղծ գործադրութիւնը կրնար Թուրքիոյ եւ զինք բաղկացնող ցեղերու համար ճշմարիտ բարիք մը ըլլալ: Բայց թուրքերը հեռու էին ասիկա ըմբռնելէ: Ընդհակառակը բուռն կերպով կ'ատէին իրենց հպատակ ազգերը, զանոնք պատճառ նկատելով երկրին քայքայման եւ ասոր համար ալ միշտ կ'անիծէին իրենց նախահայրերը, մանաւանդ սուլթան Մուհամմէտ Ֆաթիհը, որ այդ երկիրները գրաւած ժամանակ քրիստոնեայ ժողովուրդները չէր իսլամացուցած կամ բնաջնջած եւ կ'աշխատէին անոնց այդ սխալը դարձա-

նել: Այս նպատակին հասնելու համար նախ օգտագործած են իսլամական կրօնական մոլեռանդութիւնը, իսկ յետոյ ազգայնամոլութիւնը որ եւրոպական աշխարհէն ընդօրինակուած էր: Սակայն իրենց այս ձգտումը հակառակ արդիւնք տուած եւ աւելի արծարծած է կիրքերը եւ ըմբոստացուցած հպատակ ազգերը» (էջ 323 եւ 324):

Արեւելեան նահանգներուն մէջ կեանքը անհանդուրժելի էր:

Սահմանային ազգերու ներկայացուցած բարեկարգութիւններու պահանջները կը նկատուէին կայսրութիւնը փլուզման ենթարկելու նպատակ ունեցող դաւաճանութիւններ: Բարեկարգութիւն խնդրող ժողովուրդները եւ բարեկարգութիւններուն գործադրութիւնը պահանջող պետութիւնները քրիստոնեայ էին: Քրիստոնեան արհամարհող օսմանցին այժմ կը սկսէր իրմէ աւելի գորաւոր քրիստոնեայ պետութեան դէմ ատելութիւն եւ իրմէ շատ աւելի փոքր քրիստոնեայ ժողովուրդներու դէմ ալ ռիսնուցանել: Իր այս ատելութեան ու ռիսի գգացումին յազուրդ տալու նպատակով՝ յարմար առիթներով փոքրամասնութիւնները կոտորած ու ջարդած է:

Թուրքը կը գգայ, թէ «օսմանցի» քաղաքականութիւնը այլեւս անանկացած է: Նոր քաղաքականութեան մը, նոր ինքնութեան մը կարիքը ի յայտ կու գայ: Հրապարակը կ'որոգուի Փանխալմիզմի եւ Փանթուրանիզմի գաղափարներով:



Տատեաններու ապարանքը

Յաղթանակէ-չաղթանակ վազած Օսմանեան կայսրութիւնը այլեւս «Եւրոպայի հիւանդ մարդը»ն է: Մեծ պետութիւնները զայն ինչպէս բաժնելու տեսակէտին մէջ չեն կրնար համաձայնիլ: Շնորհիւ այդ կացութեան՝ հիւանդը կը շարունակէ ապրիլ: Անգլիոյ վարչապետ Լորտ Սալիսբուրի (Lord Salisbury, 1830-1903) երեք անգամ վարչապետ (1885-1886, 1886-1892, 1895-1902), 1895ին, մեծ վեզիր Սայիթ Հալիմ Փաշայի ուղղեալ իր նամակին մէջ կը գրէ, թէ Օսմանեան կայսրութիւնը Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ համաձայնութեան մը չգոյութեան պատճառով կը շարունակէ գոյատեւել: Այդ համաձայնութիւնը երբեք չ'իրականանար: 16 Մայիս 1916-ին, Անգլիա եւ Ֆրանսա Օսմանեան կայսրութիւնը իրարու մէջ բաժնելու համար, դիւանագէտներ՝ անգլիացի Սըր Մարք Սայքսի (Sir Mark Sykes) եւ ֆրանսացի ժորժ Փիքոյի (Georges Picot) պատրաստած «Սայքս-Փիքո» (Sykes-Picot) համաձայնութիւնը կը ստորագրեն:

ԺԹ. ԵՆ Ի. Դարերու Օսմանեան Հոգեբանութիւնը եւ Հայկական Զարդերը

Շարունակուած էջ 17-էն

Ուսեալ դասակարգը եւ երիտ-թուրքերը հաշտուած էին «Հիւանդ մարդ»-ու գաղափարին հետ, սակայն չէին ընդուներ, թէ գայն փրկելու համար որեւէ բան ընել կարելի չէր: Երբ 23 Յուլիս 1908-ին էնվեր, այն ատեն տակաւին հազարապետ, Մակեդոնիոյ Քէօփ-րիւլի գիւղաքաղաքին մէջ յեղափոխութիւն կը յայտարարէ, «Հիւանդը բժշկեցինք» կ'ըսէ:

1908-ին հռչակուած սահմանադրութիւնն ալ փլուզուած չի կասեցներ:

Մինչեւ սահմանադրութեան վերահռչակումը, մահմետականը, իր կրօնական հասկացողութեամբ, ինքզինք միշտ ուրիշներէն զերազաս նկատած էր:

Երիտթուրքերու պարտադրութեամբ գործադրութեան դրուած սահմանադրութեամբ՝ ոչ-մահմետական տարրը մահմետականներու վայելած իրաւունքներուն ինք եւս կը տիրանար: Այս պարագան թէ՛ ժողովուրդի հասարակ խաւերուն եւ թէ՛ պետական որոշ շրջանակներուն մէջ դժգոհութիւն կը յառաջացնէ, որով սահմանադրութեան հռչակումով քրիստոնեայ փոքրամասնութիւններուն դէմ եղած ատելութեան զգացումը կը գործնայ:

Օսմանցի զինուորական եւ պետական ծառայողները, որպէս պատուաբեր ասպարէզ, իրեն վերապահած էր եւ տարբեր ասպարէզներու նկատմամբ շատ հետաքրքրութիւն ցոյց չէր տուած: 1882-ին, Կ.Պոլսոյ մէջ հաստատուած առեւտրական գիտութիւններու ուսուցման վարժարան մը աշակերտի չգոյութեան պատճառով զոցուած էր: Ոչ-պատուաբեր ասպարէզներ կը նկատուէին առեւտուրը, ճարտարութեամբ, արհեստաւորութիւնը: Փոքրամասնութիւնները իրենց ձգտած այս մարգերուն մէջ մեծ յաջողութիւններ արձանագրած էին ու հարստացած:

Ի հետեւանք Օսմանեան կայսրութեան զանազան առիթներով ու պատճառներով եւրոպական պետութիւններուն շնորհած առեւտրական մենաշնորհներուն (Capitulation)՝ օտարահայտակներ առեւտրական մեծ կեդրոններ հաստատած էին, ինչպէս նաեւ բնակութիւն: Ասոնք ու փոքրամասնութեանց որոշ մէկ մասը կը գործէին որպէս եւրոպացիներու առեւտրական գործակատարները:

Իթթիհատի ծննդավայրը՝ Սելանիկ (Thessaloniki), հրեաներուն եւ տէօնմէ հրեաներուն (Սապեթայ - Crypto-Jew) մեծամասնութիւն կազմած բազմազգ (60.000 հրեայ, 20.000 տէօնմէ, 40.000 յոյն, 20.000 մահմետական՝ թուրք, յայկանացի, պոսնիացի...) Ազատ Որմնադիրներու (Free Mason) օթեակներով

լեցուն քաղաք մըն էր:

Անգլիոյ եւ Ֆրանսայի առեւտրականները կը գործակցէին Կ.Պոլսոյ հայ եւ յոյն առեւտրականներուն հետ: Նոր շուկաներ փնտռող Գերմանիան առեւտրական կապեր կը հաստատէ Սելանիկի հրեաներուն ու տէօնմէներուն հետ, որոնք, իրենց կարգին, կ'ուզէին Կ.Պոլսոյ առեւտրական շուկան ձեռք անցընել: Իսլամացած հրեաներ առհասարակ կ'անդամակցէին «Մասետոնիա Ռիզորթա» օթեակին, որուն «վարպետ»-ն էր օսմանեան երեսփոխան էմանուէլ Քարսու եւ անդամներէն էին իթթիհատական Թալիաթ, Ճաւիթ, տոքթ. Նազըմ, Սիւլէյման Ֆեհմի, Իսմայիլ Ճանպուլատ, Միթհատ Շիւքրիւ եւ ուրիշներ: Մուսթաֆա Քեմալ (այսօր՝ Աթաթիւրք) այս օթեակին որպէս 80-րդ անդամ անդամակցելէ վերջ, 1907-ին անդամակցած է նաեւ իթթիհատ վէթերաքի կուսակցութեան՝ 322 անդամակցութեան համարով:

Կապուտաչեայ եւ ոսկեթել մագերով Մուսթաֆան նախակրթարանի ուսման համար շատ կարճ ժամանակով դրկուած է Հաֆըզ Մեհմետի թրքական դպրոցը, այսօր՝ Shimon Zwi-ի (Շեմսի էֆենտի) դպրոցը՝ Սելանիկի տէօնմէ համայնքի դպրոցներէն մին: Ուսումը շարունակելու համար կ'արձանագրուի տեղւոյն զինուորական վարժարանը, ուր իր ուսողութեան ուսուցիչը՝ Մուսթաֆա պէյ, անոր անունին վրայ կ'աւելցնէ Քեմալ (հասուն) բառը: Մուսթաֆա Քեմալ զինուորական ուսումը շարունակելու համար Սելանիկէն նախ կը փոխադրուի Մոնասթիր (Monastir, 1895), այսօր՝ Կ.Պոլսոյ (1899):

Առաջին Համաշխարհային Պատերազմին մասին առաջին լուրջ աշխատութեան՝ բրիտանական հեղինակաւոր The Times օրաթերթին կողմէ հրատարակուած 22 հատորնոց History of the War կոթողային երկասիրութեան մէջ գրուած է. «Մուսթաֆա Քեմալ ծագումով սելանիկցի հրեայ է, որ ազգայնական շարժումին բացայայտութիւն միացած է Յունիս 1919-ին (The Break-up of Turkey, The Times History of the War, vol. XXI, London, 1920, p. 433): Ամերիկեան հեղինակաւոր հրատարակութիւն մը՝ The Literary Digest, 1922-ի թիւին մէջ Մուսթաֆա Քեմալը կը բնութագրէ որպէս «ծագումով սպանական հրեայ, ծնունդով-դաստիարակութեամբ ուղղահաւատ մուսուլման» (The Sort of Man Mustafa Kemal is, The Literary Digest, October 14, 1922, vol. 75, no. 2, pp. 50-53):

Մուսթաֆա Քեմալի տէօնմէ ծագման մասին կը վկայէ նաեւ American Jewish Congress-ի 1958-1966 տարիներու նախագահ Dr. Joachim Prinz-ը (1902-1988): Ան կը գրէ. «Այդ յեղափոխութեան

Ժարգմանց՝ ՄԵԼԻՆԷ ԱՆՈՒՄԵԱՆ



առաջնորդներուն մէջ կային ճաւիթ պէյը եւ Մուսթաֆա Քեմալը: Երկուքն ալ կարծրահաւատ տէօնմէներ էին: Չափէն աւելի երիտթուրքեր կային նոր կազմուած յեղափոխական նախարարաց խորհուրդին մէջ: Ասոնք կ'աղօթէին Ալլահին, սակայն որպէս իրենց իսկական մարգարէ ունէին Չմիւռնիայի մեսիան՝ Shabbetai Zevi-ին (The Secret Jews, by dr. Joachim Prinz, 1973, pp. 111-122):

Յատկանշական է նոր ժամանակներուն երբայերէնով խօսիլ սկսած առաջին երեխայ եւ «արդի երբայերէնի հայր» Eliezer Ben-Yahuda-ի որդի Itamar Ben-Avi-ի (1882-1943) իր յուշագրութեան մէջ տուած տեղեկութիւնը: Ան, 1911-ին, Երուսաղէմ՝ հիւրանոցի մը մէջ (Kamenitz Hotel) կը հանդիպի դէպի Լիպիա ճամբորդող Մուսթաֆա Քեմալին: Իրենց խօսակցութեան կը մէջբերէ Մ. Քեմալի խօսքերը. «Ես տունը վէնետիկ տպուած շատ հին Թանախ (Tanakh - հրեական սուրբ գիրք) ունիմ: Եթէ ճիշդ կը լիչեմ, հայրս

զիս ուսուցիչի մը քով դրկեց, որ ան ինծի այդ գիրքը կարդալ սորվեցնէ: Որոշ բառեր դեռ կը լիչեմ»: Itamar կը գրէ. «Այն պահուն ան պահ մը լռեց: Աչքերը կարծես օդին մէջ բան մը կը փնտռէին: Յետոյ լիչեց. «Շեմա Իսրայէլ, ատոնայի էլիտենու, ատոնայի էլիտեն» ըսաւ»: Itamar հարիւրապետ Մուսթաֆային կ'ըսէ. «Ատիկա մեր մեծագոյն աղօթքն է»: Մուսթաֆա կը պատասխանէ. «Նաեւ իմ գաղտնի աղօթքն է, սիրելի պարոն»: Մուսթաֆա Քեմալ այս ըսելէ ետք՝ Itamar-ի ու իր գաւաթներուն մէջ խմիչք կը լեցնէ:

Մուսթաֆա Քեմալ իր մօտիկ ընկերներէն Նուրի ձոնքերի՝ իր ծագման մասին ըրած հարցումին շատ հետաքրքրական պատասխան մը կու տայ. «Ոմանք իմ մասին կ'ըսեն, թէ ես հրեայ եմ, որովհետեւ Սելանիկ ծնած եմ: Բայց պէտք չէ մոռնալ, որ Նափոլէոնն ալ գորսիկացի իտալացի մըն էր, բայց մեռաւ որպէս ֆրանսացի եւ այդպէս ալ կը լիչուի պատմութեան մէջ»:

(Շարունակելի-1)

Յեղասպանութեան Մասին 1939 Թ.


Շարունակուած էջ 8-էն

Խորին յարգանքներով»:
Պէյրութի գլխաւոր հիւպատոսութիւնը, ի տարբերութիւն Տամասկոսի հիւպատոսութեան, կը յայտնէ, որ արարողութեանը ոչ մի պաշտօնեայ չէ մասնակցած, եւ որ այդ եղած է իր ազդեցութեան շնորհիւ: Ան եւս կը յաւելնէ, որ դարձեալ պաշտօնեայ մը այցելած

է Սարաճեանին՝ վերջինիս սիրտը շահելու նպատակով:

Ինչպէս կը տեսնենք, հայերը 100 տարիէ աւել տեւած յոգնեցողիչ գործընթաց մը շարակած՝ հասած են մեր օրեր: Դեռ կը շարունակուին հայ ժողովրդի դիմադրութիւնը եւ թուրքիոյ պետութեան անիմաստ յամուռութիւնը:

Թարգմանց՝ ՄԵԼԻՆԷ ԱՆՈՒՄԵԱՆ




St. Gregory Armenian Apostolic Church Men's Forum
(Ladies & Families Always Welcome)

Thursday, April 28, 2022 – 6:30 P.M.

Guest Speaker: St. Gregory Deacon Andy Ylitalo, June 22' PhD Caltech

TOPIC: The Future Of Operating Rooms And Surgeries



* About one million surgeries per year are assisted by robots. As original patents expire major corporations will introduce new robots equipped with the latest technology: "artificial intelligence", virtual reality, 3D visualization, digital technologies....

* Why robots? Patients will have more successful, less invasive operations while elevating surgical performance variance between surgeons and shortening your hospital stay and sending you home enjoying a better quality of life.

* Andy is from Minnesota and graduated from Stanford with a degree in Engineering Physics. He is graduating from Caltech in June with a PhD in Chemical Engineering.

* Upon Graduation Andy will join Start-Up Company Ceevra developing advanced visualization software for surgeons for more successful outcomes in cancer surgery.

A Dynamic Speaker & Must Hear Event That Affects Everyone. Join us for a fascinating discussion of how this new generation of robots and artificial intelligence will transform operating rooms to promote safer, more successful surgeries.

At St. Gregory the Illuminator Church "Geragos Hall" 2215 E. Colorado Blvd., Pasadena

RSVP'S Are A Must As Dinner Will Be Served Church Donation \$25

Hilda Gourdikian: 626-695-9899, Ardash Gourdikian: 626-399-1914, Church Off.: 626-449-1523

Sponsor A Dinner in Memory of a Loved One, a Birthday, an Anniversary, in Recognition of a Friend or Family Member, a Graduation & for any Other Event. Please Contact Hilda Gourdikian above.

«Ահա ես Նոր Բան Սը Պիտի Ընեմ»

ԴՊԿՏ. ԳՐԱՅՐ ԸԵՊԵՏԵԱՆ

«Ու հին բաները մտքերնիդ մի բերէք: Ահա ես Նոր բան մը պիտի ընեմ» (Եսայեայ 43: 18-19):

«Ան որ լալով կ'երթայ, ցանելու սերմը տանելով, անշուշտ ցնծութեամբ ետ պիտի դառնայ, իր ցորենի խուրձերը բերելով» (Սաղմոս 126:6):

«Ետեւի եղածները մոռցած եմ ու առջեւի եղածներուն կը դիմեմ. նպատակը դիտելով դէպի Քրիստոս Յիսուսով եղած Աստուծոյ վերջին կոչումի մրցանակին կը վազեմ» (Փիլիպեցիս 3:13-14):

Եսայեայ մարգարէն կը մարգարէանայ հրեայ ժողովուրդին ազատագրումին վրայով: 587-582 (Ք.Ա.) տարիներուն Եհովան Նաբուզոթնոսոր թագաւորին միջոցաւ կործանեց Երուսաղէմը եւ աքսորեց հրեայ ժողովուրդը Բաբելոն: Եհովան հիմա կը խօսի նոյն ժողովուրդին ազատագրումին եւ հայրենիք վերադարձին մասին: Հոս մէջտեղ կուգայ Եհովային ուժը, «որ գորաւոր ջուրերու մէջ շաւիղ կը բանայ» (Եսայեայ 43:16): Եհովան ամէնակարող է. «որ կառքն ու ձին, գորքը եւ հզօրութիւնը կը հանէ» (Եսայեայ 43:17):

Եհովան կը խոստանայ ազատագրել հրեայ ժողովուրդը եւ վերադարձնել զիրենք հայրենիք: Ան կը յորդորէ իր ժողովուրդը ըսելով. «հին բաները մտքերնի չի բերեն» (Եսայեայ 43:18): Անցեալը վերջացած է եւ «նոր բան մը պիտի ընեմ»: Իսկ նորը: Այն որ Եհովան-Քրիստոս շինեց: Այս նորի իրականութեան մէջէն է, որ Աստուածաշունչի երկու կտակարանները կը միանան եւ գիրար կ'ամբողջացնեն: Այս նորը, որ խոստացուեցաւ հին կտակարանին մէջ է որ իրականացաւ նորին՝ Քրիստոսի աշխարհ գալով, եւ անոր մահուամբ եւ յարութեամբ:

Նորը միշտ դիւրին չէ ոչ ալ Աստուծոյ խոստացած ազատագրում-փրկութիւնը: Աստուծոյ յայտնութիւնը մարդուն եւ հաւաքականութեան եւ անոնց փրկութիւնը կրնայ ունենալ տարբեր միջոցառումներ՝ մեկնելով մարդուն եւ հաւաքականութեան ապրած ու ապրող կեանքի փորձէն ու փորձառութենէն: Այն ինչ որ կը մնայ հիմնական Աստուծոյ խոստումն է. «անապատի մէջ ջուրեր եւ անջրդի երկրի մէջ գետեր պիտի տամ» (Եսայեայ 43:20): Աստուած կը խոստանայ իր ժողովուրդին կեանքը վերածել կանաչ եւ ապրող իրականութիւններու: Այս իրականացաւ երբ «Տէրը Սիոնի գերութիւնը դարձուց, երազ տեսնողներու պէս եղանք» (Սաղմոս 126:1): Ազատագրութիւնը-փրկութիւնը որ «երազ» մըն էր եւ որ իրականացաւ:

Այս երազը իրականութիւն դարձնելը եւ անոր հասնիլը ունի իր գինը: Իսկ գինը: 126-րդ Սաղմոսին մէջ կը յիշուի աշխատանք մը, որուն մէջ կայ լաց. «Ան որ լալով կ'երթայ, ցանելու սերմը տանելով» (Սաղմոս 126:6): Այս նեղութեան ու աշխատանքի արգասիքը: Աստուած կը խոստանայ, որ մարդը. «ծնծութեամբ ետ պիտի դառնայ, իր ցորենի խուրձերը բերելով» (Սաղմոս 126:6): Եթէ աշխատանքին մէջ կայ նեղութիւն, բայց այդ նոյն նեղութիւնը կ'արտազրէ նորը: Իսկ նորը, ինչպէս Սաղմոսին մէջ կը յիշուի՝ «խուրձերը», որ կը բերուին՝ իմաս կը

շինուին: Խուրձերը աշխատանքի եւ կեանքի արդիւնք են:

Քրիստոս նորը շինեց մէկ կողմէ նեղութեամբ բայց նոյնքան նաեւ աշխատանքով եւ մարտնչելով: Ան խոստացաւ, թէ «ինքն է ճամբան, ճամբարութիւնը եւ կեանքը» (Յովհաննոս 14:6): Եթէ ան մեզի եւ աշխարհին խոստացաւ նոր կեանք, բայց Ան երբեք չըսաւ, թէ նոր կեանքը դիւրին է: Ան ապրեցաւ նեղութիւնը, որպէսզի իր խոստացածը իրականացնէ: Եթէ խաչին վրայ Ան չարչարուեցաւ եւ մահացաւ, այսինքն նեղութիւնը որ կրեց, այս բոլորը կը ներկայացնեն Քրիստոսի ապրած իրական կեանքը այս աշխարհի վրայ:

Քրիստոս նաեւ կրեց զրկանք, արհամարհանք, նախատինք եւ աւելին: Նեղութեան եւ չարչարանքի ու արհամարհանքի մէջէն Քրիստոս նոյնքան նաեւ տքնեցաւ եւ մարտնչեց: Մահուանէ ետք, երբ երեք օրեր գերեզման մնաց, ան պայքարեցաւ մահուան, չարին, եւ մեղքին դէմ: Եթէ մէկ կողմէ ակնյայտ է Քրիստոսի ապրած նեղութիւնը, նոյնքան նաեւ պայքարը: Քրիստոսի պայքարը նորը շինելու մէջ էր: Քրիստոսի յարութիւնը՝ յաղթանակը մահուան դէմ, ապացոյց էր որ ան յաղթեց մեղքին՝ հինին, եւ շինեց նորը մեր իւրաքանչիւրին համար: Առանց նեղութեան, չարչարանքի, աշխատանքի եւ պայքարի կարելի չէ, որ մարդուն եւ հաւաքականութեան մէջ նորը շինուի: Աստուծոյ խոստումը, թէ «նոր բան մը պիտի ընեմ» չի գար դիւրին եւ աժան: Հոն կայ նուիրում եւ ախտանք: Նոյնքան նաեւ զրկանք եւ նեղութիւն:


Քրիստոսի շնորհած նորի խոստումը ունի պարտաւորութիւն եւ զոհողութիւն: Եթէ հրեայ ժողովուրդը ապրեցաւ զոհողութիւնը եւ գիտակցեցաւ իր պարտաւորութեան, բայց նաեւ իւրաքանչիւրս աչօր պարտինք ընել նոյնը: Պիտի տեսնել, թէ նորը որ մեզի շնորհուեցաւ ոչ միայն պիտի պահէ մեր անձնական կեանքին համար, բայց նաեւ կերտել եւ սատարել հաւաքական եւ ընդհանրական կեանքերուն համար: Այս գործընթացքը ունի աշխատանք, որուն մէջ կայ նեղութիւն: Ու տակաւին, եթէ պիտի պահենք եւ շինենք նորը, կարելի չէ, որ «հին բաները մեր մտքերը բերենք»: Նորը պիտի պահանջէ նոր տեսլական, նոր գործելաձև եւ նոր կեանք:

Պօղոս Առաքեալ յստակ կերպով կը բնութագրէ, թէ ինչպէս քրիստոնեան պէտք է ապրի իր կեանքը եւ այս նոր գիտակցութեան մէջէն: Ան այսպէս կը յորդորէ. «ետեւի եղածները մոռցած եմ» (Փիլիպեցիս 3:13): Իսկ ետեւի եղածները: Ան չի խօսիր եւ չակնկալել, թէ պէտք է մոռնալ ինքնութիւն, ազգ, եւ մշակույթ: Ան կը խօսի եւ կ'ակնարկէ անցեալի կեանքը իր ձախողութիւններով եւ յաջողութիւններով: Կարելի չէ, որ մարդ եւ հաւաքականութիւն ապրին իրենց ձախողութիւններուն եւ անոնց ստեղծած ճնշումով եւ յուսահատութեամբ: Կարելի ալ չէ, որ մարդ եւ հաւաքականութիւն բաւակաւնան իրենց անցեալին ձեռք բերած յաջողութիւններով եւ մնան անոնց մէջ՝ ստեղծելով հանգստեան գօտի մը: Պօղոս Առաքեալ կը խօսի անցեալի կեանքի ապրած փորձը «մոռնալու» գրաւականին վրայով:

Շար.ը էջ 22

Յարուցեալ Փրկչին Քառասորեայ Երեւումները Ովսանմաներ - Կենսատու Սուրբ Խաչ - Լոյս Գերեզման

Քրիստոսի Յարութեան Աւետիսը սոսկ հաւատքի արդիւնք չեղաւ, այլ Յարուցեալ Փրկչին քառասորեայ երեւումներով հաստատուած իրողութիւն մը: Քառասուն օրեր մնաց իր առաքեալներուն հետ մինչեւ Դամբարձում:



ԴՊԿՏ. ԶԱԻԷՆ Ա ՔԵՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Սուրբ Զատիկին քրիստոնեայ բովանդակ աշխարհը կ'ապրի Յարութեան մշտնջենական աւետիսով՝ «Քրիստոս Յարեալ ի Մեռելոց»։ Ճանապարհ մը Մեծ Պահոց ընթացքով ստուերուն, Արեւագալով լուսաւոր, Ծաղազարդի ովսանմաներով դղրդիւն դէպի Երուսաղէմ մուտք, վերջին սաստերու ամպրոպներուն ուժգնութեամբ, խորհրդաւոր վերջին Ընթրիքով, հասնելու համար Խաչ եւ Գերեզման, ու անկէ քառասորեայ Յարութեան իսկական ներկայութիւն իսկական երեւումներով։

Աւետարանները կը հաստատեն որ Յարութեան Աւետիսը պատմութեան մէջ որպէս Փրկիչ ծնած ու քարոզած նոյն ինքն Աստուածորդուոյն լոյս գերեզմանէն վերակենդանացած ներկայութիւնը եղաւ իր առաքեալներուն առջեւ։ Առ հասարակ այն տպաւորութիւնը կը ստացուի թէ Փրկիչը իր գերեզմանէն յարութիւն առնելով բարձրացաւ առ Հայր, ինչպէս սրբապատկերներու ետին թաքուն կը տեսնենք։ Չմոռնանք երբեք քառասուն օրերը երբ Յարուցեալ Փրկիչը մնաց երկրի վրայ, միայն իր գերեզմանէն դուրս գալով եւ իրենները փնտելով ու անոնց հետ մնալով։

Տօնը Կենսատու Յարութեան տօնն է, կեանք պարգեւող, գերեզմանէն անդին, որ եղաւ լրումը Քրիստոսի սուրբ առաքելութեան, ոչ թէ վերջ մը, այլ մանաւանդ մշտնջենի կեանք՝ Բեթղէհէմէն սկսած եւ Յարութեամբ յաւէտ կենդանի։ Աւետարանական իւրաքանչիւր տուեալներով Յարուցեալ Քրիստոս քառասուն օրեր երեւցաւ նախ գերեզման փութացող կանանց, ապա վերնատան մէջ ակնկառոյց սպասող առաքեալներուն, եւ պատեհութեամբ մըն ալ Երուսաղէմէն իմասուս ոտքով ճամբորդող զոյգին, մին Կղէովպաս եւ միւսը անունով անծանօթ հետեւորդ մը, որոնց ԱՆՄԱՆՕԹԸ եղաւ բացառիկ հիւրը ընթրելու իրենց հետ երբ էմմաուս պիտի հասնէին։ Կը խօսակցէին երեքը, առանց գիտնալով թէ ով էր իրենց երեւցողը, խօսելով Փրկչին գլխուն եկած փորձանքներու մասին, մինչեւ որ հասան տուն ուր սեղանը օրհնեց ու յայտնեց ինքզինքը։ Յարութեան առաջին առա-

ւտուն իսկ երբ Մարիամ Մագդաղենացի եւ «միւս Մարիամ»ը գերեզման գացեր էին, մեծ պարմացումով գերեզմանը փակող ծանր քարը մէկդի գլորուած տեսան ուր Յիսուսի մարմինը չկար։ Վախցան անշուշտ։ Գերեզմանի պարտէզին մէջ տեսան անձ մը, պարտիզպանը խորհելով, հարցուցին եթէ Տիրոջ մարմինը վերցուցած էին գերեզմանէն։ «Մարիամ» ըսելով հրաշք մը եւս տեղի կ'ունենար երբ «մի' լաք, մի' ողբաք» կ'ըսէր կարծեցեալը։ Յարուցեալ Քրիստոսն էր կանգնած կիներուն դէմ։

Տօնական օրերու մեր շարականներէն մին պատկերաւոր կ'երգէ յարութեան աւետիսը ըսելով,

Այսօր վիմիմ հաւատոյ եւ Յովհաննոս սիրելոյ

Ընդ հակառակս ընթացեալ պատմին աշակերտացնաւելով

Յարուցեալ է Տէրն ի գերեզմանէն։

Հաւատքի վէմը Պետրոսն է, իսկ Յովհաննէսը Յիսուսի սիրած աշակերտը։ Երբ երկուքը լսեցին իրարանցումը, հակառակ ուղղութեամբ վազեցին, մին դէպի գերեզման, միւսը գերեզմանէն դէպի վերնատուն, անհաւատալին ստուգապէս փոխանցելու համար հոն սպասող առաքեալներուն ու անոնց հետաւորներուն։ Թովմաս առաքեալ բացակայ էր ու չհաւատաց, եւ սակայն Յարուցեալ Քրիստոս երկրորդ անգամ երեւնալով կանչեց զինք իր մօտ եւ ցոյց տուաւ ձեռքերուն եւ ոտներուն վերքերը։ Թովմաս ցնցուած, Տիրոջ ոտներուն ինկաւ եւ, տեսաւ ու հաւատաց։ Յարուցեալ Փրկիչը կ'աւելցնէ «Երանի անոնց որոնք առանց տեսնելու պիտի հաւատան»։

Սուրբ Յարութեան պատգամը Փրկչին մնայուն ներկայութիւնը եղաւ Քրիստոնեայ աշխարհին ճիշդ այնպէս ինչպէս այդ քառասուն օրերուն երբ անհաւատն ու երկմիտը տեսան, շօշափեցին Տիրոջ ձեռներն ու ոտները։ Իսկ Ներսէս Շնորհալի Հայրապետ մէկ ալ շարականով երգեց՝ «Ձեռք ընդ ձեռաց, ոտք ընդ ոտից ընթանալեաց», այս անգամ հաւատքէն ողղակի գործի հրաւիրելով, Խաչին վրայ գամուած ձեռքերուն եւ ոտներուն ընդ (փոխարէն) անոնց տէրը դառնալ ու անոնց գործը շարունակել Յարուցեալ Փրկչի մշտնջենի ներկայութեամբ՝ իր Սուրբ Եկեղեցիին միջոցաւ։

Վերապլաց Նոր ԱստղերԴՆ՝ Լոռի Թաթուլեան (Երգիծագիր եւ Կատակերգակ Դերասանուհի)



ԱՄՆ-ի շարժապատկերի եւ թատերական կեանքի ժամանակակից պատմութեան մէջ դժուար է հանդիպիլ հայուհի մը, որ ըլլայ թէ երգիծագիր եւ թէ կատակերգակ դերասանուհի: Այդպիսի հազուագիտ երեւոյթներէն մին կը մարմնացնէ լոսանձելլոսահայ գաղութի շնորհալի արուեստագիտուհի Լոռի Թաթուլեան: Ան ծնած ու մեծցած ըլլալով գրասէր շրջանակի մէջ, իր ուշադրութեան կիզակէտը հանդիսացած է թատերական աշխարհն ու թատերգութիւնը:

Լոռի Թաթուլեան մօտէն շփում ունենալով թատերական եւ գեղարուեստասէր շրջանակներուն հետ, իր մէջ կոչում գագած է նուիրուիլ այդ ասպարէզին, որուն մէջ իրենց ներդրումն ունեցած են նաեւ հօրենական շրջանի իր երէց հարազատները:

Տեղական մամուլին հետ իր ունեցած մէկ հարցազրոյցին ընթացքին Լոռի Թաթուլեան նշած է հետեւեալը. «Ես կատակերգակ մըն եմ: 2009 թուականէն սկսեալ գրած եւ արտադրած եմ The Big Bad Armo Show թատերախաղը որ այլազանութիւն մը կ'ընդգրկէ հայամերիկեան փորձին մասին»:

Արդարեւ վերոյիշեալ թատերախաղը մեծ ընդունելութիւն գտաւ բովանդակ երկրին մէջ, Նիւ Եորքի Պրոտուէնէն սկսեալ մինչեւ Սան Ֆրանսիսքօ եւ Սան Տիեպօ ու Լոս

Անձելլոս: Իսկ այս օրերուն այդ ներկայացումը կը շարունակուի Պըրպէնքի Colony Theater-ի մէջ: Վերջերս միւլտիմիալ բիւսը՝ PBS հեռուստակայանէն սփռուեցաւ տնօրինութեամբ Սթեֆանի Կարոյեան Այանեանի:

Շնորհալի հայուհին՝ մրցանակ շահած է նաեւ երկու կատակերգութիւններու մենախօսուութեամբ հանդէս գալուն համար: Նշենք նաեւ որ Լոռին թատերական Արուեստի ուսմանց BA վկայականն ստացած է Սան Տիեպօի համալսարանէն: Ունի 100 էսքիզներ, որոնց մէջ հեղինակը դիպուկ կերպով կը մարմնացնէ տարբեր կերպարներ եւ նկարագրային առանձնատիպութիւններ: N.E.A.ի մրցանակին արժանացած երգիծագիր Լոռի Թաթուլեանի մասին դրուատանքով արտայայտուած է LA Weekly պարբերականը, միաժամանակ բարձր գնահատելով իր կատակերգութիւնները:

Արուեստագիտուհին ցարդ բազմաթիւ հռչակագիրներ ստացած է, որոնց շարքին Լոս Անձելլոսի քաղաքապետ էրիկ Կարսեթիէն, Գալիֆորնիոյ խորհրդարանի Ներկայացուցիչներ Մայք Կաթոյէն եւ Քեվին Տէ Լէոնէն:

Նորանոր յաջողութիւններ կը մաղթենք խոստմնալից հայուհիին:


Գ. Մ.

Իրան/Պարսկաստանի Հայ Համայնքները Գրքի շնորհանդէսը

Տեղի պիտի ունենայ Ապրիլ 28-ին Երեկոյեան ժամը 7-ին Իրանահայ Միութեան սրահում 117 S Louise St, Glendale, CA 91205

Պրոֆ. Ռիչըրդ Յովհաննէսեանի խմբագրութեամբ վերջերս լոյս տեսած «Իրան/Պարսկաստանի Հայ Համայնքները. Պատմութիւն, Առեւտուր, Մշակոյթ» հատորը, որ 15-րդ եւ վերջին հատորն է "Historic Armenian Cities and Provinces" (Հայկական պատմական քաղաքներ եւ նահանգներ) շարքի, պիտի ներկայացնի ինքը՝ Պրոֆ. Ռիչըրդ Յովհաննէսեանը:

Գիրքը պարփակում է պատմութիւնը Ատրպատականի հայ համայնքի ու հայ-պարսկական յարաբերութիւններին՝ հնագոյն դարերից մինչեւ մեր օրերը, պատմութիւնը Մաքուրի եւ Թաւրիզի շրջաններին՝ Սուրբ Թադէոս Առաքեալ, Սուրբ Ստեփանոս եւ Ջորձորի վանքերով ի յայտ է բերում Ատրպատականի կարեւոր լեռնային հայ եւ պարսիկ յեղափոխական շարժումներին մէջ, նկարագրում է Ազ Աշխարհամարտի ընթացքում թուրք բանակի ներխուժման արդիւնքում քրիստոն-



եայ բնակչութեան ջարդը Ուրմիայում, Խոյուն ու Սալմաստում եւ Ատրպատականի հայոց առաջնորդ Ներսէս Արք. Մելիք-Թանգեանի գերագոյն ճիգը օգնութիւն բերելու, փրկելու տուժածներին ու Ցերասպա-

Մախքո Յենրիկ եւ Տիկին Մարիթա Անասեաններու Ծննդեան Տարեդարձի Անմոռանալի Խրախճանքը



ԽԱՉԻԿ ԳԱՆՈՅԵԱՆ

Կիրակի, Ապրիլ 10, 2022 կ.է. ժամը 1:30-էն սկսեալ, Անասեաններու շքեղ բնակարանին մէջ, տօնական իսկական մթնոլորտ մը կը տիրէր: Այդ օր 100-է աւելի հրաւիրեալներու ներկայութեամբ, հայկական շէն ու շէնչող մթնոլորտի մէջ նշուեցաւ գաղութիս Սիփան մեծանուն երգչախումբի հիմնադիր եւ 40 տարիներու ղեկավար, 12 գիրքերու հեղինակ՝ Հենրիկ Անասեանի ծննդեան 80-ամեակը եւ իր տիկնոջ, շնորհաշատ ծանօթ երգչուհի, մանկավարժ՝ Տիկ. Մարիթա Անասեանի ծննդեան 75 ամեակը:

Մախքո շէնրիկը ծնած է Ապրիլ 10-ին, իսկ Տիկ. Մարիթայի Ապրիլ 7-ին:

Մօտաւորապէս ժամը 2:00-ին առատ եւ բազմազան խմիչքներու եւ կերակրատեսակներու սպասարկութենէն ետք, գործադրուեցաւ ազգային, էստրատային, ժողովրդական երգերու, խաղերու, պարերու եւ արտասանութիւններու ինքնաբերական եւ անպատրաստից յայտագիր մը, ընկերակցութեամբ Տիկ. Մարիթայի դանշակի նուագով եւ Ռաֆֆի Թորոսեանի ձեռնադաշնակի կատարումներով:

Սիփան երգչախումբի վարչութեան ատենապետ Պրն. Ռաֆֆի Թորոսեան, երգչախումբի անդամներուն անունով սրտանց շնորհաւորեց Մախքոն եւ իր երախտագիտութիւնը յայտնեց անոր, որ 20 տարիներ շարունակ Սիփանի մէջ երգելով, շատ բան սորվեցաւ եւ իւրացուց երգարուեստի բնագաւառէն ներս:

Ապա Պրն. Թորոսեան բոլոր անդամներուն անունով շնորհաւորեց:

րեց Տէր եւ Տիկ. Անասեանները այս տարեդարձին առիթով, մաղթելով անոնց երկար եւ բեղուն տարիներ: Ապա շարունակուեցաւ բաժակաճառերու եւ սրտագին խօսքերու մասը:

Ժամը 7:00-ին բոլոր ներկաներուն միաբերան երգեցողութեամբ երգուեցաւ տարեդարձի երգը եւ կատարուեցաւ կարկանդակի հատումը:

Վերջաւորութեան Մախքոն շատ յուզիչ խօսքով մը շնորհակալութիւն յայտնեց Սիփան երգչախումբի եւ բոլոր ներկաներուն, բնելով. «Գուք իմ հարազատ ընտանիքի անդամներուն պէս էք», եւ փոխադարձաբար մաղթելով բոլորին ամէն բարիք:

Պրն. Ռաֆֆի Թորոսեան ի ուրախութիւն բոլոր ներկաներուն, յայտարարեց թէ համաճարակի պատճառաւ մօտ երկու ու կէս տարի Սիփան երգչախումբը դադարած էր փորձեր ընել եւ ելոյթներ կազմակերպել: Ան յայտարարեց թէ Սիփան երգչախումբը մօտիկ օրերուն պիտի սկսի իր փորձերուն եւ ելոյթներուն, բոլոր ներկաներուն մեծ ուրախութիւն պատճառելով:

Արդարեւ, կ'արժէ 80 տարի ապրիլ այսպիսի ճոխ տարեդարձ մը տեսնելու եւ յայպիսի պատուաբեր ծառայութիւններով կեանքը լեցնելու, ինչպիսի եղած է Հենրիկ եւ Մարիթա Անասեաններուն կեանքը:

Անցաւ, անվիշտ եւ ուրախ ու երջանիկ նորանոր տարիներ կը մաղթենք մեր թանկագին բարեկամներուն՝ Հենրիկ եւ Մարիթա Անասեաններուն, որոնք Լոս Անձելլոսի գաղութի պարծանքն են անկասկած:

նութիւնը վերապրած, Ատրպատական հասած հայ գաղթականներին:

Հատորը ընդգրկում է նաեւ Նոր Զուղայի պատմութիւնն ու նրա կարեւորութիւնը պարսիկ եւ հայ ժողովուրդների պատմութեան մէջ, հոյակապ արուեստի գործերերով, վանքային համալիրով, եկեղեցիներով ու թատրոնով: Զուղայցի արուեստագէտ Սմբէթի գունագեղ պատաստներով ներկայացնում է Նոր Զուղան եւ շրջակայքը: Լուսարձակի տակ է առնում շրջանի առեւտրականների գործունէութիւնն ու ժամանակին նրանց վայելած հռչակը համաշխարհային առեւտրական ցանցում՝ Արեւելեան Ասիայից մինչեւ Ռուսաստան եւ Արեւմտեան Եւրոպա:

Հատորը արծարծում է նաեւ ներկալի հայ ղեկավարութեան յարաբերութիւնը Թեհրանի իշխանութիւնների հետ, ապա՝ հայութեան հոսքը Հարաւային Քալիֆորնիա եւ ներգրաւուած տեղի ընկերատնտեսական կեանքի մէջ:

Հատորը նուիրուած է Դքտր վարդիթեր Կոճոլոգեան Յովհաննէսեանին՝ որ եղել է Ռիչըրդ Յովհաննէսեանի կեանքի ընկերն ու երկարամեայ գիտակ եւ բարեջան գործակիցը:

Գրքից օրինակներ կը վաճառուեն տեղում:

Մուտքը ազատ է գ տեղի կունենայ հիւրասիրութիւն:

Օդի Աղտոտուածութեան Պատճառով ԱՅԿ Եւրոպական Տարածաշրջանին Մէջ Ամէն Վայրկեան Մէկ Մարդ Կը Մահանայ



7 Ապրիլին կը նշուի նաեւ որպէս Առողջութեան համաշխարհային օր, որու ծիրին մէջ Առողջապահութեան նախարարութիւնը, Միացեալ ազգերու կազմակերպութիւն (ՄԱԿ) ու Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութիւնը (ԱՀԿ) կոչ կ'ընեն միաւորելու ջանքերը առողջ մոլորակ ունենալու եւ պաշտպանելու համար:

Ըստ ՀՀ Առողջապահութեան նախարարութեան տարածած հաղորդագրութեան, իւրաքանչիւր տարի աւելի քան 13 միլիոն մահ՝ ամբողջ աշխարհին մէջ, այդ շարքին՝ 1,4 միլիոնը՝ ԱՀԿ եւրոպական տարածաշրջանին մէջ, կ'առաջանայ շրջակայ միջավայրի աջնապիսի գործօններու հետեւանքով, որոնք հնարաւոր է կանխարգիլել:

»Միայն օդի աղտոտուածութեան պատճառով ԱՀԿ եւրոպական տարածաշրջանին մէջ ամէն վայրկեան մէկ մարդ կը մահանայ: Մարդկային ազդեցութեան հետեւանքով կլիմայի փոփոխութեան աննախադէպ արագութեան եւ մարդու առողջութեան վրայ կործանարար ազդեցութեան պայմաններուն մէջ յաճախ ամենաշատը կը տու ժեն ամենախոցելիները:

Վտանգաւոր թափօնները, աղտոտուած ջուրը, անբաւարար առողջապահական մաքրութեան պայմանները, ծխախոտը եւ արդիւնաբերութեան վատ կառավարումը այն խնդիրներէն քանի մը հատն են միայն, որոնք սպառնալիք են ոչ միայն մարդոց առողջութեան, այլեւ՝ մեր օդին, ջուրին եւ շրջակայ էքոհամակարգերուն համար:

Մարդոց, կենդանիներուն եւ բոյսերուն տրուող հակապիտ թիքները եւ այլ հակամանրէային դեղերը կը մնան շրջակայ միջավայրին եւ մեր խմելու ջուրին մէջ՝ ստեղծելով հակամանրէային դեղերու նկատմամբ դիմակայուն սուսուրմաններ եւ դեղամիջոցներու նկատմամբ դիմակայուն այլ օրկանիզմներ:

»Մէկ առողջութիւն» մօտեցումը այսօր աւելի քան երբեք է արդիական է՝ հաշուի առնելով օրէ օր մոլորակին սպառնացող համաճարակներն ու տարաբնոյթ հիւան դու թիւնները: Վերջին տարիներուն կեանքը ցոյց տուած

է, որ առողջապահական համակարգերը պէտք է ըլլան աւելի ուժեղ, առաւել հզօր ու մարտունակ՝ դիմակայելու երկրագունդի համաշխարհային փոփոխութիւններով պայմանաւորուած մարտահրաւէրներուն: Այս համընդհանուր ու համամարդկային խնդիրներու լուծման գործին մէջ առողջապահութեան նախարարութիւնը համահունչ է գործըն երաջին քաղաքականութեան, որ միտուած է »Պաշտպանելով մոլորակը՝ պաշտպանենք մեր առողջութիւնը« շղթայի ապահովման: Սա առիթ է եւս մէկ անգամ անդրադառնալու եւ գնահատելու մեր բժիշկներն ու բուժքոյրերը, որոնք ամէն օր կը պայքարին մեր բնակչութեան առողջութեան պահպանման համար՝ յաճախ իրենց սեփական առողջութեան հաշուոյն», նշած է առողջապահութեան նախարար Անահիտ Աւանեսեանը, նշուած է հաղորդագրութեան մէջ:

ՄԱԿ-ի մշտական համակարգող Լիլա Փիթրոզ Եասիան ընդգծած է, որ ՄԱԿ-ի հայաստանեան գրասենեակը իր գործընկերներուն հետ միասին կը շարունակէ աջակցիլ Հայաստանին՝ աւելի կայուն եւ առողջ միջավայր ունենալու, առողջապահական խնդիրներու վերաբերեալ հանրային իրազեկուածութեան բարձրացման եւ մարդոց, յատկապէս բնակչութեան առաւել խոցելի եւ անտեսուած խումբերուն համար, որակեալ բժշկական ծառայութիւններ մատուցելու հարցով:

»Մարդկանց եւ մոլորակին առողջութիւնը պահպանելու համար մեր հաւաքական պարտականութիւնն է հրատապ քայլերու ձեռնարկել՝ ձեւաւորելով հասարակութիւններ, որոնք առաջնահերթութիւն կու տան բոլոր քաղաքացիներու ներառական եւ հաւասար բարեկեցութեան», նկատած է ան:

Հայաստանի մէջ ԱՀԿ ներկայացուցիչ դոկտոր Ժիւստին Թաուիլան իր հերթին ըսած է, որ առողջ միջավայրը Հայաստանի եւ որեւէ այլ երկրի մէջ կայունութեան եւ զարգացման հիմքն է:

»Այս տարուայ Առողջութեան համաշխարհային օրուայ թեման կը լինէնք, որ շրջակայ միջավայրի եւ առողջապահական խնդիրները կը պահանջեն արդիւնաւէտ արձագանգ՝ ամբողջ կառավարութեան եւ ամբողջ հասարակութեան կողմէ»:

Առողջապահութեան նախարարութիւնը, Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութիւնը եւ ՄԱԿ-ի հայաստանեան գրասենեակը կը նշեն Առողջութեան համաշխարհային օրը մէկամսեայ արշաւով, որ պիտի ներառի առցանց միջոցառումներ՝ լուսանկարչական մրցոյթ, ցուցահանդէս եւ ընկերային մետիայի միջոցով իրականացուող միջոցառումներ: Համատեղ արշաւը կոչ կ'ընէ բոլոր քաղաքացիներուն՝ դառնալու լուծման մէկ մաս՝ միանալով յանուն մեր մոլորակին, յանուն մեր առողջութեան:

HMM Ladies Auxiliary

Mother's Day Celebration - Dinner

Salsa Dancers, DJ, Lottery

Tickets Donation \$100.

SATURDAY, MAY 7, 2022 AT 7:30 PM

AEBU Center 1060 N. Allen Ave. Pasadena

40 Ամեակ Գերսամ Ահարոնեանի Մահուան

Շարունակուած էջ 7-էն

րանի ուսուցչուհի, ԹՄՄ վարչութեան անդամ եւ առցանց ծրագրերու մասնակից Տիկ. Սեւան Տէր Պետրոսեան, որուն յաջորդեց Արեւմտեան ԱՄՆ-ի հայ համայնքի ամենէն տարեց ու փորձառու մտաւորականներէն արդէն նահապետ դարձած խմբագիր եւ լրագրող Փրոֆ. Օշին Քէշիշեան, որ աւելի քան 60 տարիներէ ի վեր կը խմբագրէ The Armenian Observer շաբաթաթերթը:



Տակաւին աշակերտական նստարանէն ծանօթացած ըլլալով Ընկ. Գ. Ահարոնեանին որպէս հայոց պատմութեան, ընդհանուր ազգաց եւ աշխարհագրութեան ուսուցիչ, Փրոֆ. Օ. Քէշիշեան շեշտեց այն համոզմունքը, որ իր լրագրական եւ խմբագրական կեանք մտնելը կը պարտի Գերսամ Ահարոնեանին, որ տակաւին 1950-ական թուականներուն իրեն վստահած էր «Ջարթօնք-Սփոր»ը, որ մեծ ժողովրդականութիւն կը վայելէր Պէյրութի եւ առհասարակ Միջին Արեւելքի երիտասարդութեան մօտ:

Իմ լրագրական, գրական եւ մշակութային կեանքս կը պարտիմ երկու ուսուցիչներուս՝ Վահէ-Վահեանին եւ Գերսամ Ահարոնեանին: Անշուշտ միւսներն ալ ունին իրենց ներդրումը, սակայն առաւելաբար Գերսամ Ահարոնեանը ինծի ճանապարհ ցոյց տուաւ որ կեանքս նուիրեմ հայութեան եւ մասնաւորաբար մամուլին, - ըսաւ մամուլի վաստակաւոր գործիչը, - ապա անդրադառնալով Գ. Ահարոնեան ուսուցիչին ան շեշտեց, - դասաւանդութեան ընթացքին միշտ նմանութիւններ եւ հակադրութիւններ կը ներկայացնէր, այլ ազգերու պատմութիւններէն նոյն ժամանակահատուածին պատահած իրադարձութիւնները կը չիշատակէր՝ դասերը շատ աւելի հասկնալի եւ ըմբռնելի դարձնելով:

Փրոֆ. Օ. Քէշիշեան մեծ կարեւորութեամբ ընդգծեց իր ուսուցչին՝ սերունդ մը լրագրողներ եւ մամուլի աշխատակիցներ պատրաստած ըլլալու պարագան, արդարեւ այդ սերունդին քսանեակ մը մտաւորականներ ոտքի պահեցին հայ թերթն ու մամուլը վերջին չիսուն տարիներու ընթացքին:

Յուզիչ էր լսել նաեւ մեր ուսուցիչին ձայնը: Ան 1965-ին Պէյրութի կեդրոնական Ռիվոլի սրահին մէջ բացառիկ ելոյթ մը ունեցաւ Յեղասպանութեան 50-ամեակին առթիւ: Մենք, որպէս վերջին կարգի աշակերտներ նստած ըլլալով ետեւները, հպարտութեամբ եւ յուզմունքով լսեցինք զինք: Մենք երբեք այդքան հայրենասիր-

րական հրայրքով ելոյթ մը չէինք լսած, մանաւանդ Պրն. Գերսամ Ահարոնեանէն: Այդ օր ինք Սարգսյանի արժիւի նման իշխեց ներկաներուն սիրտերուն ու հոգիներուն վրայ: Այս առթիւ մեր շնորհակալութիւնը պիտի յայտնենք իր աշակերտներէն Տիգրան Էքիզեանին, որ գտեր բերեր էր այդ ելոյթը:

Հանդիսութեան պատշաճ ամուսնով հանդէս եկաւ Տիկ. Անի Մարսէլեան (հայերէնի ուսուցչուհի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Յովսէփեան վարժարանի)՝ արտասանելով Համաստեղի «Հայու հոգին» եւ «Յաւերժի մեծ ձամբորդ» Չարենցի «Գովք Հայաստանի»-ն:

Նշուեցաւ նաեւ ՌԱԿ Արեւմտեան ԱՄՆ-ի «Գերսամ Ահարոնեան» ակումբի քառասունամեակը, որ լրացած էր անցեալ տարի, բայց համավարակի պատճառով կարելի չէր եղած տօնախմբել: Ընկ. Խ. Ճանտոյեան այս առթիւ ներկայացուց անցնող չորս տասնամեակներուն ակումբին բերած կուսակցական, ընկերային եւ հասարակական դերը շրջանակէն ներս՝ յատկապէս ընդգծելով ակումբի բերած նիւթական նպաստը «Նոր Օր»ի եւ Հայ դատի աշխատանքներուն մէջ:

Հաճելի անակնկալ մըն էր բոլորիս համար ներկայութիւնը Գ. Ահարոնեանի եղբորորդուհի՝ յայտնի սրտաբան Տոքթ. Վիգէն Ահարոնեանի, որ դրուագներ պատմեց Ձէյթուն-Մարաշ ապստամբ Ահարոնեաններու ընտանիքին փրկութեան հանգամանքներուն մասին: Այս առթիւ Տոքթ. Վ. Ահարոնեան իր եւ Ահարոնեաններու շնորհակալութիւնը փոխանցեց ձեռնարկի կազմակերպիչներուն:



Բեմ հրաւիրուեցաւ ՍԳՀԿ-ի ղեկավարութեան ներկայացուցիչ Պրն. Վահէ Աջապահեան, որ նոյնպէս աշակերտած է Գ. Ահարոնեանին: Ան ընդգծեց իր ուսուցիչին լրագրական եւ քաղաքական անաչառութիւնն ու հասունութիւնը:

Հանդիսութեան աւարտին օրուան խորհուրդին պատշաճ երկու երգերով ներկայացաւ ՌԱԿ-ի Շրջանային վարչութեան անխոնջ անդամ եւ ձեռնարկին պատրաստութեան մէջ կարեւոր դեր ստանձնած Ընկ. Դաւիթ Սամուէլեան՝ իրեն ընկերակցող ունենալով երաժիշտ Արամ Լեփեճեանը: Դաւիթի երկու երգերը՝ «Հեռացած ընկերներ» եւ «Արագիլ», յուզումի ալիք մը բարձրացուցին հանդիսականներուն մէջ:

Հանդիսութեան փակումը կատարեց վերապատուելի ծոն Սաթուեան եւ ներկաները հրաւիրեց մասնակցելու գոհաբանական աղօթքին:

«Ահա ես Նոր Բան Մը Պիտի Ընեմ»

Շարունակուած էջ 19-էն

Փորձը իր ձախողութիւններով եւ յաջողութիւններովը: Պօղոս Առաքեալ հոն ալ չի մնար: Ան կը միթէ քրիստոնեան, որ «առջեւի եղածներուն դիմէ» (Փիլիպեցիս 3:13): Իսկ ի՞նչ կայ առջեւը, որուն համար արժէ հասնիլ:

Նորն է: Նորը շինելու, կերտելու եւ զարգացնելու համար: Պօղոս Առաքեալ այս նոյն հասկացողութիւնը կը նոյնացնէ մրցանակի: Այն իրականութիւնը, որուն համար ան կը տքնի՝ Քրիստոսի շնորհած նոր կեանքի մրցանակը: Նոր կեանքը, որ իրականացաւ իր չարչարանքով, մահուամբ եւ յարութեամբ:

Քրիստոս իր յարութեամբ շինեց նորը: Այս նորը ան շինեց կրելով ամէն զրկանք, նեղութիւն եւ մահ:

Բայց հոն չի մնաց: Ան պայքարեցաւ եւ աշխատեցաւ, որպէսզի յաղթէ մահուան եւ նորը շինէ: Այս նորը մեր կեանքերուն իմաստ տուող եւ արժեւորող մրցանակն է: Մրցանակ մը, որ արժէ որ դառնայ մեր կեանքի նպատակակէտը:

Ո՞ր ենք, որպէս անհատներ, ընտանիքներ, հաւաքականութիւն եւ հայ ժողովուրդ եւ պետականութիւն այս նոր տեսլականին՝ իմ մա մրցանակին հասնելու գիտակցութեան մէջ:

Հայ ժողովուրդին ներկայ օրերու տուեալներուն մէջ կան բաւական նմանութիւններ հրեայ ժողովուրդին ապրած նեղութիւններուն հետ: Հայը՝ յատկապէս 44-օրեայ արցախեան պատերազմէն ետք, կ'ապրի ճգնաժամը, նեղութիւնը: Ան ապրեցաւ տառապանքի ու ցաւի փորձառութիւնը: Ու տակաւին մահը: Ներկայի օրերը նոյնքան անյա-

տակ եւ բախտորոշ են:

Այս բոլոր իրավիճակներուն մէջէն արժէ կառչիլ եւ հաւատալ Աստուծոյ խոստումին. «Ահա ես նոր բան մը պիտի ընեմ»: Այն նորը, որ Քրիստոս շինեց ինծի, քեզի, եւ իւրաքանչիւր հայուն եւ համայն աշխարհին համար: Աստուած կ'ուզէ, որ հայը անդրադառնայ այս «նոր»ը շինելու գիտակցութեան եւ անոր գործընթացին: Հայը պէտք է անդրադառնայ, թէ անհրաժեշտ է «ետեւի բաները մոռնալ»ը: Բայց ոչ միայն այդ, այլ աշխատի ու տգնի եւ «մրցանակին վազէ»: Մրցանակը, որ կը շինէ ու կը հաստատէ նոր կեանքը:

Այս մրցանակը աժան չի գար եւ դիւրին ալ չէ անոր հասնիլը: Հոն կայ նեղութիւն, տառապանք, չարչարանք, մահ բայց նաեւ պայքար եւ մարտնչելու հոգի եւ տրամադրութիւն: «Ահ ես նոր բան մը պիտի ընեմ»: Նորը ընելու համար պիտի համոզուինք, թէ պէտք է տքնիլ բայց նաեւ մարտնչիլ, որպէսզի մրցանակին հասնինք: Այս մրցանակն է, որ պիտի շինէ մեր անհատական, հաւաքական եւ հայրենի կեանքերը:

Քրիստոս Յարեալ ի մեռելոց: Օրհնեալ է Յարութիւնը Քրոստոսի:

Յարութիւնը «նոր բան մը ընելու» խոստումն է, որ իրականացաւ: Արժէ, որ հայը այս խոստացուած ու իրականացած «նոր բանը» ապրող իրականութեան դարձնէ իր կեանքին համար: Եթէ հայուն կեանքը այսօր դժուար է, բայց կայ Աստուածոյ խոստումը, որ իրականացաւ երբ ան ըսաւ. «Ահա ես նոր բան մը պիտի ընեմ»:

Այս «նոր բան»ն է, որ պիտի ապրեցնէ հայը:



DETERMINED & COMPASSIONATE CRIMINAL DEFENSE

- JUVENILE DEFENSE
- DOMESTIC VIOLENCE
- ASSAULT & BATTERY CHARGES
- DRIVING UNDER THE INFLUENCE (DUI)
- VEHICULAR OFFENSES/HIT AND RUN
- IMMIGRATION - MOTION TO VACATE A PLEA
- ROBBERY AND THEFT OFFENSES
- ASSAULT WITH A DEADLY WEAPON
- CRIMES INVOLVING POLICE OFFICERS
- CRIMINAL THREATS
- WEAPON CHARGES
- DRUG OFFENSES
- SEX CRIMES
- THEFT CRIMES
- GANG CRIMES



ALICE TAVOUKJIAN Attorney At Law

At the law office of ALICE TAVOUKJIAN, we provide zealous representation to achieve the best possible outcome on your behalf.

LAW OFFICES OF
ALICE TAVOUKJIAN, PC
 www.TAVOUKJIANLAW.com
 135 E. Valley Bl, #B, Alhambra, CA 91801
 CALL FOR A FREE CONSULTATION
626.386.8606

Անգլիոյ Գաւաթ. «Չելսին» եւ «Լիվերփուլը» Հասան Գաւաթի Եզրափակիչ

Լոնտոնի «Չելսին» հասաւ Անգլիոյ Գաւաթի մրցաշարքի եզրափակիչին: Լոնտոնի «Ուեսթհեմ» դաշտին վրայ տեղի ունեցած խաղին գերմանացի թոմաս Տուխելի գլխավորած խումբը 2:0 արդիւնքով յաղթեց լոնտոնեան «Քրիսթալ Փելասին»:



Գաւաթի միւս կիսաեզրափակիչին հանդիպեցան ախոյեան «Մանչեսթըր Սիթին» ու «Լիվերփուլը»:

Լոնտոնի «Ուեսթհեմ» դաշտին վրայ 3:2 արդիւնքով յաղթանակ ապահովեց գերմանացի Եուրգեն Կլոպի գլխավորած խումբը:

Աւարտական խաղը պիտի կայանայ Շաբաթ, Մայիս 14-ին:

«Ռեալը» Յաղթեց «Սելիլիայի»

Club	MP	W	D	L	GF	GA	GD	Pts
1 Real Madrid	32	23	6	3	66	28	38	75
2 Barcelona	31	17	9	5	60	32	28	60
3 Sevilla	32	16	12	4	46	25	21	60
4 Atlético Madrid	32	18	6	8	59	39	20	60
5 Real Betis	32	17	6	9	56	37	19	57
6 Real Sociedad	32	15	10	7	32	30	2	55

Սպանիոյ առաջնութեան 32-րդ հանգրուանին առաջատար «Ռեալը» հիւրընկալեց «Սելիլիային» եւ յաղթանակի հասաւ 3:2 արդիւնքով:

Առաջին խաղակէսին «Սելիլիան» յաղթեց 2:0 արդիւնքով, սակայն երկրորդ կիսախաղին «Ռեալ» կարողացաւ երեք կոլ նշանակել:

32 խաղէ յետոյ «Ռեալ» 75 կէսով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը: «Սելիլիան» (32 խաղ) երրորդն է՝ 60 կէս: Երկրորդ տեղը գտնուող «Պարսելոնան» կատարած է 30 հանդիպում եւ նոյնպէս ունի 60 կէս:

Նեյմարի եւ Միսապի Կոլերը Յաղթանակ Ապահովեցին ՊՍՄ-ին

Ֆրանսայի առաջնութեան 32-րդ հանգրուանին ՊՍՄ-ն ընդունեց «Մարսելին»: Արժենթինցի Մաուրիսիո Պոչետինոյի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 2:1 արդիւնքով պարզիւցի յարձակող Նեյմարի եւ ֆրանսացի յարձակող Միսապի կոլերուն շնորհիւ:

ՊՍՄ-ի արժենթինացի յարձակող Լիոնել Մեսսիի երկու կոլերը խաղէն դուրս վիճակի պատճառով չարձանագրուեցան:

ՊՍՄ-ն 74 կէսով առաջատարն է եւ առաջնութեան աւարտէն 6 հանգրուան առաջ ապահոված է տիտղոսը: «Մարսել» ետ է 15 կէսով եւ երկրորդն է:

«Մանչեսթըր Եունայթըտ» Յաղթեց Ռոնալտուի Երեք Կոլերուն Շնորհիւ



Անգլիոյ առաջնութեան 33-րդ հանգրուանին «Մանչեսթըր Եունայթըտը» «Օլդ Թրաֆորտի» իր դաշտին վրայ մրցեցաւ «Նորուիչ Սիթիի» հետ եւ առաւելութեան հասաւ 3:2 արդիւնքով:

Երեք կոլերու հեղինակ դարձաւ 37-ամեայ փորթուկալացի յարձակող Կրիշտիանու Ռոնալտուն:

«Մանչեսթըր Եունայթըտը» (32 խաղ) 54 կէսով բարձրացաւ 5-րդ տեղ եւ 3 կէս ետ է չորրորդ տեղը գտնուող «Թոթէնհեմէն» (32 խաղ): Լոնտոնի «Արսենալը» (31 խաղ) նուազագոյն հաշուով պարտուեցաւ «Սաութհեմփթընին» (32 խաղ) եւ 54 կէսով 6-րդն է:

«Միլան» Յաղթեց «Ճենոային» եւ Դարձեալ Առաջինն է

Իտալիոյ առաջնութեան 33-րդ հանգրուանին «Միլան» ընդունեց «Ճենոային» եւ յաղթեց 2:0 արդիւնքով:

11-րդ վայրկեանին խաղի հաշիւը բացաւ փորթուկալացի յարձակող Ռաֆայէլ Լեաուն: 87-րդ վայրկեանին դաշտի տէրերու առաւելութիւնը կրկնապատկեց պրագիլցի յարձակող Ժուսէպպէ Մեայասը:

«Միլան» 71 կէսով վերադարձաւ առաջին տեղ, սակայն 1 հանդիպում աւելի կատարած է երկրորդ տեղը ընթացող «Ինթերէն», որ ունի 69 կէս:

Մոուրիսիո. Հիմա Մենք Պետք է Տանինք Իտալիոյ Դրօշը Եւրոպայի Մէջ



Իտալական «Ռոմայի» փորթուկալցի գլխավոր մարզիչ Ժոզէ Մուրիսիոն մեկնաբանած է Կոնֆերանցներու Լիկայի կիսաեզրափակիչ հասմիւր: Հոռմէական խումբը քառորդ եզրափակիչի պատասխան խաղին 4:0 արդիւնքով յաղթած էր նորուելիական «Պուտիօ-Գլիմտին»: Առաջին խաղին «Ռոման» պարտուած էր 1:2 արդիւնքով:

«Հիմա մենք պէտք է տանինք իտալիացի դրօշը Եւրոպայի մէջ: Մենք եւրոպական յաղթանակներու պայքարը շարունակող միակ իտալական խումբն ենք:

«Հանդիպման սկզբին հրաշալի խաղացանք: Արդէն առաջին կոլերէն յետոյ հասկցայ, որ խնդիրը լուծուած է», - Մուրիսիոյ խօսքը կը մէջբերէ ՌեՅԱ-ի կայքը:

Կիսաեզրափակիչին «Ռոմայի» մրցակիցը պիտի ըլլայ անգլիական «Լեսթըր Սիթին»:

City Football Group-ը Կ'ուզէ Գնել 11-Րդ Ակումբը

City Football Group-ը մտադիր է ձեռք ձգել իտալական «Փալերմօ» ֆութպոլային ակումբը: Բանակցութիւնները նոր սկսած են: Ամրան հնարաւոր է գործարքի կնքում, կը հաղորդէ ESPN-ը:

2019-ին «Փալերմօն» յայտարարուած էր սնանկացած: Հիմա ակումբը հանդէս կու տայ իտալիոյ երրորդ բաժնին մէջ:

City Football Group-ն Անգլիոյ ախոյեան «Մանչեսթըր Սիթիի», ամերիկեան «Նիւ Եորք Սիթիի», աւստրալական «Մելբուրն Սիթիի», ճափոնական «Շոքոհամայի», Ուրուկուէյի «Մոնթեվիտիօ Սիթիի», սպանական «ժիրոնայի», ֆրանսական «Տրուայի», չինական «Սիչուանի», հնդկական «Մոմայ Սիթիի» եւ պելճիգական «Լոմելի» սեփականատէրն է:

Ընկերութեան 78 տոկոսը կը պատկանի Արաբական Միացեալ Էմիրութիւններու Abu Dhabi United Group-ին, 10 տոկոսն՝ ամերիկեան Silver Lake-ին, 12 տոկոսը՝ չինական China Media Capital-ին եւ CITIC Capital-ին:

Մարատոնայի Մահուան Գործով 8 Բուժաշխատողի Կը Սպառնայ 5-25 Տարուայ Ազատազրկում

Ոստիկանութիւնը աւարտած է նշանաւոր ֆութպոլիստ Տիեկօ Մարատոնայի մահուան գործով հետաքննութիւնը: Ոչ դիտաւորեալ սպանութեան մեղադրանք առաջադրուած է 8 բուժաշխատողի:

Դատարանի առջ կը կանգնին Մարատոնայի բժիշկը, հոգեբոյժը, եւ 6 բուժաշխատող: Անոնց կը սպառնայ 5-25 տարուայ ազատազրկում: Ոստիկանութեան վարկածով՝ բժիշկները Մարատոնայի բուժման գործընթացին թոյլ տուած են յանցաւոր անփութութիւն եւ անուշադրութիւն, որուն հետեւանքով ան մահացած է: Իրաւապահները վստահ են, որ պատշաճ բուժօգնութեան պարագային կարելի կ'ըլլար կանխել կամ յետաձգել Մարատոնայի մահը:

Յիշեցնենք, որ աշխարհի ախոյեանը մահացած էր 2020-ի Նոյեմբերի 25-ին 60 տարեկանին: Մարատոնան Նոյեմբերի 2-ին վիրահատութեան ենթարկուած էր ուղեղի արիւնագեղուծից յետոյ: Ան դուրս ելած էր հիւանդանոցէն Նոյեմբերի 10-ին: Անոր փաստաբանը յայտարարած էր, որ մահէն առաջ Մարատոնան 12 ժամ դուրս գտնուած է բժշկական հսկողութիւնէն, իսկ շտապ օգնութիւնը կանչելէն կէս ժամ յետոյ հասած է:

Արժենթինի ազգային հաւաքականին մէջ Մարատոնան հանդէս եկած էր 1977-1994 թուականներուն՝ դառնալով 1986-ի աշխարհի ախոյեան:

Մարատոնան 2008-2010 թուականներուն գլխավորած էր Արժենթինի հաւաքականը:



Armenian Genocide

COMMEMORATION EVENTS

APRIL 23
10:30 AM

**RELIGIOUS
CEREMONY &
PLACEMENT OF
FLOWERS**

MONTEBELLO
ARMENIAN
GENOCIDE
MONUMENT

APRIL 24

**TELEVISION
& ONLINE
SPECIAL
PROGRAM**

6:00 PM
AMGA
HORIZON TV
US ARMENIA

7:00 PM
AABC
ARTN

BLOOD DRIVE

APRIL 23 9AM-3PM
AGC/AGBU
(W/ HUNTINGTON HOSPITAL)
2495 E. MOUNTAIN ST.
PASADENA, CA 91104



APRIL 30 10:30AM-4:30PM
AGC/GAIDZ YOUTH ORG.
(W/ THE RED CROSS)
1060 N. ALLEN AVE.
PASADENA, CA 91104



 FOR MORE INFO GO TO
[@ArmenianGenocideCommittee](#)

